



Funded by  
the European Union

**EU<sup>4</sup>Environment**  
Green Economy in Eastern Partner Countries

Բնապահպանական  
պատասխանատվության վերաբերյալ  
դրույթները **Հայաստանում**

Վնասների կանխարգելում և գնահատում



Action implemented by:



**Բնապահպանական  
պատասխանատվության վերաբերյալ  
դրույթները Հայաստանում**

**Վնասների կանխարգելում և գնահատում**

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող և ՏՀԶԿ-ի, ՄԱԿ ԵՏՀ-ի, ՄԱՇՄԾ-ի, ՄԱԿ-ի ԱԶԿ-ի և Համաշխարհային բանկի կողմից իրականացվող «Եվրոպական Միությունը հանուն շրջակա միջավայրի ոլորտում գործողությունների» («ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի») ծրագրի շրջանակներում:

Այստեղ արտահայտված տեսակետները պատկանում են միայն հեղինակներին և ոչ մի կերպ չեն կարող համարվել որպես Եվրոպական Միության, նրա անդամների, Արևելյան գործընկերության երկրների կառավարությունների կամ իրականացնող գործընկերների պաշտոնական կարծիքը:

Սույն զեկույցը և դրանում ներառված ցանկացած քարտեզ չեն վնասում որևէ տարածքի կարգավիճակին կամ ինքնիշխանությանը, միջազգային սահմանների սահմանազատմանը և որևէ տարածքի, քաղաքի կամ շրջանի անվանմանը:

Այս զեկույցը պատրաստվել է Եվրոպական Միության ֆինանսական աջակցությամբ:

Թույլատրվում է սույն զեկույցի տեքստն օգտագործել դրա աղբյուրին պատշաճ հղում տալու պայմանով: Այս փաստաթղթի վաճառքն արգելվում է:

Խնդրում ենք մեջբերել այս հրապարակումը որպես՝ *Բնապահպանական պատասխանատվության դրույթները Հայաստանում վնասների կանխարգելում և գնահատում:*

© 2024, ՏՀԶԿ Բոլոր իրավունքները պաշտպանված են: Արտոնվել է Եվրոպական Միությանը՝ որոշակի պայմաններով:

## Երախտի խոսք

Սույն զեկույցի հիմնական հեղինակը Միացյալ Թագավորության Լիդսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ձեռնարկատիրական իրավունքի ամբիոնի դոցենտ դոկտոր Քոլին Մաքին է: ՏՀՉԿ շրջակա միջավայրի վարչության ծրագրի ղեկավար տիկին Օլգա Օլտոնը ղեկավարել է զեկույցի պատրաստումը ՏՀՉԿ շրջակա միջավայրի վարչության ֆինանսների, ներդրումների և համաշխարհային հարաբերությունների բաժնի ղեկավարի պաշտոնակատար պարոն Քշիշտոֆ Միխալակի ընդհանուր հսկողությամբ:

Թիմն իր երախտագիտությունն է հայտնում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության շահագրգիռ կողմերին զեկույցի պատրաստման գործում համագործակցության համար, մասնավորապես՝ շրջակա միջավայրի նախարար՝ պրն Հակոբ Միմիդյանին, փոխնախարար և Հայաստանում «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի ոլորտում գործողությունների» ծրագրի ազգային համակարգող՝ տկն. Գայանե Գաբրիելյանին, Ռազմավարական քաղաքականության վարչության պետ՝ տկն. Լուսինե Ավետիսյանին, Ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ՝ տկն Մերի Հարությունյանին, Ջրային քաղաքականության վարչության պետ՝ տկն Լիլիթ Աբրահամյանին, Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ՝ տկն. Ոսկեհատ Իսախանյանին և «ԻԳործ» ծրագրի փորձագետ՝ պրն Կարեն Խաչատրյանին:

Թիմը շնորհակալություն է հայտնում նաև Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության տրանսպորտի, էներգետիկայի, շրջակա միջավայրի և կլիմայի ոլորտում համագործակցության պատասխանատու՝ տկն  Սոնյա Լոպես Լոպեսին:

Շնորհակալություն ենք հայտնում նաև Հայաստանում «ԵՄ-ն հանուն շրջակա միջավայրի» ծրագրի աշխատանքների ազգային համակարգող՝ պրն Տիգրան Մեկոյանին՝ համակարգման գործում աջակցության համար, տկն Մարիա Դյուբուային՝ հաղորդակցման աջակցության համար և պրն Քեն Այդոգանին, տկն Մարի Լայկրեին, տկն Դեբորա Հոլմս Միշելին և պրն Ջոնաթան Ռայթին՝ իրենց վարչական աջակցության համար:

# Բովանդակություն

Երախտիքի խոսք .....	3
Հապավումներ .....	5
Ամփոփ նկարագիր .....	6
1. Ներածություն .....	9
2. ԵՄ բնապահպանական պատասխանատվության դիրեկտիվի (ԲՊԴ) պահանջները .....	11
2.1. ԲՊԴ-ի հիմնական դրույթները և հասկացությունները .....	11
2.2. Ծրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելում ԲՊԴ-ի շրջանակներում .....	15
2.3. ԲՊԴ-ի շրջանակներում շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում .....	18
3. Հայաստանում բնապահպանական պատասխանատվության մասին օրենսդրության նկարագրությունը .....	27
3.1. Բնապահպանական պատասխանատվության մասին ՀՀ օրենսդրության ընդհանուր ամփոփում .....	27
3.2. Հայաստանի մոտեցումները շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու վերաբերյալ .....	37
3.3. Հայաստանի մոտեցումները շրջակա միջավայրին հասցվող վնասը գնահատելու վերաբերյալ .....	40
4. Առաջարկություններ Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման դրույթների բարելավման վերաբերյալ .....	48
4.1. Ընդհանուր տեղեկություններ .....	48
4.2. Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման դրույթների բարելավում .....	48
4.3. Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման բարելավման վերաբերյալ առաջարկություններ .....	58
4.4. Այլ հիմնական առաջարկություններ՝ բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի օրենսդրությունը ԲՊԴ-ին և «աղտոտողը վնարում է» սկզբունքի համապատասխանեցնելու համար .....	65
5. Եզրակացություն .....	71
Հղումներ .....	73
Հավելված Ա. Բնապահպանական պատասխանատվության մասին ՀՀ օրենսդրության վերլուծություն .....	76
Ծրջակա միջավայրի պահպանության մասին օրենքի շրջանակներում առաջացող «ուղղակի» պատասխանատվություն .....	76
Տարբեր իրավական ակտերի շրջանակներում առաջացող անուղղակի պատասխանատվություն .....	81
Հավելված Բ. Ֆինանսական ապահովության միջոցներ. բնութագրերը, ուժեղ և թույլ կողմերը .....	87

## Հապավումներ

ԱՊԾ	Անտառային պետական ծառայություն
ԲՄՀՎ	Բնական միջավայրի համարժեքության վերլուծություն
ԲՊԴ	Բնապահպանական պատասխանատվության դիրեկտիվ
ԵԱԴ	Եվրոպական աուդիտորական դատարան
ԵԽ	Եվրախորհրդարան
ԵՀ	Եվրոպական հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՄԱԴ	Եվրոպական Միության Արդարադատության դատարան
ԶԾԱՏ	Զեղչված-ծառայություն-ակր-տարի
ԾՈՇԴ	Ծովային ռազմավարության շրջանակային դիրեկտիվ
ԿԳ	Կանոնադրական գործիք
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ դրամ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՄԹ	Միացյալ Թագավորություն
ՄԹԱ	Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումներ
ՇՄՊԳ	Շրջակա միջավայրի պահպանության գործակալություն
Wm	Շրջակա միջավայրի կառավարման օրենք (Wet Milieubeheer) (Նիդերլանդներ)
ՊԳՄ	Պայմանական գնահատման մեթոդ
ՊԼՓ	Պատրաստակամություն ընդունելու գումարը որպես փոխհատուցում
ՊՎԳ	Պատրաստակամություն վճարել գումար
ՋՇԴ	Ջրային ռեսուրսների շրջանակային դիրեկտիվով
ՋՈԿՊՄ	Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին
ՌՀՎ	Ռեսուրսների համարժեքության վերլուծություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

## Անփոփ նկարագիր

Սույն զեկույցը գնահատում է բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի օրենսդրությունը և մեթոդաբանությունը և ներկայացնում առաջարկություններ, թե ինչպես դրանք կարող են կատարելագործվել, որպեսզի ավելի լավ համապատասխանեցվեն ԵՄ-ի բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի (ԲՊԴ) պահանջներին: Այն նաև առաջարկում է դրանում ներառված՝ «աղտոտողը վճարում է» սկզբունքի ներդրման եղանակները, մասնավորապես շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և գնահատման հետ կապված: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԲՊԴ-ն և Հայաստանի բնապահպանական օրենսդրությունը պարունակում են բնապահպանական պատասխանատվության բոլորովին տարբեր հասկացություններ: Առաջինի դեպքում այս արտահայտությունն օգտագործվում է՝ ցույց տալու համապատասխան կարգավորող մարմնի կողմից և *գիտական գնահատմամբ* սահմանված՝ որևէ կողմի իրավական պատասխանատվությունը ֆինանսական ծախսերի համար, որոնք կապված են շրջակա միջավայրին փաստացի պատճառված (կամ սպառնացող) վնասը կանխելու կամ վերացնելու պարտավորության հետ: ՀՀ օրենսդրության համաձայն՝ բնապահպանական պատասխանատվությունն օգտագործվում է ցույց տալու կողմի իրավական պատասխանատվությունը բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման և/կամ դրանց վրա բացասական ազդեցություններ ունենալու համար պետությանը սահմանված *բանաձևով և/կամ սակագներով* (այսինքն՝ անուղղակիորեն) հատուցում վճարելու համար: Տնտեսական հաշվարկները, որոնք հիմնված են բանաձևերի և սակագների կիրառման վրա, ըստ էության, օգտագործվում են որպես օժանդակ միջոց՝ բնական ռեսուրսներին հասցված՝ խախտողի գործունեության արդյունքում փաստացի առաջացած վնասի մակարդակը գիտականորեն որոշելու համար:

ԲՊԴ-ն վերաբերում է կոնկրետ բնական ռեսուրսների, օրինակ՝ պահպանվող տեսակների և կենսամիջավայրերի, ջրային ռեսուրսների և հողերի վնասների կանխարգելմանը և վերացմանը: Թեև կարծիք կա, որ ԲՊԴ-ն օգտագործում է շրջակա միջավայրի վրա վնասի չափագանց նեղ իմաստ, այնուամենայնիվ, ավելի լայն շրջանակներում այն համարվում է որպես նորարարական իրավական մշակում՝ համաձայն ԵՄ բնապահպանական օրենսդրության: Դա պայմանավորված է նրանով, որ ԲՊԴ-ն կենտրոնանում է *պետության* պարտավորության վրա, համաձայն որի պետությունն իր անունից գործող համապատասխան լիազոր մարմնի (այսինքն՝ Դիրեկտիվն իրականացնող օրենք(ներ)ի կիրարկման համար պատասխանատու ներպետական կարգավորող մարմին) միջոցով պահանջում է շահագործողներից ձեռնարկել կանխարգելիչ և վնասի վերացման (վերականգնողական) միջոցառումներ կամ ինքնուրույն միջոցներ ձեռնարկել և պատասխանատու շահագործողից ետ ստանալ ծախսերը: Շրջակա միջավայրին հասցված վնասի (կամ դրա վտանգի) գիտական գնահատումը ԲՊԴ-ի հիմնական դրույթն է: Դրա կողմից կիրառվող համակարգը գործ չունի պետությանը կամ երրորդ անձանց ֆինանսական հատուցում վճարելու կամ տուգանքների կամ այլ քրեական պատժամիջոցի կիրառման միջոցով աղտոտողին պատժելու հետ:

Բնապահպանական ոլորտին վերաբերող Հայաստանի օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն նախատեսում է բնապահպանական պատասխանատվության չորս տեսակ. (i) բնօգտագործման վճար, (ii) վնասի հատուցում (փոխհատուցում), (iii) տուգանքներ, և (iv) կանխարգելիչ և/կամ վերականգնողական միջոցառումների իրականացման հետ կապված ծախսեր: Վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն վերջին (iv) տեսակն է արտացոլում ԲՊԴ-ի սահմանումները:

Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման առումով Հայաստանի բնապահպանական օրենսդրությունից կարելի է առանձնացնել չորս մոտեցում. (i) կարգավորող մարմնի պահանջով կամ առանց դրա կանխարգելիչ միջոցառումների իրականացում, (ii) «Կարմիր գրքերի» օգտագործում, (iii) աղետալի իրավիճակների պարտադիր կանխատեսում, և (iv) խախտումների մասին կարգավորող մարմնին տեղեկացում: Միայն (i) մոտեցումն է արտացոլվում ԲՊԴ-ի ներքո:

Վնասի գնահատման համար կիրառվող մոտեցումը զգալիորեն տարբերվում է ԲՊԳ-ով պահանջվող մոտեցումներից: ՀՀ օրենսդրության համաձայն, բնական ռեսուրսներին պատճառված վնասի մակարդակը հաշվարկելու համար օգտագործվում են անուղղակի միջոցներ: Այսպիսով, վնասի գնահատումը ոչ թե շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատումն է, այլ պետությանը հատուցման ենթակա վնասի գնահատումը: ՀՀ նորմատիվ իրավական ակտերը, բացառությամբ «Ընդերքի մասին» օրենսգրքի, չեն պահանջում բնական այդ ռեսուրսներին պատճառված վնասի փաստացի մակարդակի գիտական գնահատում՝ ըստ ԲՊԳ-ի: «Ընդերքի մասին» օրենսգրքը բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող միակ օրենքն է, որում հիշատակվում է շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատումը: Օրենսգրքը նախատեսում է, որ վթարների դեպքում ընդերքօգտագործողը պարտավոր է անհապաղ համապատասխան կարգավորող մարմնին ներկայացնել շրջակա միջավայրին պատճառված վնասի չափի գնահատումը: Այնուամենայնիվ, չկան մանրամասն տեղեկություններ այն մասին, թե կոնկրետ ինչպես պետք է իրականացվի այս գնահատումը և գիտական որ չափանիշներին պետք է հղում արվի, ինչը վկայում է վնասի գնահատման ավելի գիտական ձևի պարտադրման ներկայիս պրակտիկայի էական բացերի մասին:

ՀՀ հարկային օրենսգրքը գլխավոր դեր է խաղում բնապահպանական օրենսդրության ենթադրյալ խախտման հետևանքով պատճառված վնասի մակարդակի գնահատման հարցում: Գոյություն ունեն նաև պատասխանատվությանն անուղղակիորեն վերաբերող մի շարք օրենքներ, որոնք սահմանում են բանաձևեր և/կամ սակագներ՝ տնտեսական գործունեության հետևանքով բնական ռեսուրսներին, մասնավորապես բուսական և կենդանական աշխարհին, ջրային ռեսուրսներին, մթնոլորտին և հողին պատճառված վնասի հատուցման չափը հաշվարկելու համար: Թեև պատասխանատվությանն անուղղակիորեն վերաբերող այս օրենքների բովանդակությունը տարբեր է, շատ դեպքերում միայն արտանետումների սահմանաչափերի գերազանցման մակարդակի մասին իմացությունը բավարար է վնասի չափը պարզելու համար (այսինքն՝ պետությանը վճարվելիք փոխհատուցումը): Պատասխանատվությանն անուղղակիորեն վերաբերող որոշ օրենքներ, մասնավորապես «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը և «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշումը, վնասի հաշվարկման նպատակով, վնասի գնահատման մեջ ներառում են պատճառված վնասի վերացման (այսինքն՝ բնական ռեսուրսները իրենց սկզբնական վիճակին վերադարձնելու) կանխատեսվող ծախսերը, ինչը լավ գործելակերպ է:

Գնահատման արդյունքներից ելնելով ներկայացվում է տասը առաջարկություն՝ Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգերը կատարելագործելու նպատակով, որպեսզի դրանք ավելի լավ համապատասխանեցվեն ԲՊԳ-ի պահանջներին, և ներդրվի «ադտոտողը վճարում է» սկզբունքը:

*Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման միջոցառումների բարելավում*

**Առաջարկություն 1.** Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգում հստակ և ընդգծված կերպով ներդնել «ադտոտողը վճարում է» սկզբունքը:

**Առաջարկություն 2.** Ապահովել «ադտոտողը վճարում է» սկզբունքի առավել ամբողջական իրականացումը՝ երաշխավորելով, որ բնօգտագործողները պատասխանատվություն կրեն բնական ռեսուրսների ողջ սպեկտրին հասցված վնասը կանխելու և վերացնելու համար՝ շրջակա միջավայրին հասցված վնասի հստակ և օրենքով հիմնավորված սահմանման միջոցով:



**Առաջարկություն 3.** Ներառել Եվրոպական միության արդարադատության դատարանի դատական պրակտիկայով սահմանված՝ ցրված աղտոտմանն առնչվող պատճառահետևանքային կապի հերքելի կանխավարկածը:

**Առաջարկություն 4.** Ներդնել բնօգտագործողների համար իրավական պարտավորություն՝ ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ՝ իրենց հաշվին վնասը կամ օրենքի խախտումները կանխելու համար:

**Առաջարկություն 5.** ՀՀ օրենսդրության մեջ ամրագրել ՀԿ-ների և այլ շահագրգիռ կողմերի հստակ իրավունքը՝ դիմելու բնապահպանական ոլորտի համապատասխան կարգավորող մարմնին՝ շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու համար միջոցներ ձեռնարկելու խնդրանքով:

*Շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման բարելավում*

**Առաջարկություն 6.** Կիրառել շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման գիտական մոտեցում և հրապարակել ուղեցույց փաստաթուղթ, որը տրամադրում է տեխնիկական մանրամասներ ձեռնարկվող գնահատումների վերաբերյալ:

**Առաջարկություն 7.** Պահանջել բնօգտագործողներից կատարել առաջնային, լրացուցիչ և/կամ փոխհատուցման վերականգնողական աշխատանքներ՝ կախված հանգամանքներից, և պահանջել կարգավորող մարմնից համարժեքության վերլուծության իրականացման միջոցով պարզել (i) վնասի հետևանքով ժամանակի ընթացքում կորցրած բնական ռեսուրսների և ծառայությունների, և (ii) այդ կորուստը փոխհատուցելու համար անհրաժեշտ լրացուցիչ և փոխհատուցման միջոցներ:

*Այլ հիմնական առաջարկություններ՝ բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի օրենսդրությունը ԲՊԴ-ին և «աղտոտողը վնասում է» սկզբունքին համապատասխանեցնելու համար*

**Առաջարկություն 8.** Ընդունել առանձին օրենք, որն ուղղակիորեն փոխադրում է ԲՊԴ-ի պահանջները:

**Առաջարկություն 9.** Անհրաժեշտ է ապահովել առավել հստակ և բացահայտ կապ պատասխանատվությանն ուղղակիորեն և անուղղակիորեն վերաբերող ՀՀ օրենքների միջև, որը թույլ կտա պարզել, թե վերջիններից որն է կիրառելի այս դեպքում:

**Առաջարկություն 10.** Պետք է ներդրվի ֆինանսական երաշխիքի (ապահովության) պարտադիր ընթացակարգ՝ վերացնելու այն ռիսկը, որ սնանկացած կամ ֆինանսապես թուլացած բնօգտագործողը, որը վնաս է հասցրել շրջակա միջավայրին կամ առկա է դրա անմիջական վտանգը, ի վիճակի չէ կրել իր բնապահպանական պատասխանատվությունը:

# 1. Ներածություն

«Բնապահպանական պատասխանատվություն» տերմինը սովորաբար օգտագործվում է ՏՀԶԿ անդամ երկրներում՝ ցույց տալու որևէ կողմի իրավական պատասխանատվությունը իր բնապահպանական պարտավորությունների հետ կապված ծախսերի համար: Նման ծախսերի երկու լայն կատեգորիա կա: Առաջին, այն ծախսերը, որոնք կապված են թույլտվությամբ, լիցենզիայով կամ այլ կարգավորող թույլտվությամբ նախատեսված պարտավորությունների հետ (օրինակ՝ նախագծման թույլտվություն): Դրանք կարող են լինել լայն և բազմազան և կարող են բխել նախագծի տեղամասի կամ օբյեկտի, օրինակ՝ աղբավայրի կամ հանքի փակումից հետո հողատարածքները վերականգնելու պարտավորությունից: Դրանք կարող են կապված լինել նաև փակումից հետո օբյեկտի պահպանման և հետագա խնամքի հետ, ներառյալ դրա շրջակա միջավայրի ամբողջականությունը վերահսկելու անհրաժեշտությունը: Երկրորդ, այն ծախսերը, որոնք կապված են շրջակա միջավայրին հասցված վնասի (կամ դրա վտանգի) հետ, որի համար նրանք գործող իրավական դաշտի համաձայն համարվում են օրենքով պատասխանատու: Սույն գեկույցը վերաբերում է բացառապես ծախսերի վերջին կատեգորիային<sup>1</sup>:

«Աղտոտողը վճարում է» սկզբունքը, որի համաձայն՝ աղտոտման համար պատասխանատու անձը (անձինք) պետք է վճարի (վճարեն) դրա հետ կապված ծախսերը, լինի դա այդ աղտոտումը կրճատելու, կանխելու կամ վերացնելու միջոցով, հաստատապես ամրագրված է շատ երկրների բնապահպանական պատասխանատվության մասին օրենքներում: Սա, օրինակ, դիտվում է որպես Եվրամիության բնապահպանական քաղաքականության հիմնասյուներից մեկը (դե Սաելիեր, 2014թ<sup>2</sup>): Այս առումով հատկանշական է, որ Եվրոպական միության օրենսդրության, ԵՄ-ի բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի (այսուհետ՝ ԲԴԴ) համաձայն՝ բնապահպանական պատասխանատվության հիմնական շրջանակը հիմնված է այս սկզբունքի վրա (Հոդված 1): Այս նորարարական վարչական օրենքը նպատակ ունի ստիպել նրանց, ովքեր վնաս են պատճառել շրջակա միջավայրին կամ անմիջական սպառնալիք են առաջացրել վերջինիս համար, վճարել դրա կանխարգելման կամ, եթե դա այլևս հնարավոր չէ, այն վերացնելու համար:

Սկզբունքի այս առանձնահատուկ ձևակերպման քաղաքականությունն ընդունում է, որ եթե այդ բնապահպանական ծախսերը չեն բաշխվում աղտոտողների միջև պատասխանատվության կարգի շրջանակներում, սպա նրանց կստիպեն դրանք ուղղել այլ նպատակներով (այսինքն՝ փոխանցել դրանք շրջակա միջավայրին և/կամ հասարակությանը): Նրանք, ովքեր ցույց չեն տալիս (կամ ներառում) իրենց գործունեության բոլոր բնապահպանական ծախսերը իրենց արտադրանքի/ծառայության գնի մեջ, մրցակցային առավելություն ունեն նրանց նկատմամբ, ովքեր դա անում են<sup>3</sup> առաջինները կարող են առաջարկել ավելի էժան սպրանք կամ ծառայություն, քան երկրորդները: Սկզբունքը և իրենց պատճառած վնասի ծախսերի ներառման (internalization) տեսությունը, որոնց վրա այն կառուցված է, ուղղված է շուկայում նշված պայմանի չկատարման հարցի լուծմանը: Այս սկզբունքի արդյունավետ իրականացումը, այնուամենայնիվ, պահանջում է շրջակա միջավայրին հասցված վնասի մանրակրկիտ գնահատում (այսինքն՝ գիտականորեն պարզել ազդակիր բնական ռեսուրս(ներ)ին հասցված վնասի մակարդակը, և արդյոք դա համապատասխանում է պատասխանատվության իրավական շեմին, օրինակ՝ զգալի): Նման գնահատման բացակայության դեպքում պատճառված վնասի իրական չափը չի կարող ամբողջությամբ արտացոլվել բնապահպանական պատասխանատվության որևէ մակարդակով:

<sup>1</sup> Հատկանշական է, որ որոշակի գործունեություն իրականացնող շահագործողները կարող են ենթարկվել ծախսերի երկու կատեգորիաներին: Օրինակ՝ հանքարդյունաբերական ընկերությունը, հնարավոր է, ոչ միայն պարտավոր կլինի վերականգնել հողատարածքը հանքի փակումից հետո, այլև պատասխանատվություն կկրի շրջակա միջավայրի հասցված վնասի համար, եթե իր գործունեության հետևանքով, օրինակ, աղտոտվեն ստորերկրյա ջրերը: Այնուամենայնիվ, այս երկու կատեգորիաները իրենց բնույթով տարբեր են և պետք է որպես այդպիսին դիտարկվեն քաղաքականություն մշակողների, կարգավորող մարմինների, շահագործողների և գիտնականների կողմից:

Սույն զեկուցի նպատակն է գնահատել բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի օրենսդրությունը և մեթոդաբանությունները և ներկայացնել առաջարկություններ, թե ինչպես դրանք կարող են կատարելագործվել, որպեսզի ավելի լավ համապատասխանեցվեն ԲՊԴ-ի պահանջներին և ներդրվի «ադտոտողը վճարում է» սկզբունքը, մասնավորապես շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման և գնահատման առումով:

Չեկույցը կառուցված է հետևյալ կերպ. 2-րդ բաժնում սահմանվում են ԲՊԴ-ի հիմնական պահանջները և կրնդգծվեն դրա հիմնական դրույթներն ու հասկացությունները: Այնուհետև մանրամասն ներկայացվում է շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման համար ոլորտում ԲՊԴ-ի մոտեցումը: 3-րդ բաժնում սահմանվում են բնապահպանական պատասխանատվության նկատմամբ Հայաստանի մոտեցումը և գործող դրույթները, այդ թվում՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման վերաբերյալ: 4-րդ բաժնում ներկայացվում են Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման դրույթների բարելավմանն ուղղված առաջարկություններ: Ուսումնասիրվում են առանձին երկրներում, այդ թվում՝ Բելգիայում, Գերմանիայում, Նիդերլանդներում, Վրաստանում և Միացյալ Թագավորությունում կիրառվող մոտեցումների օրինակներ: Սրանք այն երկրներն են, որոնք առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համար: Բնապահպանական պատասխանատվությանը վերաբերող Հայաստանի օրենսդրությունը ԲՊԴ-ին և «ադտոտողը վճարում է» սկզբունքին համապատասխանեցնելու համար նախատեսված այլ հիմնական առաջարկություններ նույնպես սահմանվում են: 5-րդ բաժնում արվում են եզրակացություններ:

## 2. ԵՄ բնապահպանական պատասխանատվության դիրեկտիվի (ԲՊԴ) պահանջները

### 2.1. ԲՊԴ-ի հիմնական դրույթները և հասկացությունները

#### 2.1.1. Ընդհանուր տեղեկություններ

ԲՊԴ-ն ուղղված է *կոնկրետ* բնական ռեսուրսների՝ (i) պահպանվող տեսակների և կենսամիջավայրերի, (ii) ջրային ռեսուրսների, և (iii) հողերի վնասների կանխարգելմանը և վերացմանը: Այս կանոնակարգը կենտրոնանում է պետության պարտավորության վրա, համաձայն որի պետությունն իր անունից գործող համապատասխան լիազոր մարմնի (այսինքն՝ Դիրեկտիվն իրականացնող օրենք(ներ)ի կիրարկման համար պատասխանատու ներպետական կարգավորող մարմին) միջոցով պահանջում է շահագործողներից ձեռնարկել կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումներ կամ ինքնուրույն միջոցներ ձեռնարկել և պատասխանատու շահագործողից ետ ստանալ ծախսերը: Այս միջոցառումների իրականացման հետ կապված ծախսերի իրավական պատասխանատվությունը շահագործողին (այսինքն՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, ով իրականացնում կամ վերահսկում է տվյալ գործունեությունը, որից բխում է վնասը կամ դրա անմիջական վտանգը) ուղղելը այս կանոնակարգի հիմնական դրույթն է:

ԲՊԴ-ի ազդեցության ոլորտը սահմանազատվում է երեք հիմնական դրույթներով: Առաջին, այն մասնավոր կողմերին իրավունք չի տալիս հատուցել՝ դրամական կամ այլ ձևով, շրջակա միջավայրին հասցված վնասը կամ նման վնասի անմիջական վտանգը (հոդված 3(3)): Սա վարչական, այլ ոչ թե քաղաքացիական պատասխանատվության կանոնակարգ է: Ըստ էության, այն իրավասու մարմիններին լիազորում է գործել որպես բնական ռեսուրսների «լիազորված կառավարիչ» (Brans, 2006թ, էջ 96): Միայն նրանք են իրավասու պատասխանատու շահագործողից պահանջել իրականացնել անհրաժեշտ կանխարգելիչ կամ վերականգնողական աշխատանքներ:

Երկրորդ, այն չի վերաբերում ավանդական վնասին (այսինքն՝ մարմնական վնասվածքների, մասնավոր սեփականության կամ որևէ տնտեսական վնասի դեպքերին) (ԲՊԴ-ի 14-րդ կետ): Մինչդեռ, Եվրոպական հանձնաժողովը (2000թ, կետ 4.2.1) գտել է, որ, որպեսզի շրջակա միջավայրին հասցված վնասի սահմանումը «համահունչ» լինի, անհրաժեշտ է փոխհատուցել: Եվրահանձնաժողովը կարծում էր, որ այդ պահանջը չկատարելը կարող է անարդարացիության պատճառ դառնալ, երբ, օրինակ, բնապահպանական միջադեպի հետևանքով առողջությանը պատճառված վնասի համար հատուցում չի տրամադրվի (Եվրոպական հանձնաժողով, 2000թ): Այնուամենայնիվ, կարևոր է հիշել, որ քաղաքացիական հայցեր, ինչպիսիք են անփութության և/կամ անհանգստությանը վերաբերող հայցերը դեռևս կարող են ներկայացվել ազգային օրենսդրությամբ նման վնասների համար, բայց դա տեղի կունենա ԲՊԴ-ի շրջանակներից դուրս և կարող է չներառել ԲՊԴ-ի հետ կապված պատասխանատվությունը:

Երրորդ, այն չի կիրառվում արտանետումների, որևէ իրադարձության կամ միջադեպի հետևանքով պատճառված վնասի նկատմամբ, որը տեղի է ունեցել մինչև 2007 թվականի ապրիլի 30-ը կամ 2007 թվականի ապրիլի 30-ից հետո, երբ գործունեությունը իրականացվել և ավարտվել է մինչ այդ (հոդված 17):

### 2.1.2. «Շրջակա միջավայրին հասցված վնաս» տերմինի իմաստը

«Շրջակա միջավայրին հասցված վնասի» սահմանումը կարևոր տեղ է զբաղեցնում ԲՊԴ-ի կողմից կիրառվող պատասխանատվության շրջանակում և այդ վնասի կանխարգելման ու գնահատման նրա մոտեցման մեջ: ԲՊԴ-ի 2(1) հոդվածը նշում է, որ «շրջակա միջավայրին հասցված վնասը» վերաբերում է

(ա) պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին (ինչպես սահմանված է 2(4) հոդվածով)

(բ) ջրային ռեսուրսներին, և

(գ) հողերին

Բաժին 2.3-ը ցույց է տալիս, որ այս բնական ռեսուրսներից յուրաքանչյուրին պատճառված վնասի համար պատասխանատվություն սահմանելու համար պետք է պահպանվեն որոշակի հիմնական հասկացություններ (օրինակ՝ հողին հասցված վնասի պատճառով մարդու առողջության վրա բացասական ազդեցության ռիսկը), այդ զգալիության շեմի գերազանցումից բացի (օրինակ՝ «զգալի բացասական ազդեցություն» ջրային ռեսուրսներին հասցված վնասի դեպքում): Եթե դա այդպես չէ, ապա ԲՊԴ-ն կիրառելի չէ :

Ջրային ռեսուրսներին հասցված վնասը վերաբերում է համապատասխան ջրերի էկոլոգիական, քիմիական կամ քանակական կարգավիճակի կամ էկոլոգիական ներուժի (այսինքն՝ խիստ ձևափոխված կամ արհեստական ջրային մարմնի կարգավիճակ) կամ համապատասխան ծովաջրերի էկոլոգիական կարգավիճակի վրա (հոդված 2(1)(b)):

Հողերին հասցված վնասը վերաբերում է հողերի աղտոտմանը, որը մարդու առողջության վրա բացասական ազդեցության զգալի վտանգ է պարունակում՝ կապված հողերի մեջ/վրա/տակ նյութերի, պատրաստուկների (այսինքն՝ երկու կամ ավելի նյութերից բաղկացած խառնուրդների կամ լուծույթների) կամ օրգանիզմների/միկրոօրգանիզմների կիրառման հետ. մարդու առողջությանը հասցված վնասը պարտադիր չէ ապացուցել: Սա նշանակում է, որ հողին հասցված վնասը, որն աղտոտման (օրինակ՝ էրոզիա) հետ կապված չէ, Դիրեկտիվի շրջանակից դուրս է (հոդված 2(1)(a)):

Պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին հասցվող վնասը վերաբերում է այն վնասին, որը զգալի բացասական ազդեցություն է ունենում պահպանվող տեսակների կամ կենսամիջավայրերի բարենպաստ պահպանական կարգավիճակի հասնելու կամ պահպանման վրա: Հոդված 2(4)-ը սահմանում է, թե երբ է տեսակների կամ բնական կենսամիջավայրի պահպանության կարգավիճակը ճանաչվում բարենպաստ:

Ինչպես ավելի մանրամասն նկարագրված է ստորև, վնասը սահմանվում է որպես բնական ռեսուրսի *չսիփելի* (այսինքն՝ հնարավոր է քանակապես որոշել կամ գնահատել) բացասական փոփոխություն կամ բնական ռեսուրսի ծառայության (օրինակ՝ սննդի, ապաստանի ապահովում կամ բնադրման համար պայմանների ստեղծում) *չսիփելի* վատթարացում (հոդված 2(2)):

Օդի որակի վատթարացումը ներկայումս չի ներառվում ԲՊԴ-ում, և ըստ դրա՝ օդի աղտոտվածությունն, ինքնին, «շրջակա միջավայրին հասցված վնաս» չի հանդիսանում:

### 2.1.3. «Աղտոտողը վճարում է» սկզբունք

ԲՊԴ-ի 1-ին հոդվածը սահմանում է Դիրեկտիվի ամբողջական բնույթը՝ նշելով, որ այն հիմնված է «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա: Ինչպես ձևակերպված է ԲՊԴ-ում, այս

սկզբունքը նպատակ չունի տուգանքի կամ քրեական պատժամիջոցի եղանակով պատժել շահագործողին: Այն պահանջում է, որ շրջակա միջավայրին վնաս պատճառող կամ այդպիսի վնասի անմիջական վտանգ ստեղծող շահագործողը, սկզբունքորեն, կրի անհրաժեշտ կանխարգելիչ կամ վերականգնողական միջոցառումների ծախսերը (Դիրեկտիվի 18-րդ կետ): Ծահագործողներից պահանջվում է նաև կրել համապատասխան վարչական ծախսերը, օրինակ՝ շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման համար (ԲՊԴ-ի 18-րդ կետ):

Օրենսդրության մեջ «աղտոտողը վճարում է» սկզբունքի ձևակերպումները սովորաբար հիմնված են եղել պատճառված վնասի հատուցման ծախսերի ներառման (internalization) տնտեսական գաղափարի վրա: Սա պահանջում է, որ աղտոտողը «կրի» այն ծախսերը, որոնք իր գործունեությունը պարտադրում է ուրիշներին իր ապրանքների կամ ծառայությունների «գները սահմանելիս» (Օգուս, 2004, էջ 19): Երբ նրանցից չի պահանջվում կրել այդ ծախսերը, նրանք կարող են ոչ միայն անտեսել դրանք, երբ որոշում են, թե որքան արտադրել և ինչ գնով վաճառել, ապա գնում չներառված ծախսերը, այսինքն՝ բացասական արտաքին հետևանքների վերացման ծախսերը փոխանցվում են շրջակա միջավայրի վերականգնմանը, տեղական համայնքներին և ավելի լայն հասարակությանը՝ կախված հանգամանքներից (Օգուս, 2004թ): Սա շուկայի ձախողման ձևերից մեկն է: Ծահագործողի վրա բնապահպանական ծախսերը, օրինակ՝ ԲՊԴ-ի համաձայն պահանջվող կանխարգելիչ և/կամ վերականգնողական միջոցառումների հետ նպատակով իրականացված ծախսերը բաշխելու շնորհիվ այս սկզբունքը հեշտացնում է շահագործողի կողմից ինքնարժեքում այդ ծախսերի ներառումը: Այս սկզբունքը նաև զսպող գործառույթ ունի: ԲՊԴ-ի 2-րդ կետի համաձայն՝ Դիրեկտիվի հիմնարար սկզբունքն այն է, որ շահագործողը, որի գործունեության հետևանքով շրջակա միջավայրին վնաս է հասցվել կամ այդպիսի վնասի անմիջական վտանգ է առաջացել, պետք է ֆինանսական պատասխանատվություն կրի, որը կստիպի շահագործողներին միջոցներ ձեռնարկել և մեթոդներ մշակել՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի ռիսկերը նվազագույնի հասցնելու համար, որպեսզի նվազեցվի նրանց ֆինանսական պարտավորությունը: Գիտակցելով, որ պատասխանատվություն են կրելու վնասի կանխարգելման կամ վերացման ծախսերի համար՝ շահագործողներն ունեն տնտեսական *դրդապատճառ*, թեև ոչ իրավական պարտավորություն, առավել զգուշորեն ձեռնարկելու իրենց գործունեությունը:

ԲՊԴ-ն ունի որոշ սահմանափակումներ, որոնք խնդրահարույց են աղտոտողը վճարում է սկզբունքի և դրանից բխող ծախսերի՝ ինքնարժեքում ներառման տեսության տեսանկյունից: Նախ, Դիրեկտիվի համաձայն՝ շրջակա միջավայր տերմինի մեկնաբանությունը սահմանափակվում է պահպանվող կենսամիջավայրերով և տեսակներով, հողով և ջրային ռեսուրսներով և որոշ չափով մարդկանցով (որտեղ նրանց առողջության համար զգալի վտանգ կա հողին հասցված վնասի հետևանքով): Այսպիսով, այն ցուցադրում է «վնասի» և շրջակա միջավայրի «նեղ նույնականացումը» (Լի, 2009թ, էջ 267): Նաև, այն չի վերաբերում ավանդական վնասին (օրինակ՝ անձնական գույքին հասցված վնասը, մարմնական վնասվածքը և/կամ տնտեսական կորուստը), որը մաքուր էկոլոգիական վնաս պատճառող վթարների ընդհանուր կողմնակի ազդեցությունն է:

ԲՊԴ-ի շրջանակներում վնասի նեղ մեկնաբանությունը հետագայում հաստատվում է այն փաստով, որ աղտոտողը պետք է վճարվի միայն հողին հասցված վնասի (կամ դրա անմիջական վտանգի) համար, երբ *մարդու առողջության* համար զգալի վտանգ է ստեղծվում: Այսպիսով, աղտոտողի պատասխանատվության սահմանման կապը հողին և մարդկանց, այլ ոչ թե հենց շրջակա միջավայրին հասցված (օրինակ՝ բուսական կամ կենդանական աշխարհի առողջության) վնասների (հնարավոր) միջև է, արդյունք, որն ավելի հեշտ է բացատրել քաղաքական փոխզիջման միջոցով, որն անհրաժեշտ էր Դիրեկտիվի ուժի մեջ մտնելն ապահովելու համար: Մարդու գործունեությունը, հավանաբար, պետք է իրականացվի վնասի վայրի անմիջական հարևանությամբ, որպեսզի իրավասու մարմինը պահանջի միջոցներ ձեռնարկել հողին վնաս հասցնելու կամ դրա անմիջական վտանգի կապակցությամբ: Սա նշանակում է, որ հնարավոր չէ կանխարգելիչ միջոցառումների համար պատասխանատվություն սահմանել խոնավ տարածքների և անտառների այն տարածքներում, որտեղ մարդու գործունեություն չի իրականացվում, ինչը մտահոգիչ բաց է: Ուիլնթերը և այլք, (2008թ, էջ 173) «տարակուսելի» են համարում այն փաստը, որ հողին հասցված վնասի հետ

կապված միջոցառումներ, որը կապված չէ աղտոտման հետ, ինչպիսին է հողի էրոզիան, ԲՊԴ-ն չի նախատեսում պահպանվող տեսակները, կենսամիջավայրերը և ջրային ռեսուրսները պահպանվում են ԲՊԴ-ի համաձայն նույնիսկ այն դեպքերում, երբ դրանց վնասումը վտանգ չի ներկայացնում մարդու առողջության համար: Հողը, անշուշտ, շրջակա միջավայրի ոչ պակաս կարևոր բաղադրիչ է, քան կենդանատեսակները կամ բուսատեսակները, և նույնիսկ կարող է դիտվել որպես ավելի կարևոր էկոլոգիական ռեսուրս (Ուիլնթեր և այլք, 2008թ):

Երկրորդ, այն չի կիրառվում այն վնասի նկատմամբ, որը չի հասնում անհրաժեշտ լրջության աստիճանին (այսինքն՝ «զգալի») կամ կապված չէ համապատասխան հիմնական հասկացության (հասկացությունների) հետ, որի մասին առավել մանրամասն կիսուսվի ստորև: Նման հանգամանքներում, ըստ ԲՊԴ-ի, համարվում է, որ շրջակա միջավայրին վնաս չի հասցվել: Երկրի ներքին օրենսդրությունը, այնուամենայնիվ, կարող է ապահովել այդ բացը լրացնելու գործառույթ, որտեղ կան համապատասխան և կիրառելի օրենքներ որևէ միջադեպի հետ կապված, ինչը միշտ չէ, որ տեղին է: Այնուամենայնիվ, պարզվել է, որ «զգալի» տերմինի նշանակության հետ կապված անորոշությունը ԲՊԴ-ի արդյունավետ և հավասարազոր կիրառման հիմնական խոչընդոտներից մեկն է (Եվրախորհրդարան, 2017թ): Պատասխանատվության շեմերը նույնպես չափազանց բարձր են համարվում: Օրինակ՝ Եվրոպական հանձնաժողովը (2016թ.) պարզել է, որ պահպանվող տեսակին կամ բնական միջավայրին հասցված վնասի շեմը չի գերազանցվի վնասի շատ դեպքերում: Այն փորձում էր հստակեցնել այս խնդիրների հետ կապված որոշ բարդություններ՝ նպատակ ունենալով ընդլայնել ԲՊԴ-ի գործառնական օգտագործումը: ԵՀ-ն 2021 թվականին հրապարակել է մանրամասն ուղեցույցներ՝ հեշտացնելու «շրջակա միջավայրին հասցվող վնաս» տերմինի ընդհանուր ընկալումը, ի թիվս ստորև 2.3 բաժնում ուսումնասիրվածների: ԲՊԴ-ն պահանջում է, որ Եվրոպական հանձնաժողովը գնահատում իրականացնի մինչև 2023 թվականի ապրիլի 30-ը (և դրանից հետո յուրաքանչյուր հինգ տարին մեկ), որը պետք է մանրամասնի, թե արդյոք կարողացել է դա պարզել: Այս փաստաթուղթը կազմելու օրվա դրությամբ գնահատումը դեռևս չի հրապարակվել Եվրոպական հանձնաժողովի կողմից:

Երրորդ, Դիրեկտիվի 14-րդ հոդվածը պարզապես պահանջում է անդամ պետություններից միջոցներ ձեռնարկել ֆինանսական երաշխիքի գործիքների և շուկաների զարգացումը խթանելու համար, որպեսզի շահագործողները կարողանան օգտվել ֆինանսական երաշխիքներից՝ Դիրեկտիվի համաձայն իրենց պարտավորությունները ծածկելու համար, ներառյալ անվճարունակության դեպքում: Այսպիսով, շահագործողների համար չկա պահանջ ներկայացնել ֆինանսական երաշխիք (օրինակ՝ ապահովագրություն)՝ իրենց հնարավոր պարտավորությունները ծածկելու համար, բացթողում, որը հատկապես վիճելի էր՝ հաշվի առնելով, որ կանոնակարգը հիմնված է «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա (Մյուլլերատ, 2005թ): Պարտադիր կանոնակարգից վերջնական հրաժարման պատճառ են դարձել հիմնականում արդյունաբերության, ապահովագրական ոլորտների և որոշ անդամ պետություններ, որոնք ցանկանում էին խուսափել տնտեսական ճգնաժամի ժամանակ արդյունաբերության վրա նոր բեռ դնելուց (Բոքեն, 2006թ.): Մտահոգությունն այն էր, որ պարտադիր կանոնակարգի բացակայությունը նշանակում է, որ հարկ վճարողները կարող են ի վերջո վճարել անհրաժեշտ կանխարգելիչ կամ վերականգնողական միջոցառումների համար, որոնք պետք է իրականացվեն, եթե պատասխանատու շահագործողը դառնա անվճարունակ կամ այլ կերպ չկարողանա կրել իր պատասխանատվությունը: Թեև անդամ պետությունների մեծամասնությունը պարտադիր ֆինանսական երաշխիք չի նախատեսում իրենց ազգային օրենսդրության մեջ՝ փոխադրելով ԲՊԴ-ն, մի քանիսը դա անում են (Եվրախորհրդարան, 2021): Եվրոպական խորհրդարանը պնդում է, որ «այնտեղ, որտեղ այդ գործիքները ներդրվել են, կարծես թե ապացուցել են իրենց արժեքը և ցույց են տվել պարտադիր ֆինանսական երաշխիքի համակարգի ներդրումը գնահատելու անհրաժեշտությունը» (ԵԽ, 2021թ, կետ M): Եվրախորհրդարանը ակնհայտորեն տրամադրված է վերագնահատել ֆինանսական երաշխիքի հարցը: Թեև Եվրոպական հանձնաժողովի պատվերով իրականացված հետազոտությունը ցույց է տվել, որ ՊԲԴ-ն չի կարող արդյունավետ կերպով կիրառվել, քանի դեռ չկա ապահովագրություն դրա շրջանակներում առաջացող պարտավորությունների համար

(Եվրահանձնաժողով, 2020թ), Եվրոպական հանձնաժողովից որևէ ակնարկ չկա, որ այն շուտով կներդնի պարտադիր կանոնակարգ:

#### 2.1.4. Պատասխանատվության ռեժիմները

Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվը նախատեսում է պատասխանատվության երկու ռեժիմ, որոնցից յուրաքանչյուրը հավասարապես վերաբերում է շահագործողների՝ վնասի կանխարգելման հետ կապված ծախսերի համար պատասխանատվություն կրելու հեռանկարին:

1. Իսիտ պատասխանատվություն (այսինքն՝ պատասխանատվություն, որը կախված չէ խախտման հաստատումից) պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին, ջրային ռեսուրսներին և հողին հասցված էկոլոգիական վնասի համար, որը պատճառվել է Դիրեկտիվի Հավելված III-ում նշված մասնագիտական գործունեության տեսակներից որևէ մեկի հետևանքով (օրինակ՝ թափոնների կառավարում, աղբավայրեր, ներքին մակերևութային ջրեր, մակերևութային կամ ստորերկրյա ջրեր աղտոտող նյութերի բացթողում կամ ներթափանցում, ջրառ և ջրերի կուտակում, ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով, ներքին ջրային ուղիներով, ծովով կամ օդով վտանգավոր բեռների կամ աղտոտիչների տեղափոխում, գենետիկորեն փոփոխված օրգանիզմներ և քիմիական արտադրության հետ կապված գործողություններ) և այդ գործողություններից բխող այդպիսի վնասի ցանկացած անմիջական վտանգի (հոդված 3(1)(ա)) համար:
2. Իսխիտման հետևանքով առաջացած պատասխանատվություն (այսինքն՝ պատասխանատվություն անփութության համար) պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին Հավելված III-ում չնշված որևէ մասնագիտական գործունեության հետևանքով հասցված վնասի և նման վնասի ցանկացած *անմիջական վտանգի* համար, որը հասցվել է շահագործողի մեղքով կամ անփութության հետևանքով (հոդված 3(1)(b)): Անփութության հետևանքով առաջացած պատասխանատվությունը չի տարածվում հողին կամ ջրային ռեսուրսներին հասցված վնասի վրա:

## 2.2. Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելում ԲԳԴ-ի շրջանակներում

ԲԳԴ-ի նպատակն է ստեղծել բնապահպանական պատասխանատվության մեխանիզմ հիմնված «աղտոտողը վճարում է» սկզբունքի վրա, որը թույլ կտա կանխարգելել և վերացնել շրջակա միջավայրին հասցված վնասը (հոդված 1): Այս բաժինը նվիրված է Դիրեկտիվով պահանջվող կանխարգելիչ միջոցառումների և դրանց հետ կապված ծախսերի պատասխանատվությանը:

### 2.2.1. Կանխարգելիչ միջոցառումներ

Շահագործողը պետք է անհապաղ ձեռնարկի անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ այն դեպքերում, երբ շրջակա միջավայրին վնաս դեռ չի հասցվել, սակայն կա դրա առաջացման անմիջական վտանգը (հոդված 5(1)): Հոդվածի 5(2)-ի համաձայն՝ վնասի անմիջական վտանգ կա, եթե կա «մոտ ապագայում շրջակա միջավայրին վնաս հասցնելու բավարար հավանականություն»: Հոդվածի 2(1)-ի համաձայն՝ որպես «կանխարգելիչ միջոցառումներ» են սահմանվում «բոլոր այն միջոցները, որոնք *ձեռնարկվում են ի պատասխան* շրջակա միջավայրի վնասի անմիջական վտանգ հանդիսացող իրադարձության, գործողության կամ անգործության՝ այդ վնասը կանխելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով: Որպես վառ օրինակ կարելի է ներկայացնել այն, որում շահագործողը պետք է լուծի մի իրավիճակ, երբ աղտոտող նյութ փոխադրող խողովակները սկսեցին նկատելիորեն քայքայվել՝ ստեղծելով արտահոսքի անմիջական վտանգ և դրանից բխող՝ հողին և ջրին վնաս պատճառելու ռիսկ: Մեկ



այլ օրինակ, երբ ջրառի թույլտվություն ունեցող շահագործողից կարող է պահանջվել կրճատել ջրառի ծավալները՝ քաղցրահամ ջրերի ձկների պոպուլյացիային (հետագա) վնասը կանխելու նպատակով: Կանխարգելիչ միջոցառումներ կարող են անհրաժեշտ լինել նաև շրջակա միջավայրին հասցվող վնասի չափը նվազագույնի հասցնելու համար (օրինակ՝ խողովակների ճեղքումից հետո արտահոսքի տեղայնացման միջոցառումների իրականացում), նույնիսկ եթե վնասի հավանականությունն այլևս հնարավոր չէ կանխել: ԲՊԳ-ն չի մանրամասնում, թե երբ, կոնկրետ ինչ ժամկետներում հնարավոր կլինի հասնել բավարար հավանականության շեմին, և մոտավորապես ինչ ժամկետներում կիրառել միջոցառումներ: Դա կթողնվի դատարանների հայեցողությանը՝ որոշում կայացնելու և պարզաբանելու:

Դիրեկտիվի համաձայն՝ լիազոր մարմինը, տերմին, որը փաստացիորեն սահմանված չէ ԲՊԳ-ով, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի համապատասխան ազգային կարգավորողն է, որը պատասխանատու է հատուկ առաջադրանքների կատարման համար, որոնք ենթադրում են համապատասխան վարչական լիազորություններ, ինչպիսիք են վնասի զգալիությունը գնահատելու պարտականությունը և որոշելու, թե վնասի վերացման ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն: Այնուամենայնիվ, այն չունի հայեցողական լիազորություն՝ որոշելու, թե արդյոք շահագործողից պետք է պահանջվի իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ: Դիրեկտիվի 5(4) հոդվածի համաձայն՝ լիազոր մարմինը «պահանջում է», որ շահագործողը իրականացնի դրանք և կարող է նրան ցուցումներ տալ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ, եթե նպատակահարմար գտնի (հոդված 5(3)(b)-(c)): Ըստ Ֆոզմենի (2020թ, էջ 708)՝ լիազոր մարմինը պարտավոր է շահագործողից պահանջել ձեռնարկել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ: Եթե շահագործողը իր կամքով կամ լիազոր մարմնի հրահանգը չկատարելով չի ձեռնարկում անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ, կամ չեն կարողանում նրա ինքնությունը պարզել կամ նրանից չեն պահանջում կրել ծախսերը, ապա լիազոր մարմինը կարող է ինքնուրույն ձեռնարկել այդ միջոցները (հոդված 5(5)): Խնդրում ենք նկատի ունենալ, որ լիազոր մարմնի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումները չեն վնասում համապատասխան շահագործողի պատասխանատվությանը՝ ըստ ԲՊԳ-ի (հոդված 8 (5)): Սա նշանակում է, որ չնայած լիազոր մարմինը կարող է որոշում կայացնել աշխատանքները կատարելու մասին, դա չի ազատում շահագործողին դրա հետ կապված ծախսերի համար իրավական պատասխանատվությունից, և դրանք կարող են ետ ստանալ դատական կարգով (հոդված 8(2)):

Հարկ է նշել, որ լիազոր մարմինն օրենքով պարտավոր չէ կատարել աշխատանքները, եթե պատասխանատու կողմը չի կարող կամ չի կատարում. լիազոր մարմինը *կարող է* ինքնուրույն ձեռնարկել այդ միջոցները: Մյուլլերատը (2005թ) նշում է, որ դա ԲՊԳ-ի մշակման շուրջ բանավեճի ամենահակասական կողմերից մեկն էր: Բեթլեմն և Բրանսը (2006թ, էջ 26) համարում են վերջնական արդյունքը, այսինքն՝ այն, որ լիազոր մարմինը «սուբսիդիար պատասխանատվություն» չի կրում անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար, որպես «քաղաքական գործարքի ոչ այնքան անսպասելի արդյունք»: Շատ անդամ պետությունների համար նման պարտավորության առկայությունը հավասարազոր կլիներ լիազոր մարմիններին «ոչ ճկուն» և պոտենցիալ «թանկ» պարտավորությամբ «ձանրաբեռնելուն» (Զլարք, 2003թ, էջ 262): Ակնհայտ ռիսկը, սակայն, այն է, որ շրջակա միջավայրին հասցվող վնասը, որը կարող էր ամբողջությամբ կանխվել կանխարգելիչ միջոցառումների ժամանակին իրականացման շնորհիվ, ի վերջո, կարող է առաջանալ, եթե այդ միջոցները չձեռնարկվեն ոչ շահագործողի, ոչ էլ լիազոր մարմնի կողմից: Կրամերը (2005թ) նշում է այն փաստարկը, որ եթե լիազոր մարմինը պարտավոր լիներ կրել կանխարգելիչ միջոցառումների ծախսերը, ապա նա ավելի ուշադիր կլիներ թույլտվության բովանդակության, դրան կից պայմանների և վերականգնման ծախսերը վճարելու շահագործողի կարողության նկատմամբ: Նա շատ ավելի մեծ դրդապատճառ կունենար հետևելու, թե արդյոք շահագործողն իսկապես պահպանում է թույլտվության պայմանները (Կրամեր, 2005թ): Ակնհայտ թերությունը կլինի այն, որ լիազոր մարմինների համար կարգավորման բեռը և դրա հետ կապված ծախսերը կավելանան:

Ստացվում է, որ օպերատորներից չի պահանջվում լիազոր մարմնին տեղեկացնել անմիջական վտանգի մասին, երբ այդ վտանգը վերացվում է ձեռնարկված կանխարգելիչ

միջոցառումների արդյունքում: ԲՊԴ-ն իրենց ազգային օրենսդրության մեջ փոխադրելիս անդամ պետությունները պետք է նախատեսեն, որ «ամեն դեպքում, երբ շրջակա միջավայրին հասցվող վնասի անմիջական վտանգը չի վերացվում, չնայած շահագործողի կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումներին, վերջիններիս պետք է հնարավորինս շուտ տեղեկացնեն լիազոր մարմինին իրավիճակի համապատասխան հանգամանքների մասին (հոդված 5(2)): Լիազոր մարմինն իրավասու է ցանկացած պահի «պահանջել շահագործողից տեղեկատվություն տրամադրել շրջակա միջավայրին հասցված վնասի ցանկացած անմիջական վտանգի կամ նման անմիջական վտանգի ենթադրյալ դեպքերում (հոդված 5(3)(ա)): Այնուամենայնիվ, լիազոր մարմինները կարող են տեղյակ չլինել վտանգի մասին, սակայն նրանք կարող են դա իմանալ օբյեկտի սովորական ստուգայցերի ընթացքում կամ բոլորովին այլ նպատակով օբյեկտ այցելելիս: Նույն կերպ, նրանք կարող են ստիպված լինել ապավինել շահագործողի հետ ամուր աշխատանքային հարաբերություններին՝ վերահաս վտանգի մանրամասները կամովին բացահայտելու հավանականությունը մեծացնելու համար:

Թեև ԲՊԴ-ն շահագործողներից պահանջում է կանխել չարտոնված գործողություններից վնասի անմիջական վտանգը (այսինքն՝ այն գործողությունները, որոնք չեն թույլատրվում իրենց տրամադրված թույլտվության, այլ թույլտվության լիցենզիայի պայմաններով), դրա կիրառումը թույլատրված գործունեության նկատմամբ ավելի քիչ հստակ է սահմանված է (Ֆոզլմեն, 2020թ): Ֆոզլմենը (2020թ, էջ. 708) պնդում է, որ Դիրեկտիվը շահագործողից պահանջում է «իրաժարվել արտոնված այն գործողությունների իրականացումից, որոնք շահագործողը գիտի, որ կհանգեցնեն շրջակա միջավայրի անմիջական սպառնալիքի կամ դրա փաստացի վնասի, կամ փոփոխել այդ գործողությունները այնպես, որ դրանք չվնասեն շրջակա միջավայրին»: Քանի որ շահագործողներից կարող է պահանջվել դադարեցնել կամ փոփոխել թույլտվության համաձայն արտոնված գործողությունները, ապա դա կարգավորման զգալի հնարավորություն է ստեղծում նվազեցնելու և, ըստ էության, կանխելու իրենց ամենօրյա գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասը: Փոխարենը կարողանալու պնդել, որ նման վնասն, ըստ իրենց թույլտվության պայմանների, ընդունելի է, շահագործողներից կարող է պահանջվել, ըստ էության, դադարեցնել կամ փոփոխել այդ գործողությունները՝ այդ վնասի առաջացումը ի սկզբանե կանխելու համար:

### 2.2.2. Կանխարգելիչ գործողությունների ծախսերը

Շահագործողները պետք է կրեն ԲՊԴ-ի պահանջներին համապատասխանելու համար ձեռնարկված կանխարգելիչ գործողությունների հետ կապված ծախսերը (հոդված 8(1)): Հոդվածի 2(16)-ի համաձայն՝ «ծախսեր» նշանակում է «ծախսեր, որոնք հիմնավորված են [ԲՊԴ-ի] պատշաճ և արդյունավետ իրականացումն ապահովելու անհրաժեշտությամբ»: Դրանք ներառում են շրջակա միջավայրին հասցվող վնասի և/կամ դրա անմիջական վտանգի գնահատման, այլընտրանքային գործողությունների, վարչական, դատական հայցերի և հարկադիր կատարման, տվյալների հավաքագրման, մոնիթորինգի և վերահսկողության հետ կապված և այլ ընդհանուր ծախսերը (հոդված 2 (16)): Լիազոր մարմինը պարտավոր է «ի թիվս այլոց, գույքի տեսքով ապահովման կամ այլ համապատասխան երաշխիքների միջոցով բռնագանձել անմիջական վտանգ առաջացրած շահագործողից այն ծախսերը, որոնք նա կրել է [ԲՊԴ]-ի համաձայն իրականացրած կանխարգելիչ միջոցառումների հետ կապված (հոդված 8(2)): Սա, ըստ էության, լիազոր մարմինին թույլ է տալիս բռնագանձել շահագործողի գույքը (օրինակ՝ անշարժ գույք): Դա նրան իրավունք է տալիս վաճառել գույքը՝ չմարված գումարը ետ ստանալու համար, եթե շահագործողը չի կարող կամ չի ցանկանում վճարել: Լիազոր մարմինն ունի ծախսերն ամբողջությամբ չփոխհատուցելու հայեցողական իրավունք, եթե դրա համար անհրաժեշտ ծախսերը գերազանցում են փոխհատուցվող գումարը, կամ եթե շահագործողի ինքնությունը հնարավոր չէ պարզել (հոդված 8(2)):

ԲՊԴ-ի համաձայն՝ շահագործողները օգտվում են որոշակի պարտադիր պաշտպանության միջոցներից (այսինքն՝ այն իմաստով, որ անդամ պետությունները պետք է դրանք կիրառեն): Շահագործողից չի կարող պահանջվել կրել կանխարգելիչ

գործողությունների ծախսերի, եթե նա կարողանում է ապացուցել, որ շրջակա միջավայրին վնաս հասցնելու անմիջական վտանգը (հոդված 8 (3)).

- (ա) առաջացել է երրորդ անձանց կողմից և տեղի է ունեցել՝ չնայած գոյություն ունեցող անվտանգության պատշաճ միջոցառումներին, կամ
- (բ) առաջացել է որևէ պետական մարմնի պարտադիր հրամանի/հանձնարարականի կատարման հետևանքով (բացառությամբ շահագործողի սեփական գործունեության հետևանքով առաջացած արտանետումներից կամ միջադեպից բխող հրամանի կամ հրահանգի):

Անդամ պետությունները պարտավոր են համապատասխան միջոցներ ձեռնարկել, որոնք շահագործողին թույլ կտան ետ ստանալ կատարված ծախսերը (հոդված 8(3)): Բեթլեմը (2006թ, էջ 183) զգուշացնում է, որ պաշտպանության այս միջոցները «շահագործողների համար գործնականորեն մեծ արժեք չեն ներկայացնում, քանի որ դրանք ընդհանրապես կիրառվում են, նրանք չեն պաշտպանում պատասխանատվությունից, այլ միայն փոխհատուցում պահանջելու իրավունք են տալիս»: Սակայն, շահագործողը շարունակում է պատասխանատվություն կրել: Բեթլեմը նշում է, որ «հոդված 8(3)-ի բացառությունները չեն վերաբերում շահագործողի պատասխանատվությանը, այլ նրան, որ նա կրում է ծախսերը» (Բեթլեմ, 2006թ, էջ. 181): Նա նշում է, որ երրորդ կողմի պաշտպանությունը հետագայում սահմանափակվում է նրանով, որ այն դեպքերում, երբ երրորդ կողմը ինքնությունը հնարավոր չի լինում պարզել կամ նա անվճարունակ է, ապա ծախսերը, ըստ էության, կրելու է շահագործողը (Բեթլեմ, 2006): Սա կարող է դիտվել որպես վստահության նվազում այն բանի նկատմամբ, թե ինչպես է «աղտոտողը վճարում» սկզբունքը իրականացվում ԲՊԴ-ի համաձայն՝ հաշվի առնելով, որ աղտոտողից բացի որևէ մեկը, ի վերջո, պատասխանատու է կանխարգելման ծախսերը հոգալու համար:

Պարզելու, թե որ շահագործողն է առաջացրել վնասի անմիջական վտանգ, և վնասի մակարդակը գնահատելու պարտականությունը դրվում է լիազոր մարմնի վրա (հոդված 11(2)): Այուս հանդերձ, նա իրավունք ունի պահանջել համապատասխան շահագործողից կատարել իր սեփական գնահատումը և տրամադրել ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ (հոդված 11(2)): Ի վերջո, ԲՊԴ-ն չի արգելում անդամ պետություններին ապահովել կամ ընդունել ավելի խիստ դրույթներ շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու համար (հոդված 16(1)):

### 2.2.3. Միջոցառումներ ձեռնարկելու պահանջ

Հոդված 12(1)-ի համաձայն՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, որոնք տուժել են կամ կարող են տուժել շրջակա միջավայրին հասցված վնասից, որոնք ունեն բավարար շահագրգռվածություն վնասի վերաբերյալ բնապահպանական որոշումներ կայացնելու հարցում, կամ ովքեր հայտարարում են որևէ իրավունքի խախտման մասին, իրավունք ունեն լիազոր մարմնին ներկայացնել ցանկացած դիտարկում՝ կապված շրջակա միջավայրին հասցված վնասի անմիջական վտանգի՝ իրենց հայտնի դեպքերի հետ, և լիազոր մարմնին խնդրել ձեռնարկել գործողություններ Դիրեկտիվի համաձայն:

### 2.3. ԲՊԴ-ի շրջանակներում շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում

Գնահատումն առանցքային տեղ է զբաղեցնում ԲՊԴ-ի համար երկու առումներով: Նախ, անհրաժեշտ է գնահատում իրականացնել՝ պարզելու համար, թե արդյոք հասել են վնասի «զգալի» շեմին, ինչը նշանակում է, որ շրջակա միջավայրին վնաս է հասցվել, կամ կա դրա անմիջական վտանգը: Երկրորդ, անհրաժեշտ է իրականացնել գնահատում՝ պարզելու լրացուցիչ և/կամ վերականգնողական աշխատանքների անհրաժեշտ ծավալները: Թեև այս բաժինը վերաբերում է առաջինին, վերջինս քննարկվում է 4-րդ բաժնում:

Բացասական հետևանքների զգալիությունը գնահատելու հիմնական նպատակն է պարզել կանխարգելիչ միջոցառումների, վնասի գործոնների անհապաղ վերացման և/կամ վերականգնողական միջոցառումների անհրաժեշտությունը: Դիրեկտիվում հստակ նշվում է, որ վնասի գնահատմամբ բացահայտված պատճառված վնասի կամ դրա առաջացման վտանգի առկայության դեպքում շահագործողները պետք է ձեռնարկեն որոշակի միջոցներ

- Եթե շրջակա միջավայրին վնաս *դեռ չի հասցվել*, սակայն պարզվել է, որ դրա առաջացման անմիջական վտանգ կա, ապա շահագործողները պետք է անհապաղ ձեռնարկեն անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ (հոդված 5(1)):
- Եթե շրջակա միջավայրին *վնաս է հասցվել*, ապա շահագործողները պարտավոր են
  - ձեռնարկել «գործնական բոլոր քայլերը՝ անհապաղ վերահսկելու, տեղայնացնելու, հեռացնելու կամ այլ կերպ կառավարելու համապատասխան աղտոտող նյութերը և/կամ վնասի ցանկացած այլ գործոն՝ շրջակա միջավայրին լրացուցիչ վնաս հասցնելու և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունները կամ ծառայությունների որակի հետագա վատթարացումը սահմանափակելու կամ կանխարգելելու նպատակով» (հոդված 6(1)(a)) («վնասի գործոնների անհապաղ կառավարում»), և
  - ձեռնարկել վնասի վերացման համապատասխան միջոցներ (ԲԴԴ-ի հոդված 6(1)(b) և Հավելված II):

Վնասի անմիջական վտանգի իրավիճակներում գնահատման միակ նպատակը վնասի առաջացումը կանխելն է (Եվրոպական հանձնաժողով, 2021թ): Վնասի զգալիությունը գնահատելու և այն վերացնելու նպատակով ձեռնարկվող միջոցառումների եղանակը որոշելու պարտականությունը դրվում է լիազոր մարմնի վրա (հոդված 11(2)): Այդուհանդերձ, լիազոր մարմինը կարող է համապատասխան շահագործողից պահանջել կատարել իր սեփական գնահատումը և տրամադրել ցանկացած անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ (հոդված 11(2)): Լիազոր մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշման մեջ, որը նախատեսում է կանխարգելիչ կամ վերականգնողական միջոցառումներ, պետք է նշվեն այդ որոշման ճշգրիտ հիմքերը (հոդված 11(4)):

### 2.3.1. Հիմնական տերմիններ

ԲԴԴ-ի համաձայն՝ շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման հիմքում ընկած են հետևյալ հիմնական տերմինները.

- «**Վնաս**» նշանակում է «բնական ռեսուրսի չափելի անբարենպաստ փոփոխություն կամ բնական ռեսուրսների ծառայության որակի չափելի վատթարացում, որը կարող է առաջանալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն» (հոդված 2(2)):
- «**Բնական ռեսուրս**» նշանակում է «պահպանվող տեսակներ և բնական կենսամիջավայրեր, ջրային ռեսուրսներ և հողեր» (հոդված 12(2)):
- «**Ծառայություններ**» և «**բնական ռեսուրսների ծառայություններ**» նշանակում է «մի բնական ռեսուրսի կողմից մեկ այլ բնական ռեսուրսի օգտին իրականացվող գործառնություն [օրինակ՝ մակերևութային ջրերը կարող են նպաստող հանգամանք ծառայել պահպանվող վայրի թռչնատեսակների համար] կամ ի շահ հանրության [օր.՝ հողերի առկայությունը սննդամթերքի արտադրության համար] (հոդված 2(13)):
- «**Սկզբնական (եղակետային) վիճակ**» նշանակում է «բնական ռեսուրսներին և ծառայություններին վնաս հասցնելու պահին այն վիճակը, որը կլինի, եթե շրջակա միջավայրին վնաս չհասցվեր, որը գնահատվում է առկա ամբողջական տեղեկատվության հիման վրա» (հոդված 2(14)):

### Շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատում

Շրջակա միջավայրին հասցված վնասը կամ դրա անմիջական վտանգն առկա է, եթե պահպանվում են երկու իրավական շեմային ցուցանիշները

#### (i) Բազային հասկացություններ

ԲՊԴ-ն կիրառում է հետևյալ հիմնական հասկացությունները

- **Պահպանվող տեսակներ և բնական կենսամիջավայրեր.** կենսամիջավայրերի կամ տեսակների պահպանման բարենպաստ կարգավիճակի հասնելը կամ պահպանելը,

- **Ջրային ռեսուրսներ.** ՋՇԴ-ով սահմանված ջրային ռեսուրսների էկոլոգիական, քիմիական կամ քանակական կարգավիճակը կամ էկոլոգիական ներուժը, և ՇՌՇԴ-ով սահմանված ծովաջրերի էկոլոգիական կարգավիճակը,

- **Հողեր.** մարդու առողջության համար վտանգները

#### (ii) 'զգալի' և 'զգալիորեն'

ԲՊԴ-ն պահանջում է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել միայն այն դեպքում, եթե հետևանքները զգալի են բազային հասկացությունների տեսանկյունից: Հետևանքների զգալիության գնահատման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ներկայացված են ստորև:

## 2.3.2. Բազային հասկացություններ

Շրջակա միջավայրին հասցված վնասի կամ դրա անմիջական վտանգի առկայությունը որոշվում է շեմային երկու ցուցանիշներով (i) որոշակի բազային (էտայոնային) հասկացությունների պահպանում, և (ii) զգալիության շեմի խախտում:

### 2.3.2.1. Բազային հասկացություններ

Բազային հասկացությունները կարևոր նշանակություն ունեն՝ որոշելու, թե արդյոք շրջակա միջավայրին հասցված վնասը գտնվում է ԲՊԴ-ի շրջանակներում: Բազային հասկացությունների դերն է սահմանել (i) պարամետրեր և չափանիշներ՝ բացասական հետևանքների վերաբերելիությունն ուսումնասիրելու համար, և (ii) այն տարրերը, որոնց հետ կապված ազդեցությունները պետք է չափվեն: ԲՊԴ-ն չի կիրառվի, եթե դրանում սահմանված բազային հասկացությունները չեն ներառում բացասական հետևանքը (կամ հետևանքները), որոնք առաջացել են կամ կարող են առաջանալ գործունեության արդյունքում, կամ երբ գործունեության հետևանքները չեն հասնում համապատասխան շեմին (օրինակ՝ տեղի է ունենում հողի աղտոտում, բայց մարդու առողջության համար վտանգ չկա), ինչպես սահմանված է ԲՊԴ-ում: Այս իրավիճակներից յուրաքանչյուրի համար այդ հարցը թողնվելու է անդամ պետությունների ազգային օրենսդրության հայեցողությանը, եթե այն առկա է և կիրառելի է տվյալ հանգամանքներում:

Շրջակա միջավայրին հասցվող վնասի սահմանումը Հոդված 2(2)-ում օգտագործում է հետևյալ բազային հասկացությունները

- **Պահպանվող տեսակներ և բնական կենսամիջավայրեր.** կենսամիջավայրերի կամ տեսակների պահպանության բարենպաստ վիճակի ապահովում և պահպանում,

- **Ջրային ռեսուրսներ.** Ջրային ռեսուրսների շրջանակային դիրեկտիվով (ՋՇԴ) սահմանված ջրային ռեսուրսների էկոլոգիական, քիմիական կամ քանակական կարգավիճակը կամ էկոլոգիական ներուժը, և ըստ Շովային ռազմավարության շրջանակային

դիրեկտիվով (ՇՌՇԴ) սահմանված ծովաջրերի էկոլոգիական կարգավիճակը,

- **Հողեր.** մարդու առողջության համար վտանգները

### 2.3.2.2. «Չզալի» և «զգալիորեն»

ԲՊԴ-ն պահանջում է կանխարգելիչ կամ վերականգնողական միջոցառումների իրականացում միայն այն դեպքում, եթե բնական ռեսուրսների վրա բացասական ազդեցությունը գնահատվում է զգալի՝ համապատասխան բազային հասկացությունների տեսանկյունից (հոդված 2(1)): Թեև համապատասխան լիազոր մարմինն է որոշում, թե արդյոք ազդեցությունը զգալի է, այնուամենայնիվ, ԲՊԴ-ի Հավելված I-ը պարունակում է ուղեցույց պահպանվող տեսակներին և բնական միջավայրերին հասցված վնասը (սակայն ոչ ջրերին և հողին հասցված վնասը) գնահատելու համար: Հավելված I-ի մասին ավելի մանրամասն ներկայացված է ստորև: «Չզալի» հասկացության մեկնաբանությունը անդամ պետությունների միջև մեծապես տարբերվում է, ինչը նշանակում է, որ մի անդամ պետությունում ԲՊԴ-ի կիրառման պատճառ դարձած իրադարձությունը չի կարող պատճառ դառնալ մեկ այլ երկրում այն կիրառելու համար (ECA, 2021թ. ): Այս կապակցությամբ Եվրոպական խորհրդարանը եկել է այն եզրակացության, որ տարբեր մեկնաբանությունները և իր չափանիշների կիրառումը

«դիրեկտիվի անհամաձայնեցված կիրառման պատճառներից մեկն է» (Եվրախորհրդարան, 2021թ, կետ 27):

Վնասը<sup>2</sup>, կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե անբարենպաստ փոփոխությունները և վիճակի վատթարացումը չափելի են (հոդված 2(2)): Վնասը պետք է հնարավոր լինի «հաշվել կամ գնահատել», իսկ վնասը հասցնելուց *առաջ* և *հետո* վիճակը «պետք է հնարավոր լինի ըստ էության համեմատել» (Եվրոպական հանձնաժողով, 2021թ): Գիտական գնահատումը չափազանց կարևոր կլինի (Ֆոզլմեն, 2006թ): Միջադեպից առաջ վիճակը պարզելու դեպքում գործողության մեջ է մտնում հոդվածում 2(14)-ում սահմանված «ելակետային վիճակ» հասկացությունը<sup>3</sup>: Թեև սա կարող է հաստատուն լինել, բայց ավելի հավանական է, որ այն ժամանակի ընթացքում կարող է փոխվել (օրինակ՝ ինչպես սեզոնային լճի դեպքում): Թեև վնասի առաջացումից հետո սկզբնական վիճակը պարզելը կարող է դժվար լինել, ելակետային վիճակի սահմանումը նախատեսում է, որ այն պետք է գնահատվի՝ հնարավորություն տալով հաշվի առնել այս անորոշությունը: Այն դեպքում, երբ գնահատումը ժամանակ է պահանջում, այսինքն՝ անհրաժեշտ է արագ որոշում կայացնել, թե ինչպես լավագույնս արձագանքել՝ վնասի խորացումից խուսափելու համար, գնահատումը պետք է իրականացվի արագ դատողությամբ՝ հիմնվելով «առկա և անմիջապես հասանելի տեղեկատվության վրա» (Եվրոպական հանձնաժողով, 2021թ): Վերականգնողական միջոցառումների անհրաժեշտության դեպքում առավել մանրամասն գնահատում կպահանջվի: Դա կարող է լինել ավելի քիչ ժամանակատար:

### 2.3.3. Շրջակա միջավայրին հասցված վնասի «զգալիության» գնահատում

#### 2.3.3.1. Պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին հասցված վնաս

Պահպանվող տեսակների և բնական կենսամիջավայրերի դեպքում վնասը պետք է «զգալի հետևանքներ ունենա, որպեսզի հասնի կամ պահպանի *պահպանման բարենպաստ կարգավիճակ*» (ինչպես սահմանված է հոդված 2(4)-ում):

#### Զգալիության գնահատում

ԲՊԴ-ի Հավելված I-ի համաձայն՝ ելակետային վիճակի զգալի անբարենպաստ փոփոխությունները պետք է որոշվեն *չափելի տվյալների* միջոցով, ներառյալ.

- անձանց թիվը, խտությունը կամ ընդգրկված տարածքը,
- կոնկրետ անձանց կամ վնասված տարածքի դերը տեսակների կամ կենսամիջավայրի պահպանման, տեսակների կամ կենսամիջավայրի հազվադեպության հետ կապված,
- տեսակների բազմազման կարողությունը, դրանց կենսունակությունը/կենսամիջավայրի բնական վերականգնման ունակությունը
- տեսակների կամ կենսամիջավայրերի՝ կարճ ժամանակում, առանց որևէ միջամտության, բացի պահպանման միջոցների ավելացումից, սկզբնական վիճակին համարժեք կամ դրան գերազանցող վիճակի վերականգնվելու ունակությունը:

Մարդու առողջության վրա ապացուցված ազդեցություն ունեցող վնասը *պետք է* որակել որպես զգալի վնաս:

ԲՊԴ-ի Հավելված I-ում բերված են բացասական ազդեցությունների օրինակներ, որոնք պարտադիր չէ որակել որպես զգալի վնաս (հետևաբար, դրանց նկատմամբ ԲՊԴ-ն չի

<sup>2</sup> ԲՊԴ-ի Հոդված 2(2)-ի համաձայն՝ «վնաս» նշանակում է «բնական ռեսուրսի չափելի անբարենպաստ փոփոխություն կամ բնական ռեսուրսների ծառայության որակի չափելի վատթարացում, որը կարող է տեղի ունենալ ուղղակիորեն և անուղղակիորեն»:

<sup>3</sup> ԲՊԴ-ի Հոդված 2(14)-ի համաձայն՝ «ելակետային վիճակ» նշանակում է «բնական ռեսուրսներին և ծառայություններին վնաս հասցնելու պահին այն վիճակը, որը կլինի, եթե շրջակա միջավայրին վնաս չհասցվեր, որը գնահատվում է առկա ամբողջական տեղեկատվության հիման վրա»

կիրառվի): Սա ներառում է բացասական փոփոխություններ, որոնք ավելի փոքր են, քան բնական տատանումները, որոնք նորմալ են համարվում տվյալ տեսակի կամ կենսամիջավայրի համար:

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման միջոցառումների** նպատակով անհրաժեշտ է պարզել վնասի զգալիությունը, եթե գնահատումը հանգեցնի կամ պետք է հանգեցնի հիմնավորված այն համոզմունքին, որ այդպիսի միջոցառումների չիրականացման դեպքում տեղի կունենան ստորև նշված անբարենպաստ փոփոխություններն ու վատթարացումները (Եվրոպական հանձնաժողով, 2021թ)

**Պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրին հասված վնասի «զգալիությունը»**  
Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման միջոցառումների դեպքում. զգալի է, եթե գնահատումը հանգեցնում է կամ պետք է հանգեցնի հիմնավորված այն համոզմունքին, որ այդպիսի միջոցառումների չիրականացման դեպքում տեղի կունենան որոշակի անբարենպաստ փոփոխություններ և խախտումներ (օր.՝ կենսամիջավայրի կառուցվածքի կամ նշանակության չափելի արժեքը):

**Բնական կենսամիջավայրերի հետ կապված վերականգնողական միջոցառումների դեպքում.** զգալի է, եթե ազդակիր բնական կենսամիջավայրի տարածքի հետ կապված անբարենպաստ փոփոխությունները հանգեցնում են որոշակի փոփոխությունների (օր.՝ կենսամիջավայրի կառուցվածքի կամ նշանակության չափելի արժեքը):

**Պահպանվող տեսակների վերականգնողական միջոցառումների դեպքում.** զգալի է, եթե ազդակիր պոպուլյացիայի հետ կապված անբարենպաստ փոփոխությունները հանգեցնում են որոշակի փոփոխությունների (օր.՝ համապատասխան տեսակների բազմազանության չափելի մշտական կամ ժամանակավոր կրճատում):

Միևնույն ժամանակ, **բնական կենսամիջավայրերի հետ կապված վերականգնողական միջոցառումների** համատեքստում անբարենպաստ փոփոխությունները զգալի կլինեն և վնասներ կառաջանան, եթե ազդակիր բնական կենսամիջավայրի տարածքի հետ կապված դրանք հանգեցնեն հետևյալներից մեկին կամ մի քանիսին

- կենսամիջավայրի տարածքի չափելի մշտական կամ ժամանակավոր կորուստ,
- կենսամիջավայրի կառուցվածքի կամ նշանակության չափելի արժեքը կրճատվում,
- կենսամիջավայրի մշտական կամ ժամանակավոր կրճատում,
- բնորոշ տեսակների չափելի մշտական կամ ժամանակավոր կորուստ, դրանց բազմազանության կամ կենսամիջավայրերի կրճատում,
- բնական կենսամիջավայրի և նրա բնորոշ տեսակների տարածքի, կառուցվածքի և նշանակության հետ կապված ծառայությունների որակի չափելի մշտական կամ ժամանակավոր վատթարացում, և
- համապատասխան տարածքի, կառուցվածքի, նշանակության և բնորոշ տեսակների համար անբարենպաստ հետևանքների առաջացման պահի և ելակետային վիճակի վերականգնման պահի միջև չափելի ընդմիջում:

**Պահպանվող տեսակների համար վերականգնողական միջոցառումների համատեքստում** անբարենպաստ փոփոխությունները զգալի կլինեն, և վնասներ կառաջանան, եթե ազդակիր պոպուլյացիայի հետ կապված դրանք հանգեցնեն հետևյալներից մեկին կամ մի քանիսին

- պոպուլյացիայի մշտական կամ ժամանակավոր չափելի կորուստ (ներառյալ առանձնյակի կամ առանձնյակների կորուստ) կամ պոպուլյացիայի առողջության վատթարացում, որն ազդում է պոպուլյացիայի դինամիկ անձի վրա ազդակիր տարածքում
- համապատասխան տեսակների բազմազանության մշտական կամ ժամանակավոր չափելի կրճատում,
- տեսակների համար երկարաժամկետ պահպանման համար հասանելի կենսամիջավայրերի մշտական կամ ժամանակավոր չափելի կրճատում,
- բնական ծառայությունների որակի մշտական կամ ժամանակավոր չափելի վատթարացում՝ կապված պոպուլյացիայի կորստի, բազմազանության կրճատման կամ առկա կենսամիջավայրերի կրճատման հետ կապված, և
- անբարենպաստ հետևանքների առաջացման պահի և պոպուլյացիայի արեալի (այսինքն՝ այն տարածքը, որտեղ կարելի է գտնել տվյալ տեսակը), հասանելի

կենսամիջավայրի երակետային վիճակի վերականգնման ժամանակի միջև չափերի ընդմիջում:

### 2.3.3.2. Ջրերին հասցվող վնաս

«Ջրերին հասցվող վնաս» տերմինը վերաբերում է ջրային ռեսուրսների երկու կատեգորիաներին

- ՋՇԴ-ով սահմանված ջրային ռեսուրսներ (այսինքն՝ ներքին մակերևութային ջրեր, անցումային ջրեր, առափնյա ջրեր և ստորերկրյա ջրեր), և
- ԾՌՇԴ-ով սահմանված ծովաջրեր:

Ձգալիության գնահատումը պետք է վերաբերի ազդակիր ջրերի *կոնկրետ* տարածք(ներ)ին:

### ՋՇԴ-ով սահմանվող ջրային ռեսուրսներ

Վնասի գնահատման նպատակով կարևոր է ջրերի որոշակի ենթադասերի տարբերակումը: Դրանք են՝ ստորերկրյա ջրեր, գետեր, լճեր, անցումային ջրեր (այսինքն՝ գետաբերանի մոտ գտնվող մակերևութային ջրային մարմին, որն իր բնույթով մասամբ աղի է, բայց զգալիորեն ազդում է քաղցրահամ ջրերի հոսքերի վրա), առափնյա ջրեր. տարածքային ջրեր և արհեստական և խիստ ձևափոխված ջրային մարմիններ: Դրանք պետք է տարանջատել, քանի որ դրանցից յուրաքանչյուրի համար օգտագործվում են տարբեր բազային հասկացություններ: Հարկ է հիշեցնել, որ ՋՇԴ-ի համաձայն՝ ջրերի համար «ջրերին հասցվող վնասը» սահմանվում է որպես «ցանկացած վնաս, որը զգալի բացասական ազդեցություն է ունենում. համապատասխան ջրերի էկոլոգիական, քիմիական կամ քանակական կարգավիճակի վրա, ինչպես սահմանված է ԵՀ-ի թիվ 2000/60/EC դիրեկտիվով, բացառությամբ այն բացասական հետևանքների, որտեղ կիրառվում է այդ Դիրեկտիվի 4(7) հոդվածը»:

Տարբեր բազային հասկացություններից են՝

- **Էկոլոգիական.** մակերևութային ջրեր
- **քիմիական.** մակերևութային և ստորերկրյա ջրեր
- **քանակական կարգավիճակ.** ստորերկրյա ջրեր, և
- **էկոլոգիական ներուժ.** խիստ և արհեստականորեն ձևափոխված ջրային մարմիններ

Հաշվի առնելով բազային հասկացությունների մեծ թիվը՝ մի շարք մեթոդներ կարող են օգտագործվել ինչպես երակետային վիճակը, այնպես էլ անբարենպաստ փոփոխություններն ու խախտումները գնահատելու և չափելու համար, ներառյալ քիմիական անալիզները, կենսամիջավայրերի գնահատումը, թունավորության չափումները և բիոինդեքսները (Եվրոպական հանձնաժողով, 2021թ):

### Ձգալիության որոշում

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման միջոցառումների** նպատակով պետք է որոշել վնասի զգալիությունը, եթե գնահատումը հանգեցնի կամ պետք է հանգեցնի *հիմնավորված այն համոզմունքին*, որ այդպիսի միջոցառումների չիրականացման դեպքում տեղի կունենան ստորև նշված անբարենպաստ փոփոխություններն ու խախտումները (Եվրոպական հանձնաժողով, 2021թ)



**Ջրերին հասցվող վնասի «զգալիությունը»**

*Ջրային ռեսուրսներն ըստ ՋԾԴ-ի*

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման համատեքստում.**

զգալի է, եթե գնահատումը հանգեցնում է կամ պետք է հանգեցնի հիմնավորված այն համոզմունքին, որ այդպիսի միջոցառումների չիրականացման դեպքում տեղի կունենան որոշակի անբարենպաստ փոփոխություններ և խախտումներ (օր.<sup>4</sup> բնական ծառայությունների որակի վատթարացում կապված կարգավիճակի այն տարրերի հետ, որոնք կորուստներ են կրել կամ վատթարացել են):

**Վնասի վերացման միջոցառումների համատեքստում.** զգալի է, եթե ազդակիր տարածք(ներ)ի հետ կապված անբարենպաստ փոփոխությունները հանգեցնում են, օրինակ, կարգավիճակի տարրի չափելի վատթարացման:

*Ջրային ռեսուրսներն ըստ ԾՌԾԴ-ի*

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման համատեքստում.**

զգալի է, եթե գնահատումը հանգեցնում է կամ պետք է հանգեցնի հիմնավորված այն համոզմունքին, որ այդպիսի միջոցառումների չիրականացման դեպքում տեղի կունենան մի շարք անբարենպաստ փոփոխություններ (տե՛ս վնասի վերացման միջոցառումները)

**Վնասի վերացման միջոցառումների համատեքստում.** զգալի է, եթե անբարենպաստ փոփոխությունները հանգեցնում են որակական բնութագրիչի կարգավիճակի չափելի մշտական կամ ժամանակավոր կորստի՝ հատկությունների, ճնշումների և ազդեցությունների ցանկի հետ միասին՝ հաշվի առնելով չափանիշների տարրերը և սահմանային արժեքը, այնպես որ ազդակիր տարածքն այլևս չի համապատասխանում էկոլոգիական կարգավիճակին, որը պետք է կիրառվեր այդ տարածքի նկատմամբ մինչև անբարենպաստ փոփոխությունը:

Եվրոպական հանձնաժողովը (2021թ) հստակեցրել է, որ **վերականգնողական միջոցառումների** համատեքստում անբարենպաստ փոփոխությունները զգալի են, եթե ազդակիր տարածք(ներ)ի հետ կապված փոփոխությունները հանգեցնում են *չափելի*.

- մշտական կամ ժամանակավոր կորստի՝ կարգավիճակի տարրի (ջրային ռեսուրսի կարգավիճակի սահմանման բաղադրիչ, ինչպես նկարագրված է ՋԾԴ-ի Հավելված V-ում) հետ կապված, այնպես որ այդ կարգավիճակի տարրի դեպքում ազդակիր տարածքում այլևս չկան այն հատկությունները, որոնք առկա կլինեին տարածքում մինչև անբարենպաստ փոփոխությունը կամ խախտումը,
- կարգավիճակի տարրի վատթարացման, այնպես որ այդ կարգավիճակի տարրի դեպքում ազդակիր տարածքում այլևս չկան այն հատկությունները, որոնք առկա կլինեին տարածքում մինչև անբարենպաստ փոփոխությունը կամ խախտումը,
- բնական ծառայությունների որակի վատթարացման՝ կապված կարգավիճակի այն տարրերի հետ, որոնք կորուստներ են կրել կամ վատթարացել են, և
- բացասական հետևանքների առաջացման պահի և համապատասխան կարգավիճակի տարրերի ելակետային վիճակի վերականգնման ժամանակի միջև ընդմիջման:

Թեև, ըստ ՋԾԴ-ի՝ պարտադիր չէ, որ բացասական ազդեցությունը հանգեցնի դասակարգման փոփոխության (օրինակ՝ գետերի լավ էկոլոգիական կարգավիճակից չափավոր կարգավիճակի անցում), կարգավիճակի ավելի ցածր դասի փոփոխությունը զգալի բացասական ազդեցության օրինակ կլինի (որն, իր հերթին, կդրդի ԲԳԴ-ի գործնական կիրառմանը): Չկա «պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին հասցվող վնասի» զգալիությունը (կամ աննշանությունը) գնահատելու և պարզելու որևէ չափանիշ, ինչպես նախատեսված է ԲԳԴ-ի Հավելված I-ում:

**Ծովաջրերն ըստ Ծովային ռազմավարության շրջանակային դիրեկտիվի (ԾՌԾԴ)**

«Ծովաջրերի» բազային հասկացությունը նրանց «էկոլոգիական կարգավիճակն» է<sup>4</sup>, ինչպես սահմանված է ԾՌԾԴ-ում:

**Չզալիության որոշում**

Ճիշտ այնպես, ինչպես ՋԾԴ-ով սահմանված ջրերի

<sup>4</sup> ՋՌԾԴ-ի հոդված 3(4)-ի համաձայն՝ «էկոլոգիական կարգավիճակ» նշանակում է «ծովաջրերում շրջակա միջավայրի ընդհանուր վիճակը՝ հաշվի առնելով բաղկացուցիչ ծովային էկոհամակարգերի կառուցվածքը, նշանակությունը և գործընթացները՝ բնական ֆիզիոգրաֆիկ, աշխարհագրական, կենսաբանական, երկրաբանական և կլիմայական գործոնների, ինչպես նաև ֆիզիկական, ակուստիկ և քիմիական պայմանների հետ միասին, ներառյալ՝ տվյալ տարածքի սահմաններում կամ դրանից դուրս մարդու գործունեության արդյունքում առաջացող պայմանները»

դեպքում է, **Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման միջոցառումների** նպատակով ԾՌՇԴ-ի համաձայն պետք է որոշել ծովաջրերի վրա վնասի զգալիությունը, եթե գնահատումը հանգեցնի կամ պետք է հանգեցնի *հիմնավորված այն համոզմունքին*, որ այդպիսի միջոցառումների

**Հողերին հասցվող վնասի «զգալիությունը»**

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման համատեքստում.** զգալի է, եթե հիմնավոր կասկածներ կան չափելի հավանականության բացակայության վերաբերյալ, առ այն որ վնասի անմիջական վտանգը կամ գործոնները կարող են հանգեցնել մարդկանց առողջության համար վնասակար աղտոտիչների ուղղակի կամ անուղղակի ազդեցությանը:

**Վնասի վերացման միջոցառումների համատեքստում.** զգալի է, եթե հիմնավոր կասկածներ կան չափելի հնարավորության բացակայության վերաբերյալ, առ այն որ նյութերը, պատրաստուկները, օրգանիզմները կամ միկրոօրգանիզմները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվել են հողի մեջ, վրա կամ տակ, կարող են հանգեցնել մարդկանց առողջության համար վնասակար աղտոտիչների ուղղակի կամ անուղղակի ազդեցության:

չիրականացման դեպքում տեղի կունենան ստորև նշված անբարենպաստ փոփոխությունները (Եվրոպական հանձնաժողով, 2021թ)

**Վերականգնողական միջոցառումների**

համատեքստում անբարենպաստ փոփոխությունները զգալի կլինեն, եթե դրանք հանգեցնեն որակական բնութագրիչի կարգավիճակի չափելի մշտական կամ ժամանակավոր կորստի՝ հատկությունների, ճնշումների և ազդեցությունների ցանկի հետ միասին, հաշվի առնելով «չափանիշների տարբերը» և սահմանային արժեքը, այնպես որ ազդակիր տարածքն այլևս չի համապատասխանում Էկոլոգիական կարգավիճակին, որը պետք է կիրառվեր այդ տարածքի նկատմամբ մինչև անբարենպաստ փոփոխությունը (Եվրոպական հանձնաժողով, 2021թ):

Թեև պարտադիր չէ, որ բացասական ազդեցությունը հանգեցնի դասակարգման փոփոխության (օրինակ՝ լավ Էկոլոգիական կարգավիճակից դեպի ոչ լավը), կարգավիճակի ավելի ցածր դասի փոփոխությունը զգալի բացասական ազդեցության օրինակ կլինի (որն, իր հերթին, կդրդի ԲԳԴ-ի գործնական կիրառմանը): Նույնը տեղի կունենա նաև «Էկոլոգիական լավ կարգավիճակի» արժեզրկման դեպքում:

**2.3.3.3. Հողին հասցվող վնաս**

Հողին հասցվող վնասի գնահատումը կապված է մարդու առողջության վրա բացասական ազդեցության ռիսկի հետ պարտադիր չէ, որ իրական վնասը ցույց տրվի: Ռիսկը, որը պետք է «զգալի» լինի, գնահատվում է՝ ելնելով աղտոտիչների ազդեցությանը մարդու ենթարկվելու հայտնի վտանգներից և մակարդակից: Թեև «հողը» սահմանված չէ, ինչպես վկայակոչում է ԲԳԴ-ի հոդված 2(1)(c)-ն՝ «հողի մեջ, վրա կամ տակ», այն վերաբերում է ինչպես հողի մակերևույթին, այնպես էլ ենթամակերևույթին:

**Զգալիության որոշում**

Զգալիությունը որոշելիս՝ այն հարցերը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել մարդու առողջության համար վտանգի առկայության հետ կապված, ներառում են հողի հատկություններն ու ֆունկցիան, վնասակար նյութերի, պատրաստուկների, օրգանիզմների կամ միկրոօրգանիզմների տեսակը և կոնցենտրացիան (այսինքն՝ դրանց կոնկրետ ռիսկերը և ազդեցության հնարավոր ուղիները, ինչպիսիք են մաշկի շփումը կամ դրանց սպառումը), ինչպես նաև ռիսկը և դրանց տարածման հնարավորությունը:

**Կանխարգելիչ միջոցառումների և վնասի գործոնների անհապաղ վերացման համատեքստում,** վտանգը զգալի կլինի, եթե հիմնավոր կասկածներ կան չափելի հնարավորության բացակայության վերաբերյալ, առ այն որ անմիջական վտանգը կամ վնասի գործոնները կարող են հանգեցնել մարդկանց առողջության համար վնասակար աղտոտիչների ուղղակի կամ անուղղակի ազդեցությանը (Եվրոպական հանձնաժողով, 2021թ):

Մինչդեռ **վերականգնողական միջոցառումների դեպքում,** վնասը զգալի կլինի, եթե հիմնավոր կասկածներ կան չափելի հնարավորության բացակայության վերաբերյալ, առ այն,

որ նյութերը, պատրաստուկները, օրգանիզմները կամ միկրոօրգանիզմները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կիրառվել են հողի մեջ, վրա կամ տակ՝ հանգեցնելով մարդկանց առողջության համար վնասակար աղտոտիչների ուղղակի կամ անուղղակի ազդեցությանը: (Եվրոպական հանձնաժողով, 2021թ): «Ելակետային վիճակի» սահմանումը սահմանափակ կիրառություն ունի հողին հասցված վնասի զգալիությունը գնահատելու համար, քանի որ, երբ խոսքը վերաբերում է հողին հասցված վնասի վերականգնմանը, ԲՊԳ-ն պահանջում է վերացնել մարդու առողջության համար ցանկացած էական վտանգ՝ մինչև աղտոտումը եղած սկզբնական վիճակին վերականգնելու պահանջի փոխարեն:

### 3. Հայաստանում բնապահպանական պատասխանատվության մասին օրենսդրության նկարագրությունը

#### 3.1. Բնապահպանական պատասխանատվության մասին ՀՀ օրենսդրության ընդհանուր ամփոփում

##### 3.1.1 Ներածություն

Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի և ՀՀ բնապահպանական օրենսդրությունը ներառում են բնապահպանական պատասխանատվության շատ տարբեր հասկացություններ: Առաջինի դեպքում այս արտահայտությունն օգտագործվում է ցույց տալու կողմի իրավական պատասխանատվությունը, ինչպես սահմանված է համապատասխան կարգավորող մարմնի կողմից, շրջակա միջավայրին իրականում (կամ սպառնացող) վնասը կանխելու կամ վերացնելու պարտավորության հետ կապված ֆինանսական ծախսերի համար, որը սահմանված է գիտական գնահատմամբ: Մյուս կողմից, ՀՀ օրենսդրության համաձայն, այն օգտագործվում է ցույց տալու կողմի իրավական պատասխանատվությունը բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման և/կամ դրանց վնաս հասցնելու համար պետությանը, անուղղակիորեն սահմանված *բանաձևով և/կամ սակագներով*, հատուցում (այսինքն՝ վնասները) վճարելու համար: Բանաձևերի և սակագների վրա հիմնված տնտեսական հաշվարկներն օգտագործվում են որպես մոտավոր ցուցանիշ՝ գիտականորեն պարզելու շրջակա միջավայրին հասցված վնասի մակարդակը, որն իրականում առաջացել է խախտողի գործունեության հետևանքով:

Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգը ցրված է մի շարք նորմատիվ իրավական ակտերում: Կիրառելի օրենքները կարելի է բաժանել երկու կատեգորիաների՝ բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն և անուղղակիորեն վերաբերող օրենքներ: Բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն առնչվող օրենքները, որպես կանոն, կարգավորում են բնական ռեսուրսի առանձին տեսակի օգտագործումը՝ առաջացնելով իրավախախտումներ, և իր հերթին, պատասխանատվություն (օրինակ՝ քաղաքացիական) դրանց խախտման համար: Դրանց թվում են՝

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք, (1999թ.)
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)
- ՀՀ ջրային օրենսգիրք (2002թ.)
- ՀՀ անտառային օրենսգիրք (2005թ.)
- «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգիրք (2011թ.)

Ինչպես երևում է, գործնական մոտեցումն այն է, որ մեկ բնական ռեսուրսի նկատմամբ մեկ նորմատիվ իրավական ակտ գործի:

Մյուս կողմից, բնապահպանական պատասխանատվությանն անուղղակիորեն վերաբերող օրենքները բավականին տարբերվում են վերը նկարագրվածներից այն իմաստով, որ դրանք (i) չեն առաջացնում նոր իրավախախտումներ, և (ii) հաճախ ներառում են այնպիսի գործողություններ, որոնք դուրս են այն գործողությունների շրջանակից, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա: Այդուհանդերձ, դրանք սերտորեն փոխգործակցում են ուղղակիորեն առնչվող օրենքների հետ այն առումով, որ դրանք պարունակում են առավել մանրամասն տեղեկություններ ուղղակիորեն առնչվող օրենքների խախտման հետևանքների մասին, ինչպիսիք են տուգանքների չափի սահմանումը, պետությանը վճարվելիք փոխհատուցման հաշվարկման մանրամասն բանաձևերը և բնական

ռեսուրսների օրինական օգտագործման համար բնօգտագործողների կողմից վճարվելիք վճարների հստակեցումը: Պատասխանատվության անուղղակիորեն վերաբերող օրենքներից են՝

- «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրք (1986թ.)
- Քրեական օրենսգիրք (2003թ.)
- «Զրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը
- «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշում
- «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՕ-88-Ն օրենք
- «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում
- Հարկային օրենսգիրք (2016թ.)

Հարկ է նշել, որ մինչդեռ ԲՊԴ-ի Հոդված 2(1)-ի համաձայն շրջակա միջավայրին հասցված վնասի սահմանման մեջ բացակայում է մթնոլորտային օդին հասցված վնասը, այն նախատեսված է Հայաստանի պատասխանատվության անուղղակիորեն («Մթնոլորտային օդի պահպանության մասին» 1994 թվականի ՀՀ օրենք) և անուղղակիորեն վերաբերող («Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում) նորմատիվ իրավական ակտերով:

Ընդհանուր առմամբ, վերը թվարկված տասներեք նորմատիվ իրավական ակտերը, որոնց մանրամասն նկարագրությունը ներկայացված է սույն զեկույցի Հավելված 1-ում, նախատեսում են չորս տեսակի բնապահպանական պատասխանատվություն.

- i բնօգտագործման վճար,
- ii պետությանը վճարվող փոխհատուցում (այսինքն՝ վնասների համար վճարում),
- iii տուգանքներ, և
- iv կանխարգելիչ և/կամ վերականգնողական միջոցառումների իրականացման հետ կապված ծախսեր:

Սրանք ուսումնասիրվում են 3.1.2 բաժնում:

Սույն զեկույցում կատարված վերլուծությունը չի ներառում քրեական օրենսգիրքը, որը նախատեսում է իրավախախտների ազատազրկում, քանի որ այն չի համարվում բնապահպանական պատասխանատվության ձև: Չեկույցը չի ներառում նաև թույլտվությամբ կամ լիցենզիայով նախատեսված պատասխանատվության ձևեր, օրինակ՝ օբյեկտի, այդ թվում՝ աղբավայրի կամ հանքի փակումից հետո հողերի վերականգնման պատասխանատվությունը, կամ փակումից հետո օբյեկտի պահպանումը և հետագա խնամքը (ներառյալ դրա շրջակա միջավայրի ամբողջականությունը վերահսկելու անհրաժեշտությունը):

Հայաստանյան կարգավորող մարմինները հաճախ հայեցողական լիազորություններ ունեն որոշելու, թե պատասխանատվության որ ձևը (ձևերը) կարող է տեղին լինել տվյալ դեպքում: Օրինակ, անտառային օրենսգրքի համաձայն՝ անտառային պետական ծառայությունը, որը վերահսկողություն է իրականացնում օրենսգրքի կիրառման նկատմամբ, պարտավոր է խախտողին վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնել: Պարտավորության նշված տեսակները կարող են կիրառվել նաև իրար հետ միասին: Անտառային օրենսգրքում, օրինակ, նշվում է, որ անտառային օրենսդրության խախտման համար կիրառվող ցանկացած

պատասխանատվություն չի ազատում խախտողին խախտումը վերացնելու պարտականությունից (օրինակ՝ խախտումները վերացնելու գործողություններ ձեռնարկելը) և պատճառված վնասը հատուցելու պարտականությունից (հոդված 60(2)): «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը սահմանում է, որ դրա խախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի հատուցումը չի բացառում իրավախախտում թույլ տված անձին վարչական (օրինակ՝ տուգանք) կամ այլ (օրինակ՝ քրեական) պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը (հոդված 22):

Վերևում մանրամասն նկարագրված բնապահպանական պատասխանատվության չորս տեսակներից ԲՊԴ-ը ներառում է միայն (iv) տեսակը (կանխարգելիչ և/կամ վերականգնողական միջոցառումներ): Պատասխանատվության մյուս տեսակները ԲՊԴ-ով սահմանված հիմքեր չունեն: Սա, իհարկե, չի բացառում նրանց ներառումը երկրի ազգային օրենքներում: Դրանք պարզապես ներառված չեն ԲՊԴ-ում:

Երրորդ անձինքն, ինչպես օրինակ՝ քաղաքացիները կամ ընկերությունները կարող են քաղաքացիական հայցեր ներկայացնել այոց գործունեության հետևանքով իրենց պատճառված վնասի համար՝ ապահովելով աղտոտողների համար քաղաքացիական պատասխանատվության լրացուցիչ աղբյուր: Այս հայցերը, սակայն, ամենևին կապված չեն բնական ռեսուրսների՝ ուղղակի կամ անուղղակի միջոցներով կարգավորման հետ:

### 3.1.2. Հայաստանի օրենսդրության համաձայն բնապահպանական պատասխանատվության կատեգորիաները

Այս բաժնում մանրամասն ներկայացվում են բնապահպանական պատասխանատվության այն կատեգորիաները, որոնց կարող են ենթարկվել Հայաստանի օրենսդրությունը խախտողները՝ լինեն դրանք իրավաբանական, թե ֆիզիկական անձինք: Սույն գեկույցի Հավելված 1-ում ներկայացվում են վերը նշված նորմատիվ իրավական ակտերից յուրաքանչյուրից բխող բնապահպանական պատասխանատվության ձևերի առավել մանրամասն քննարկումը:

#### 3.1.2.1. Բնօգտագործման վճարներ

Բնօգտագործման վճարները վճարվում են բնօգտագործողների կողմից բնական ռեսուրսների (օր.՝ բուսական և կենդանական աշխարհ) *օրինական* օգտագործման համար: Օրինակ՝ «Բուսական աշխարհի մասին» օրենքի համաձայն՝ բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործողը պարտավոր է վճարել բուսական աշխարհից օգտվելու համար սահմանված վճարները (հոդված 27(զ)): Բնօգտագործման վճարները վճարելու նմանատիպ պարտականություն է նախատեսված «Կենդանադասական աշխարհի մասին» օրենքով (հոդված 29(է), *Ջրային օրենսգրքով* (հոդված 76), *Անտառային օրենսգրքով* (հոդված 56(1)) և «Ընդերքի մասին» օրենսգրքով (հոդված 4(1)(10)): Այս վճարները սահմանվում են *Հարկային օրենսգրքով* (հոդված 203): Այստեղ ասվում է, օրինակ, որ վճարները կախված են ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված թույլտվություններով սահմանված ջրօգտագործման ծավալներից և ընդերքի մասին օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների արդյունահանման ծավալներից: Անկեղծ ասած, գուցե ավելի ճիշտ կլինի բնօգտագործման վճարները որակել որպես տնտեսական գործունեություն իրականացնելու ծախս, այլ ոչ թե բնապահպանական պատասխանատվության ձև: «Բնապահպանական պատասխանատվություն» տերմինը, առնվազն եվրոպական իրավական համակարգերում, սովորաբար վերաբերում է ֆինանսական պարտավորությանը այն ծախսերի համար, որոնք կապված են ապօրինի գործունեության հետևանքով շրջակա միջավայրին վնաս հասցնելու կամ հնարավոր վնաս հասցնելու հետ: Իսկ բնօգտագործման վճարները, ընդհակառակը, օրինական աղտոտման համար վճարումներ են: Ըստ էության, բնօգտագործողը պետությանը վճարում է, որպեսզի իրեն թույլ տան աղտոտել շրջակա միջավայրը:

### 3.1.2.2. Հատուցում

Բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն առնչվող մի շարք օրենքներ բնօգտագործողներին պարտավորեցնում են հատուցել իրենց կողմից օրենքի խախտման հետևանքով պատճառված վնասը: Հատուցման վերաբերյալ ՀՀ օրենսդրության պահանջների օրինակները բերված են Աղյուսակ 1-ում:

Պատճառված վնասի հատուցման անհրաժեշտությունը սահմանվում է «Բուսական աշխարհի մասին» օրենքով, որը նախատեսում է, որ կարգավորող մարմինն իրավունք ունի միջոցներ ձեռնարկել օրենքի խախտման հետևանքով պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ (հոդված 30(գ)): «Կենդանական աշխարհի մասին» օրենքն ավելի հստակ է իր մոտեցումներում: Այն պահանջում է, որ կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործողները պետք է «հատուցեն իրենց կողմից օրենքի խախտման հետևանքով պատճառված վնասը, որը պատճառվել է» օրենքի խախտման հետևանքով (հոդված 29(թ)): Նման պարտականություն է նախատեսվում նաև Ջրային օրենսգրքով (հոդվածներ 116 և 117) և Անտառային օրենսգրքով (հոդվածներ 26(3)(գ), 34(1)(բ) և 61(1)): Հարկ է նկատել, որ Անտառային օրենսգրքի համաձայն՝ անտառօգտագործողները պարտավոր են հատուցել *կամ* վերականգնել անտառօգտագործման հետևանքով անտառներին և անտառային հողերին պատճառված վնասը: Այսպիսով, Անտառային պետական ծառայությունն հայեցողական իրավունք ունի որոշելու, թե արդյոք խախտողից պահանջվում է հատուցում կամ հետևանքների վերացման աշխատանքների կատարում (հոդված 34(1)(բ)): Օրենսգիրքը չի նախատեսում որևէ չափանիշ, որը կօգնի այդ ծառայությանը կիրառել հայեցողական այդ իրավունքը: Պարզ է, որ եթե որոշում կայացվի հատուցում պահանջել, և այդ հատուցումը փոխանցվի պետական բյուջե և չօգտագործվի պատճառված վնասը վերացնելու համար, ապա շրջակա միջավայրը կմնա դեգրադացված վիճակում: Հայեցողական լիազորությունների առկայությունը չի համապատասխանում 61-րդ հոդվածին, որը սահմանում է, որ օրենսգրքի խախտման հետևանքով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից անտառային հողերին պատճառված վնասը «ենթակա է հատուցման»:

Անուղղակի վկայակոչումներ են առկա «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքում բնօգտագործողների կողմից պատճառված վնասի հատուցման անհրաժեշտության վերաբերյալ: Սա բացառիկ է այն առումով, որ այն հստակ չի նշում, որ օրենքը խախտողը պարտավոր է հատուցել խախտման հետևանքով պատճառված վնասը: Այնուամենայնիվ, 22-րդ և 28-րդ հոդվածները վկայակոչում են դրա հետ կապված վճարման ենթակա փոխհատուցումը: 22-րդ հոդվածը նախատեսում է, որ օրենսգրքի խախտման հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցումը չի բացառում իրավախախտում թույլ տված անձին վարչական կամ այլ (օրինակ՝ քրեական) պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: 28-րդ հոդվածը սահմանում է, որ մթնոլորտային օդի աղտոտման հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ (օրինակ՝ *հարկային օրենսգրքով*): Ուշադրություն դարձրեք, որ 28-րդ հոդվածը, որպես այդպիսին, վերաբերում է անձանց, այլ ոչ թե շրջակա միջավայրին հասցված վնասին: Հարկային օրենսգիրքը սահմանում է արտանետումների սահմանաչափերը գերազանցելու համար վճարման ենթակա փոխհատուցման մակարդակները (տե՛ս հոդված 167(3)): Օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետման թույլտվությամբ սահմանված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների գերազանցման դեպքում իրավաբանական կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձը կենթարկվի վարչական պատասխանատվության (հոդված 10(1)): Պատասխանատվությունը (և որևէ կողմից պատճառված վնասը հատուցելու անհրաժեշտությունը) ֆիզիկական անձին վերագրելը այն ընկերության փոխարեն, որի գործունեության հետևանքով է տեղի ունեցել աղտոտումը, օրենքի զարմանալի դրույթ է, քանի որ կարելի է ակնկալել, որ վերջինս իր տրամադրության տակ կունենա ավելի մեծ միջոցներ պատասխանատվությունը կրելու համար: Բացի այդ, գործնականում գուցե դժվար լինի պարզել, թե որ աշխատակիցն է պատասխանատու ապօրինի արտանետումների համար:

Պետք է նշել նաև ընդերքի մասին օրենսգրքով կիրառվող մոտեցումը, որը վերաբերում է ընդերքօգտագործողների կողմից ընդերքօգտագործման թափոնների կառավարման և թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումների իրականացումն ապահովելու համար ֆինանսական երաշխիք տրամադրելու անհրաժեշտությանը (հոդված 60.4(1)): Այս երաշխիքը պետք է ծածկի նաև այդ գործողությունների արդյունքում առաջացող թերությունները կամ պատճառված վնասները՝ հատուցումն ապահովելու նպատակով (հոդված 3(28.2)): Այսպիսով, երաշխիքը, որը կարող է համարվել ֆինանսական ապահովության ձև, պետք է լինի պետությանը վճարվող փոխհատուցման անհրաժեշտության դեպքում: Տրամադրվող երաշխիքի գումարի հաշվարկը կատարվում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման կամ վերամշակման պլաններով նախատեսված միջոցառումների հիման վրա (հոդված 60.4(2)): Դրա առկայությունը մեծացնում է հավանականությունը, որ խախտողը միջոցներ կունենա փոխհատուցում վճարելու համար, եթե, օրինակ, նա սնանկանա կամ այլ կերպ ի վիճակի չլինի կամ չցանկանա կրել այդ պարտքը, և դա պետք է դիտարկվի որպես լավ պրակտիկայի օրինակ: Այնուամենայնիվ, ինչպես մանրամասն նկարագրվում է ստորև Բաժին 4-ում, երաշխիքը պետք է նախատեսված լինի այնպես, որ (i) հուսալի լինի խախտողի սնանկության դեպքում, (ii) բավարար լինի պարտավորությունը ծածկելու համար, և (iii) անհրաժեշտության դեպքում հասանելի լինի:

Կարևոր է նկատել, որ պատճառահետևանքային կապի քաղաքացիական պատասխանատվության ավանդական դոկտրինը քիչ նմանություն ունի սույն օրենքներով նախատեսվածին: Դա պայմանավորված է նրանով, որ պատճառահետևանքային կապը ապացուցման կարիք չունի: Տեղի ունեցած արտանետումների միայն փաստը բավարար կլինի հաստատելու, որ վնաս է պատճառվել/տեղի ունեցել:

Պետությանը վճարման ենթակա հատուցման (օրինակ՝ վնասների) մակարդակը որոշվում է բնապահպանական պատասխանատվությանն անուղղակիորեն վերաբերող մի շարք օրենքներով, որոնք (i) կրում են կամ ընդհանուր բնույթ (օրինակ՝ հարկային օրենսգիրքը), կամ (ii) վերաբերում են կոնկրետ բնական ռեսուրսներին, մասնավորապես՝ ջրային ռեսուրսներին («Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշում), հողերին («Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշում), կենդանական և բուսական աշխարհին («Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» 2005 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՀ-88-Ն օրենք) և մթնոլորտային օդին («Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում): Պատասխանատվությանն անուղղակիորեն առնչվող այս օրենքները սահմանում են հատուցման չափը որոշելու բանաձևեր: Սա ակնհայտ հակասում է ԲՊԴ-ին, որը պահանջում է շրջակա միջավայրին հասցված իրական վնասի գիտական գնահատում:

Պատասխանատվության մասին ՀՀ օրենքները հիմնված են հիմնականում արտանետումների սահմանաչափերի վրա (այսինքն՝ բնական ռեսուրսների օգտագործման մակարդակի վրա, որը թույլատրվում է պատասխանատվությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող գործող օրենսդրությանը համապատասխան): Երկու կարևոր բացառություն կա: Նախ, «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշման գործողությունը բխում է շրջակա միջավայրի որոշակի անբարենպաստ փոփոխությունների առկայությունից (օրինակ՝ բերրիության նվազում և աղտոտվածության առկայություն), ինչը հանգեցնում է հողային ռեսուրսների աղտոտմանը: Երկրորդ, Ընդերքի մասին օրենսգիրքը բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող միակ օրենքն է, որում հիշատակվում է շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատումը: Այն նախատեսում է, որ վթարների դեպքում ընդերքօգտագործողը պարտավոր է կարգավորող մարմնին տրամադրել տեղեկատվություն, որն անհրաժեշտ է մարդու առողջության համար



հետևանքները նվազեցնելու և բնապահպանական վնասի չափը գնահատելու ու փաստացի կամ հնարավորինս նվազեցնելու համար (հոդված 60.6(7)): Սակայն պարզ չէ, թե ով պետք է իրականացնի գնահատումը՝ ընդերքօգտագործողը, թե կարգավորող մարմինը: Ավելին, մանրամասն տեղեկություններ չեն ներկայացվում, թե կոնկրետ ինչպես պետք է իրականացվի այդ գնահատումը և ինչ գիտական չափանիշների պետք է այն վերաբերի, ինչը վկայում է վնասի գնահատման ավելի գիտական ձևի պարտադրման ներկայիս լավագույն փորձի լուրջ բացերի մասին:

Նշված երկու բացառություններից բացի, պատասխանատվության մասին ՀՀ օրենքները, որպես կանոն, չեն պահանջում գիտական ապացույցներ առ այն, որ վնասը պատճառվել է օրենքը խախտողի կողմից: Ըստ էության, խիստ պատասխանատվություն կա սահմանաչափերը գերազանցելու համար: Նման կախվածությունը (i) համապատասխան սահմանաչափի և (ii) գերազանցված մակարդակի տարբերության միջև, սույն զեկույցի համատեքստում ունի երկու էական հետևանք: Նախ, Հայաստանի օրենսդրության համաձայն՝ վնասը սովորաբար առաջանում է անմիջապես այդ սահմանաչափերը գերազանցելուց հետո, թեկուզ աննշան: Սա հակասում է ԲՊԴ-ի պահանջներին: ԲՊԴ-ն կիրառելի է միայն այն դեպքում, եթե խախտվում է զգալիության շեմը և պահպանվում են համապատասխան բազային հասկացությունները: Երկրորդ, բացառությամբ Ընդերքի մասին օրենսգրքի, Հայաստանում համապատասխան բնական ռեսուրս(ներին) պատճառված վնասի փաստացի մակարդակի գնահատման անհրաժեշտություն չկա: Միայն սահմանաչափերի գերազանցման մակարդակի մասին իմացությունը բավարար է խախտողի կողմից պետությանը վճարման ենթակա հատուցման չափը պարզելու համար: Կրկին, սա հակասում է ԲՊԴ-ին, որը վնասը սահմանում է որպես «բնական ռեսուրսի չափելի անբարենպաստ փոփոխություն կամ բնական ռեսուրսների կողմից մատուցվող ծառայությունների որակի չափելի վատթարացում» (հոդված 2(2)):

Բնապահպանական պատասխանատվությանն անուղղակիորեն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր, մասնավորապես, «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը և «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշումը վնասի գնահատման մեջ ներառում են պատճառված վնասի վերացման կանխատեսվող արժեքը՝ օրենքը խախտողի կողմից պետությանը վճարվող վնասը հաշվարկելու համար, ինչը ճիշտ գործելակերպ է:

### 3.1.2.3. Տուգանք

Վերը նկարագրված որոշ օրենքներ նախատեսում են դրամական տուգանք կամ այլ ֆինանսական տույժ կիրառելու հնարավորությունը պատասխանատվությանն առնչվող կոնկրետ օրենքները և/կամ Քրեական օրենսգիրքը խախտելու համար: Սույն զեկույցի նպատակների համար օգտագործվող բնապահպանական պատասխանատվության սահմանումը՝ ֆինանսական պատասխանատվությունը (վարչական և/կամ քաղաքացիական) ապօրինի գործողությունների միջոցով շրջակա միջավայրին վնաս պատճառելու կամ հնարավոր վնաս հասցնելու հետ կապված ծախսերի համար, հստակ չի ներառում բնապահպանական օրենսդրության խախտման համար տուգանքի վճարումը: «Աղտոտողը վճարում է» սկզբունքը, ինչպես ձևակերպված է ԲՊԴ-ում, նպատակ չունի պատժել շրջակա միջավայրի վնաս հասցրած շահագործողին՝ տուգանք կամ քրեական պատիժ սահմանելով: Փաստացի, ԲՊԴ-ն չի նախատեսում տույժերի կիրառում բնապահպանական օրենսդրության խախտման համար (*Türkevei Tejtermelő Kft. v Országos Környezetvédelmi és Természetvédelmi Főfelügyelőség* [2017] EUECJ C-129/16, ԱԳ Կոկոտի եզրակացություն [26]): Այնուամենայնիվ, Հայաստանի բնապահպանական օրենքները վերլուծելիս տուգանքները հաշվի առնելը կարևոր է համարվում երկու պատճառով: Նախ, դրանք այդ օրենքների դրույթ են: Երկրորդ, որոշ անդամ պետությունների, այդ թվում՝ Հունգարիայի («Շրջակա միջավայրի պահպանության ընդհանուր կանոնների մասին» 1995 թվականի LIII օրենք) և Լատվիայի (Վարչական քրեական

օրենսգիրք) օրենքները նախատեսում են տուգանքների վճարում ԲՊԴ-ն կիրառող օրենքները խախտելու համար: Թեև ԲՊԴ-ն և դրա «աղտոտողը վճարում է» սկզբունքի հայեցակարգը դրանք չեն պահանջում, այնուամենայնիվ, դրանք որոշ անդամ պետությունների կողմից կիրառվող կանոնակարգերի դրույթ են:

Հայաստանի մի շարք բնապահպանական օրենքներ պահանջում են տուգանք վճարել դրանց խախտման համար: Օրինակ՝ «Բուսական աշխարհի մասին» օրենքի համաձայն՝ կարգավորող մարմինը պետք է վարչական տույժերի ենթարկի օրենքը խախտողներին (հոդված 30(գ)): Ջրային օրենսգրքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ Կարգավորող հանձնաժողովն իրավասու է տուգանք կիրառել Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում: 47.1-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է լիցենզավորված անձանց կողմից վճարման ենթակա տուգանքի չափը: Օրենսգրքի դրույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկից մինչև քառասունհազարապատիկի չափով: Տուգանքների գումարները փոխանցվում են պետական բյուջե (հոդված 47.1(3)): Ուղղակիորեն առնչվող մյուս օրենքների համեմատ՝ օրենսգիրքը եզակի է նրանով, որ այն հստակ սահմանում է տուգանքների չափը որոշակի ապօրինի գործողությունների համար: Եվ 117-րդ հոդվածի համաձայն՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի (ՋՌԿՊՄ) կողմից ներկայացված՝ խախտման մասին ծանուցագրի պահանջները չկատարելու համար տույժերը (այսինքն՝ տուգանքը) կիրառվում են չկատարման յուրաքանչյուր օրվա համար, որի դեպքում տույժն ավելանում է:

*Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը* պարունակում է մի գլուխ, որը մանրամասնում է շրջակա միջավայրի հետ կապված որոշակի վարչական իրավախախտումների նկատմամբ կիրառվող տուգանքների չափերը: Օրինակ՝ անտառային կենդանական աշխարհին վնաս հասցնելն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրվաթունապատիկի չափով (հոդված 78): Բրեական օրենսգիրքը, որը բնապահպանական հանցագործությունների մասին գլուխ է պարունակում, նախատեսում է նաև իրավախախտման համար մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ տուգանքի նշանակման հնարավորություն: Օրենսգիրքը սահմանում է, որ տուգանքի չափը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով հանցագործության ծանրությունը և դատապարտվողի գույքային դրությունը (հոդված 51(2)): Այստեղ պետք է երկու կարևոր դիտարկում անել: Նախ, դատարանն ունի գործողությունների զգալի ազատություն բնապահպանական օրենսդրությունը խախտողների կողմից վճարման ենթակա տուգանքների չափը որոշելիս: Սա կարող է դժվարացնել համարժեք խախտումների նկատմամբ հավասարաչափ վերաբերմունքը՝ ստեղծելով անհավասարության հավանականություն խախտողների միջև: Երկրորդ, օրենքը խախտողի ֆինանսական հզորությունը համապատասխան կլինի տվյալ առաջադրանքին, ինչը նշանակում է, որ հսկայական ֆինանսական ռեսուրսներ ունեցող ընկերությունները կարող են ավելի մեծ տույժի ենթարկվել, քան ֆիզիկական անձինք և/կամ ավելի քիչ ապահովված ընկերությունները:

#### *3.1.2.4. Կանխարգելիչ և/կամ վերականգնողական միջոցառումների իրականացման հետ կապված ծախսեր*

Պատասխանատվությանն ուղղակիորեն առնչվող մի շարք օրենքներ կարգավորող մարմնին լիազորություն են տալիս. (i) օրենքը խախտողից պահանջել ձեռնարկել խախտման մասին ծանուցագրում նշված միջոցները, կամ (ii) խախտողի կողմից պահանջի չկատարման դեպքում հայց ներկայացնել նրա դեմ՝ դատական կարգով պահանջելով փոխհատուցել աշխատանքի կատարման հետ կապված ծախսերը: Ծանուցագրում նշված միջոցառումներն, ըստ երևույթին, կարող են կանխարգելիչ և/կամ ուղղիչ բնույթ կրել:

*Անտառային օրենսգրքի* համաձայն՝ Անտառային պետական ծառայությունն իրավասու է ցուցումներ տալ անտառային օրենսդրության խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ (հոդված 26(3)(ե))։ Թեև այս դրույթը չի օգտագործում «վերականգնում, շտկում» բառը, «վերացում» բառի օգտագործումը ենթադրում է, որ համարժեք պատասխանատվություն է դրվում բնօգտագործողի վրա։ Այնուամենայնիվ, ինչպես առավել մանրամասն նշվում է սույն զեկույցի 4-րդ բաժնում, այս դրույթը հստակ չի ներկայացնում (i) այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատվի օրենսգրքով նախատեսված վերականգնումը (կամ, ավելի ճիշտ, «վերացումը»)՝ պարզելու, թե արդյոք կատարված աշխատանքները բավարար են, և (ii) ինչ պետք է տեղի ունենա, եթե հնարավոր չէ վերացնել խախտման հետևանքները։ 4-րդ բաժինը ցույց է տալիս, որ Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի համաձայն՝ լրացուցիչ վերականգնման հայեցակարգը նախատեսված է հենց վերջինիս ռիսկից պաշտպանվելու համար։ Չկա նաև անդրադարձ բնական ռեսուրսների ծառայությունների վրա ազդեցությանը և խախտողի կողմից դրանց խախտման համար համապատասխան միջոցների ձեռնարկմանը։ Նույնը վերաբերում է 34-րդ հոդվածի 1-ին մասի (ե) կետին, որը նախատեսում է, որ անտառօգտագործողները պարտավոր են «վերականգնել անտառօգտագործման հետևանքով անտառների և անտառային հողերին պատճառված վնասը»։ ԲԳԴ-ի համաձայն՝ փոխհատուցման վերականգնման հասկացություն գոյություն ունի նման ծառայությունների ժամանակավոր կորուստների հեռանկարի հետ կապված։

*Ջրային օրենսգիրքը* նախատեսում է, որ օրենսգրքի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կարգավորող հանձնաժողովն իրավասու է միջոցներ կիրառել մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելու, դրանից բխող գործողություններ կատարելու և դրանց կամ խախտումը վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ տալու (հոդված 47.1(1))։ Թեև բնապահպանական օրենքների, այդ թվում՝ ԲԳԴ-ի գուտ խախտումը (այսինքն՝ շրջակա միջավայրին վնաս չպատճառելը) չի դիտարկվի որպես աղտոտողի համար բնապահպանական պատասխանատվության ստեղծում, արժե դիտարկել այդ հնարավոր պատասխանատվությունը՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերականգնման պահանջների ցածր մակարդակը։ Այս պարտավորությունը, ըստ երևույթին, կարող է կիրառվել ինչպես կանխարգելիչ, այնպես էլ վերականգնողական միջոցառումների նկատմամբ։

Օրենսգիրքը նաև սահմանում է, որ եթե խախտողը ողջամիտ ժամանակահատվածում չի կատարում ՋՌԿԳՄ-ի կողմից տրված՝ խախտման ծանուցման մեջ պարունակվող հրահանգը, ապա ՋՌԿԳՄ-ն կարող է ապահովել հրահանգում նշված միջոցառումների իրականացումը (հոդված 117)։ Ըստ երևույթին, ծանուցման մեջ նշված միջոցառումները կարող են կանխարգելիչ կամ վերականգնողական բնույթ կրել և չեն սահմանափակվում վերջիններով։ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու դեպքում ՋՌԿԳՄ-ն պետք է հայց ներկայացնի դատարան՝ իր կատարած ծախսերը հավանական պատասխանատու անձանց լայն շրջանակից փոխհատուցելու համար։ Հատկանշական է, որ 177-րդ հոդվածի ձևակերպումը ենթադրում է, որ ՋՌԿԳՄ-ն կարող է միաժամանակ հայց ներկայացնել մեկից ավելի հավանական պատասխանատու անձանց դեմ։ Սա, իհարկե, առավելագույնի է հասցնում ծախսերի ամբողջական փոխհատուցման հավանականությունը, երբ մի կողմի միջոցները կարող են բավարար չլինել ՋՌԿԳՄ-ի նկատմամբ պարտավորությունները մարելու համար։ Ջրային օրենսգրքի համաձայն՝ օրենսգրքի և դրա հետ կապված փաստաթղթերի պահպանումն ապահովելու համար կարգավորող մարմինը կարող է պահանջել պատշաճ հուսալիության (այսինքն՝ ֆինանսական ապահովում) երաշխիք՝ որպես թույլտվության տրամադրման պայման։ Հուսալիության երաշխիքը կարող է լինել որևէ բանկից վարկի տրամադրման երաշխավորագրի, բանկային երաշխիքի, ապահովագրության կամ հուսալիության ապահովման որևէ այլ ընդունված փաստաթղթի տեսքով (հոդված 118)։

Ի վերջո, Հոդված 37.1.1-ը նախատեսում է Ջրային ռեսուրսների պահպանության դրամագլխի ստեղծումը (այսուհետ՝ Ջրային ռեսուրսների պահպանության դրամագլուխ), որին հատկացումներ կատարելու ջրօգտագործողի պարտականությունը ներառվում է ջրօգտագործման թույլտվության մեջ։ Ջրային ռեսուրսների պահպանության դրամագլխի

գումարները փոխանցվում են կենտրոնական գանձապետարանում բացված՝ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի արտաբյուջետային հաշվեհամարին և օգտագործվում են բացառապես ստորերկրյա ջրերի արդյունահանումից հետո հորատանցքերի կոնսերվացման կամ լուծարման համար:

*Ընդերքի մասին օրենսգրքի* 69-րդ հոդվածը նույնպես նախատեսում է ընդերքօգտագործողների կողմից կատարվող հատկացումների հաշվին շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի ստեղծումը (այսուհետ՝ «Դրամագլուխ»): Ընդերքօգտագործողների կողմից դրամագլխին հատկացումների չափերի և վճարվող գումարների հաշվարկման կարգը սահմանում է կառավարությունը (հոդված 69.1) և մանրամասն ներկայացված է սույն զեկույցի Հավելված 1-ում: Դրամագլխի գումարները պահվում են կենտրոնական գանձապետարանում բացված լիազոր մարմնի արտաբյուջետային հաշվում և բացառապես օգտագործվում են՝ (i) ընդերքօգտագործողի կողմից իրականացվող ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման, (ii) ընդերքօգտագործողի կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման, (iii) տվյալ ընդերքօգտագործողի գործունեության հետևանքով փաստացի խախտված հողերի վերականգնման նպատակով (հոդված 69.3): Դրամագլխից ընդերքօգտագործողին տրամադրվող գումարը չի կարող գերազանցել դրամագլխին ընդերքօգտագործողի կատարած հատկացումները (հոդված 69.4): Անհրաժեշտ միջոցառումները և օրենսդրության բոլոր պահանջները կատարելուց հետո ցանկացած չձախսված գումարի մնացորդը վերադարձվում է ընդերքօգտագործողին (հոդված 69.5): Թեև ռեկուլտիվացիան իրական վերականգնողական միջոց չէ այն իմաստով, որ դա ոչ թե արձագանք է բնապահպանական աղետին, այլ ավելի շուտ՝ ընդերքօգտագործողին տրված թույլտվությամբ սահմանված միջոց, ընդհանուր առմամբ, իրական վերականգնողական միջոցները ներառում են ռեկուլտիվացման պահանջներ, այսինքն՝ շրջակա միջավայրին հասցված՝ բացահայտված ցանկացած վնաս ենթակա է վերացման:

**Աղյուսակ 1. Խախտման դեպքում ՀՀ օրենսդրությանը համապատասխան կիրառվող բնապահպանական պատասխանատվության տեսակները**

*«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը և «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշումը*

	Նորմատիվ իրավական ակտ	Բնօգտագործման վճար	Հատուցում	Տուգանք	Կանխարգելիչ և վերականգնողական միջոցառումներ
1	<b>«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենք</b>	Այո (բայց նախատեսված է Հարկային օրենսգրքով, տե՛ս հոդվածներ 166(1)(1) և 167)	Այո (բայց նախատեսված է Հարկային օրենսգրքով, տե՛ս հոդվածներ 166(1)(1) և 167)	Ենթադրյալ (անուղղակի վկայակոչում հոդված 10(1)-ում)	Ոչ
2	<b>«Բուսական աշխարհի մասին» օրենք</b>	Այո (հոդված 22 և 27(գ))	Այո (հոդված 30(գ))	Այո (հոդված 30(գ))	Ոչ
3	<b>«Կենդանական աշխարհի մասին» օրենք</b>	Այո (հոդված 29(է))	Այո (հոդված 29(ը))	Ենթադրյալ (հոդված 33)	Ոչ

4	<b>Ջրային օրենսգիրք</b>	Այն (հոդված 76 և 77)	Այն (հոդված 116)	Այն (հոդված 67, 47.1(1), 113, 114 և 117)	Ենթադրյալ (հոդված 47.1 և 117)
5	<b>Անտառային օրենսգիրք</b>	Այն (հոդված 56(1))	Այն (հոդված 26(3)(գ)), 34(1)(է) և 61)	Այն (հոդված 26(3)(գ))	Ենթադրյալ (հոդված 26(3)(ե) և 34(1)(է))
6	<b>«Ընդերքի մասին» օրենսգիրք</b>	Այն (հոդված 4(1)(10), 10(1) և 61)	Ենթադրյալ (հոդված 3.28(2) և 78(1)) (նաև նախատեսվում է <Նարկային օրենսգրքով, տե՛ս հոդված 170)	Implied (article 78(1))	Ենթադրյալ (հոդված 30(5)(8) և 60.5(1))
7	<b>«Վարչական իրավախախտումների մասին» օրենսգիրք</b>	Ոչ	Ոչ	Այն (օր., հոդված 60.1 և 62)	Ոչ
8	<b>Քրեական օրենսգիրք</b>	Ոչ	Ոչ	Այն (օր., հոդված 51(2) և 287)	Ոչ
9	<b>«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշում</b>	Ոչ	Այն (տե՛ս օր., հոդված 7, որը սահմանում է վնասի հաշվարկման բանաձև)	Ոչ	Ոչ
10	<b>«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշում</b>	Ոչ	Այն (տե՛ս օր., հոդված 6, որը սահմանում է վնասի հաշվարկման բանաձև)	Ոչ	Ոչ
11	<b>«Ընտանիքային իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» օրենք</b>	Ոչ	Այն (տե՛ս օր., հոդված 3, որը սահմանում է վնասի սակագները)	Ոչ	Ոչ
12	<b>«Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» որոշում</b>	Ոչ	Այն (տե՛ս օր., հոդված 6, որը սահմանում է վնասի հաշվարկման բանաձև)	Ոչ	Ոչ
13	<b>Հարկային օրենսգիրք</b>	Այն (տե՛ս, օրինակ, հոդված 204)	Այն (տե՛ս օր., հոդված 167(3))	Ոչ	Ոչ

### 3.2. Հայաստանի մոտեցումները շրջակա միջավայրին հասցվող վնասը կանխարգելելու վերաբերյալ

Բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող օրենքները, որոնք մանրամասն նկարագրված են 3.1.1 բաժնում, ներառում են վնասի կանխարգելման վերաբերյալ մի շարք դրույթներ: Այս բաժինը կենտրոնացած է դրանց վրա: 3.1.2 բաժնում մանրամասն նկարագրված անուղղակի նորմատիվ իրավական ակտերը չեն դիտարկվի: Իրավական պատասխանատվություն սահմանելով կիրառելի օրենքների խախտումների համար՝ այդ դրույթները ստեղծում են տնտեսական *խթաններ*՝ առաջին հերթին այդ օրենքների խախտումը կանխելու համար: Կարելի է համարել, որ սա արտացոլում է կանխարգելման սկզբունքի տրամաբանությունը, առնվազն այնպես, ինչպես հասկացվում է ԵՄ բնապահպանական օրենսդրության համատեքստում: Սակայն, անուղղակիորեն առնչվող այս օրենքներն, ընդհանուր առմամբ, (հավանական) խախտողներից չեն պահանջում կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել՝ խախտումից խուսափելու կամ, եթե դա տեղի է ունենում, վիճակի վատթարացումը կանխելու համար: Ուստի դրանք երկրորդական նշանակություն ունեն Հայաստանի օրենսդրությանը համապատասխան շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման հարցը սույն գեկույցում քննարկման համար: Եվ այնուամենայնիվ, կանխարգելման միջոցառումներին նպաստելու համար ուժեղ տնտեսական խթանների կարևորությունը առավել մանրամասն քննարկվում է 4-րդ բաժնում:

Այժմ կուսումնասիրենք բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող օրենքները, որոնք մանրամասն նկարագրված են Բաժին 3.1.1-ում՝ հատուկ ուշադրություն դարձնելով դրանցում պարունակվող կանխարգելիչ գործողություններին, որոնք նման են ԲՊԴ-ով պահանջվող միջոցառումներին: Քիչ բան կարելի է ստանալ շրջակա միջավայրի կանխարգելմանը և պահպանությանը վերաբերող՝ օրենսդրական այս ակտերում մանրամասն նկարագրված *բոլոր* գործողությունների դուրսբերումից և քննարկումից: Բացառություն է կազմում «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը: Թեև մթնոլորտային օդին հասցվող վնասը չի դիտարկվում ԲՊԴ-ով (այսինքն՝ այն չի համարվում «շրջակա միջավայրին հասցված վնաս»), այս օրենքը կարող է լրացնել այս ԲՊԴ-ի թողած բացը:

ԲՊԴ-ի կանխարգելման պահանջները Հայաստանի բնապահպանական օրենսդրության պահանջների հետ համեմատելիս պարզ է դառնում չորս բան: Նախ, վերջինս նշանավորվում է բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող իր օրենքների շարքում բնօգտագործողին ներկայացվող պահանջների բացակայությամբ, որոնք նախատեսում են անհապաղ անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել այն դեպքերում, երբ շրջակա միջավայրին վնաս դեռ չի հասցվել, բայց դրա առաջացման անմիջական վտանգը կա: Թեև ՀՀ օրենքներում պարբերաբար հիշատակվում են կանխարգելման մասին, այդ պարտավորությունները անորոշ են, հիմնական տերմինները սահմանված չեն և, ըստ էության, դրանք ուղղակիորեն կապված չեն բնապահպանական վնասի հասկացության հետ, ինչպես դա հասկացվում է ԲՊԴ-ում: Երկրորդ՝ երկու իրավակարգերներն էլ պետությունից չեն պահանջում կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել այն դեպքերում, երբ պատասխանատու կողմն ինքը դա չի անում՝ լինի դա իր անվճարունակության, թե պարզապես դրանք կատարելուց հրաժարվելու պատճառով: Երրորդ, Հայաստանի բնապահպանական օրենսդրությունը, ընդհանուր առմամբ, կարծես թե համապատասխան կարգավորող մարմնին լիազորություն չի վերապահում իր կողմից ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների համար իրականացված ծախսերի դիմաց որպես երաշխիք վերցնել բնօգտագործողի գույքը (այսինքն՝ բռնագանձել), օրինակ՝ անշարժ գույքը, բնօգտագործողի կողմից չվճարման դեպքում, ինչպես պահանջվում է ԲՊԴ-ով: Չորրորդ, ՀՀ օրենսդրության համաձայն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, սահմանափակ բացառությամբ, իրական հնարավորություն չունեն համապատասխան կարգավորող մարմնին ներկայացնել շրջակա միջավայրին վնաս հասցնելու անմիջական վտանգի մասին իրենց հայտնի դեպքերի վերաբերյալ դիտարկումները և խնդրել կարգավորող մարմնին միջոցներ ձեռնարկել, ինչը ԲՊԴ-ի և ս մեկ պահանջ է:

Բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն առնչվող օրենքներից, որոնք մանրամասն նկարագրված են 3.1.1 բաժնում, կարելի է առանձնացնել շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման չորս մոտեցում. (i) կարգավորող մարմնի պահանջով կամ առանց դրա կանխարգելիչ միջոցառումների իրականացում, (ii) «Կարմիր գրքերի» օգտագործում, (iii) աղետալի իրավիճակների պարտադիր կանխատեսում, և (iv) խախտումների մասին կարգավորող մարմնին տեղեկացում: Դրանց ուսումնասիրությունը ներկայացվում է ստորև:

### 3.2.1. Կանխարգելիչ միջոցառումների իրականացում

Կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ բնօգտագործողներին ներկայացվող պահանջը կանխարգելման ամենատարածված մոտեցումն է: Որոշ օրենքներ նախատեսում են կողմերի կողմից նման միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը: Օրինակ, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի համաձայն՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութեր և ջերմոցային գազեր արտանետող անշարժ աղբյուրներ ունեցող իրավաբանական անձինք և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք պարտավոր են, ի թիվս այլոց, հետևողականորեն բարելավել տեխնոլոգիական պրոցեսները՝ ներդնելով լավագույն հասանելի տեխնոլոգիաներ, իրականացնել աղտոտող նյութերի արտանետումների որսումը, օգտահանումը, վնասագերծումը, ինչպես նաև այդ արտանետումների կրճատմանը կամ բացառմանն ուղղված միջոցառումներ (հոդված 21(1)):

«Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» օրենքները բուսական և/կամ կենդանական աշխարհի օբյեկտներն օգտագործողներից պահանջում են, ի թիվս, այլոց ապահովել այդ օբյեկտների պահպանությունը և իրականացնել դրանց վերարտադրության և պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումներ (համապատասխանաբար 27 և 29 հոդվածներ): Մինչդեռ, *Ջրային օրենսգրքով* սահմանվում է, որ ջրային ռեսուրսներին հարակից հողերի սեփականատերը կամ օգտագործողը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ կանխելու ջրային ռեսուրսի հետ կապված էկոլոգիական համակարգին սպառնացող վտանգը (հոդված 98): Եթե կարգավորող մարմինը տեղեկանում է Օրենսգրքի պահանջների խախտման մասին, ապա պետք է տվյալ անձին ծանուցի այդ մասին (հոդված 117): Ծանուցագրով կարող է պահանջվել գործունեության անհապաղ դադարեցում՝ մինչև հարցի լուծումը: Եթե Օրենսգրքը խախտող անձը ողջամիտ ժամկետում չի կատարում ծանուցման մեջ պարունակվող հրահանգը, ապա ՋՌԿՊՄ-ն կարող է ապահովել հրահանգում նշված միջոցառումների իրականացումը (հոդված 117): Ինչպես մանրամասն նկարագրված է վերևում, կանխարգելիչ միջոցառումները կարող են, ըստ երևույթին, նշված լինել ծանուցման մեջ: 117-րդ հոդվածից պարզ է դառնում, որ ՋՌԿՊՄ-ն կարող է ինքնուրույն կատարել անհրաժեշտ (չկատարված) աշխատանքները և փորձել դրանց հետ կապված ծախսերը ետ ստանալ անձանց լայն շրջանակից, որն, ըստ երևույթին, ներառում է իրավաբանական և ֆիզիկական անձինք: Այս լիազորությունը կարող է օգտակար լինել այն խախտումների համատեքստում, որոնք (i) դեռևս վնաս չեն հասցրել շրջակա միջավայրին, և (ii) հանգեցրել են նման վնասի, սակայն դրա ազդեցությունը կարող է նվազեցվել, օրինակ՝ աղտոտիչների արտահոսքը տեղայնացնելուն ուղղված արագ միջոցառումների միջոցով: Հետևաբար, այն ունի իրական կանխարգելիչ ներուժ:

*Անտառային օրենսգրքը* պահանջում է, որ անտառի սեփականատերերը և անտառային տնտեսություն վարողները իրականացնեն մի շարք կանխարգելիչ միջոցառումներ, ներառյալ անտառային հրդեհների հայտնաբերումն ու կանխումը, հակահրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների վնասակարության կանխարգելումը (հոդվածներ 5 և 19): Կարգավորող մարմիններն իրավասու են իրականացնել այդ ռիսկերի արձագանքման միջոցառումներ (հոդված 7): Անտառօգտագործողները պարտավոր են, ի թիվս այլոց, կանխարգել հողատարման առաջացումը և անտառների վիճակի վրա այլ բացասական ազդեցությունները, պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և իրականացնել հակահրդեհային միջոցառումներ

(հոդված 34(1)): Հրդեհային անվտանգության հետ կապված միջոցառումների անհրաժեշտությունը օրենսգրքի հիմնական առանձնահատկությունն է:

Ի վերջո, Ընդերքի մասին օրենսգրքի համաձայն, հանքի շահագործման ընթացքում և դրա փակումից հետո ընդերքօգտագործողները պարտավոր են իրականացնել թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումներ՝ շրջակա միջավայրին կամ մարդու առողջությանը հասցվող վնասի և վթարների կանխարգելման կամ նվազագույնի հասցնելու նխատակով (հոդված 60.1(2)): 60.1(2) հոդվածում նշված միջոցառումները պետք է իրականացվեն առկա լավագույն տեխնոլոգիայի կամ բնապահպանական իմաստով լավագույն տնտեսական գործունեության կիրառմամբ (հոդված 60.1(3)): Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը և վերամշակումը պետք է իրականացվի առանց մարդու առողջությանը վնաս պատճառելու և կիրառելով գործընթացներ կամ տեխնոլոգիաներ, որոնք նվազագույնի կհասցնեն շրջակա միջավայրին՝ ջրին, մթնոլորտային օդին, հողին, կենդանական և բուսական աշխարհին պատճառվող վնասը (հոդված 60.1(1)): Հոդված 60.6(1)-ի համաձայն՝ ընդերքօգտագործողը պատասխանատվություն է կրում ընդերքօգտագործման թափոնների օբյեկտների անվտանգության ապահովման, անվտանգության կառավարման ընթացակարգերի մշակման և կիրառման, ինչպես նաև անվտանգության բարձրացման և ռիսկերի նվազեցման համար տեխնոլոգիական և կառավարչական համակարգերի օգտագործման համար: Ընդերքօգտագործման գործունեություն սկսելուց առաջ յուրաքանչյուր ընդերքօգտագործող պարտավոր է, ի թիվս այլոց, մշակել վթարների կանխարգելմանն ուղղված միջոցառումներ և նախաձեռնի դրանց իրականացումը, ինչպես նաև մշակել արտակարգ իրավիճակներում գործելու պլան՝ նշելով այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու վթարների կանխարգելմանը, հետևանքների նվազեցմանը, իրենց աշխատակիցների և հնարավոր վտանգավոր ազդեցության գոտում բնակվող բնակչության պաշտպանությանը (հոդված 60.6(3)): Արտակարգ իրավիճակներում գործելու պլանի հիմնական նպատակներն են՝ ապահովել մարդկանց առողջությունը և շրջակա միջավայրը վթարներից և այլ միջադեպերի ազդեցություններից պաշտպանելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը, ինչպես նաև վթարներից հետո շրջակա միջավայրի վերականգնման ու մաքրման աշխատանքների նախատեսումը (հոդված 60.6(6)):

### 3.2.2. «Կարմիր գրքերի» օգտագործում

«Բուսական աշխարհի մասին» և «Կենդանական աշխարհի մասին» օրենքները նախատեսում են Կարմիր գրքերի ստեղծում: Դրանք պետք է վարվեն հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող տեսակների հաշվառման, պահպանության, վերարտադրության և օգտագործման նպատակով (հոդված 14): Կարմիր գրքում գրանցման հիմք են դառնում տեսակների թվաքանակի և տարածման սահմանների կրճատման, գոյության պայմանների վատթարացման և անհետացման վտանգի վերաբերյալ տվյալները: Հոդօգտագործողները, որոնց տարածքներում աճում են Կարմիր գրքում գրանցված տեսակներ, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար (հոդված 17): «Բուսական աշխարհի մասին» օրենքի համաձայն՝ բուսական աշխարհի օբյեկտներն օգտագործողը պարտավոր է, ի թիվս այլոց, ապահովել բուսական աշխարհի՝ իրեն հատկացված օբյեկտների պահպանությունը և իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ՝ բուսական աշխարհի օբյեկտների վերարտադրության և պաշտպանության նպատակով (հոդված 27): «Կենդանական աշխարհի մասին» օրենքի համաձայն՝ բնական պաշարներն օգտագործողները, որոնք տնտեսական կամ այլ աշխատանքների ընթացքում վնաս են հասցնում Կարմիր գրքում գրանցված կենդանիներին, պարտավոր են միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար (հոդված 18): Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման իրավունքը դադարում են, ի թիվս այլոց, պաշտպանական միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը խախտելու դեպքում:



### 3.2.3. Աղետալի իրավիճակների կանխատեսում

*Ջրային օրենսգրքի* 91-րդ հոդվածը նախատեսում է ջրային ոլորտում աղետների դեմ պայքարի և դրանց պատճառած վնասները ժամանակին նվազեցնելու համար տեղեկատվական համակարգի ստեղծում: Այս համակարգը, որը ոչ մի այլ օրենքում չի հայտնաբերվել, ներառում է աղետալի իրավիճակների առաջացման հնարավորության վերաբերյալ կանխատեսումների նախապատրաստում: Կանխատեսումները վերաբերում են տեղի ունեցած կամ հնարավոր հեղեղումներին, սելավներին և սողանքներին, տեղի ունեցած կամ սպասվող երաշտին, բնական ջրային ռեսուրսների վիճակին և կայունությանը, կարևոր ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամբարների պատվարների, գետերի ափապաշտպան ամբարտակներին, ինչպես նաև բնակչության առողջությանն սպառնացող վտանգների:

### 3.2.4. Խախտումների մասին կարգավորող մարմնին տեղեկացում

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքը բացառիկ է այն առումով, որ սա սակավաթիվ այն օրենքներից է, որը պահանջում է համապատասխան կարգավոր մարմնին տեղեկացնել շրջակա միջավայրին սպառնացող վտանգի մասին: 21(1) հոդվածի համաձայն՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութեր և ջերմոցային գազեր արտանետող անշարժ աղբյուրներ ունեցող իրավաբանական անձինք և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք պարտավոր են անհապաղ կարգավորող մարմնին տեղեկացնել մարդկանց կյանքին կամ առողջությանը սպառնացող կամ նման ներուժ ունեցող մթնոլորտային աղտոտում առաջացնող վթարային արտանետումների մասին: Սակայն, կարծես թե, արտանետումներն արդեն տեղի են ունենալու, ինչը նշանակում է, որ դրանց կանխարգելումն այլևս հնարավոր չէ: Մինչդեռ, *Անտառային օրենսգրքի* համաձայն՝ Անտառային կոմիտեն, ի թիվս այլոց, պատասխանատու է խախտումների հայտնաբերման ու կանխարգելման համար, ինչպես նաև բնապահպանական պետական վերահսկողություն իրականացնող մարմնին և իրավապահ մարմիններին անհապաղ տեղեկություններ տրամադրելու համար (հոդված 7.1(2)(22):

## 3.3 Հայաստանի մոտեցումները շրջակա միջավայրին հասցվող վնասը գնահատելու վերաբերյալ

Այս բաժնում մանրամասն նկարագրվում են բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն և անուղղակիորեն վերաբերող ՀՀ օրենսդրության համաձայն կիրառվող՝ օրենսդրության խախտման հետևանքով առաջացած վնասի գնահատման մոտեցումները: Պարզ կդառնա, որ ի տարբերություն ԲՊԳ-ի համաձայն վնասի գնահատման, որը նպատակ ունի գիտականորեն պարզել, թե արդյոք շրջակա միջավայրին վնաս է հասցվել, Հայաստանում վնասի գնահատումը կարող է ավելի ճշգրիտ ընկալվել որպես բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման կամ դրանց վրա սահմանված բացասական ազդեցության դեպքում պետությանը վճարման (կամ հատուցման) ենթակա վնասի մակարդակի գնահատում:

Վնասը գնահատելիս կիրառվում են բանաձևեր, որոնք այս գեկույցում նշվում են որպես անուղղակի միջոց: Դրանք օգտագործվում են բնօգտագործողների կողմից պետությանը վճարվելիք հատուցումը հաշվարկելու համար: *Հարկային օրենսգիրքն*, օրինակ, գլխավոր դեր է խաղում բնապահպանական օրենքների խախտման հետևանքով պատճառված վնասի գնահատման անուղղակի միջոցների սահմանման գործում: Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ դա վերաբերում է ոչ թե բուն շրջակա միջավայրին հասցված վնասի իրական չափերին, այլ ավելի շուտ թույլտվության, լիցենզիայի կամ օգտագործման այլ թույլտվության մեջ նշված բնօգտագործման սահմանաչափերը խախտելու համար վճարման ենթակա *վնասների* չափերին: Կան նաև պատասխանատվությանն անուղղակիորեն առնչվող մի շարք օրենքներ, որոնք սահմանում են կոնկրետ բնական ռեսուրսներին, մասնավորապես, ջրային ռեսուրսներին

(«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը, հողային ռեսուրսներին («Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշում), բուսական և կենդանական աշխարհին («Բնապահպանական իրավաստիպատումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» 2005 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՕ-88-Ն օրենք) և մթնոլորտային օդին («Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում) հասցված վնասի հատուցման չափը հաշվարկելու բանաձևեր:

«Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը և «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշումը, վնասները հաշվարկելու նպատակով, պատճառված վնասի վերացման կանխատեսվող ծախսերը ներառում են վնասի գնահատման մեջ, ինչը լավ գործելակերպ է:

Բնապահպանական պատասխանատվության մասին ՀՀ օրենսդրության մեջ, ընդհանուր առմամբ, բացակայում է շրջակա միջավայրին հասցված վնասի գիտական գնահատման անհրաժեշտությունը: Մի փոքր բացառությամբ, միայն սահմանաչափերի գերազանցման մակարդակի մասին իմացությունը բավարար է խախտողի կողմից պետությանը վճարման ենթակա փոխհատուցման չափը պարզելու համար: *Ընդերքի մասին» օրենսգիրքը* բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող միակ օրենքն է, որում հիշատակվում է շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատումը: Օրենսգիրքը նախատեսում է, որ վթարների դեպքում ընդերքօգտագործողը պարտավոր է կարգավորող մարմնին անհապաղ տրամադրել այն տեղեկատվությունը, որ պահանջվում է մարդու առողջության համար դրանց հետևանքները նվազեցնելու և բնապահպանական վնասի չափը գնահատելու ու փաստացի կամ հնարավորինս նվազեցնելու համար (հոդված 60.6(7)): Ոչ միայն պարզ չէ, թե ով պետք է իրականացնի գնահատումը (ընդերքօգտագործողը, թե կարգավորող մարմինը), այլ ոչ մի մանրամասն չի ներկայացվում, թե կոնկրետ ինչպես պետք է իրականացվի այդ գնահատումը կամ գիտական չափանիշները, որոնց պետք է հղում կատարել, նույնպես չեն ներկայացվում: Լավ կլիներ, եթե այս տեսակի տեղեկատվությունը նախատեսվեր օրենսգրքում, քանի որ դա կնպաստի վնասի գիտական գնահատման ավելի հետևողական մոտեցման ձևակերպմանը: Մինչդեռ, վթարների դեպքում մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար, կառավարությունը, ի թիվս, այլոց, կսահմանի վնասի չափը գնահատելու պահանջները և այդ վնասը նվազեցնելու եղանակները (հոդված 60.6(8)): Այս դրույթների ձևակերպումը ենթադրում է, կարգավորող մարմնի հայեցողական որոշումներ կայացնելու իրավասությունների շրջանակում է՝ որոշել, թե ինչպես պետք է այն իրականացվի:

Վնասի գնահատման վերաբերյալ ուղեցույցների ընդհանուր բացակայությունը հատկապես ակնհայտ է *քրեական օրենսգրքով* քրեական պատասխանատվություն սահմանելու համատեքստում: Թեև սա սույն գեկույցում օգտագործվող բնապահպանական պատասխանատվության նկարագրությունից ակնհայտ դուրս է, այնուամենայնիվ, այս օրենսգրքի դիտարկումը օգտակար է, քանի որ այն ընդգծում է բնապահպանական օրենսդրության հիմնական շեմային տերմինների հստակ իրավական սահմանումներ ունենալու կարևորությունը: Օրենսգրքում նշված պատասխանատվության իրավական շեմերի լայն շրջանակ կա՝ «Էական փոփոխություն» (օրինակ՝ հոդված 281), «ծանր հետևանքներ (օրինակ՝ հոդված 281), «մարդու առողջությանը կամ շրջակա միջավայրին էական վնաս պատճառելու վտանգ» (օրինակ՝ հոդված 284(1)), «էական վնաս» (օրինակ՝ հոդված 287(1)), «շրջակա միջավայրին պատճառված էական վնաս» (հոդված 290(1)), «զանգվածային ոչնչացում» (հոդված 293), «խոշոր վնաս» (հոդված 294(1)), «բնաջնջում» (հոդված 295) և «խոշոր վնաս» (հոդված 297): 51-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ տուգանքի չափը դատարանը որոշում է՝ հաշվի առնելով կատարված հանցագործության «ծանրությունը» և

դատապարտվողի «գույքային դրությունը»: Սակայն, ներկայիս կարգավորող դաշտի էական բացն այն է, որ չկան սահմանված միջոցներ՝ գիտական կամ այլ, գնահատելու այն կետը, որտեղ խախտվել են այդ շեմերը (օրինակ՝ շրջակա միջավայրին հասցված էական վնասը): Նույնը կարելի է ասել *Անտառային օրենսգրքի* մասին: 60-րդ հոդվածի «Ժ» կետը սահմանում է, որ «ջրերն աղտոտելու հետևանքով անտառային տնտեսությանն էական վնաս պատճառելը» օրենսգրքով նախատեսված իրավախախտում է: Այնուամենայնիվ, չկա դրա գնահատման որևէ ուղեցույց:

*«Հարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգիրքը* թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես կարող է ընկալվել «էական վնասը» ՀՀ օրենսդրության համաձայն: Օրենսգրքի 61-րդ հոդվածը, օրինակ, իրավախախտում է սահմանում ջրային ռեսուրսների պահպանության կանոնները խախտելը: Այն պնդում է, որ էական վնաս է առաջանում, երբ պատճառված նյութական վնասը գերազանցում է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը: Այս շեմը կիրառվում է մեկ այլ իրավախախտման դեպքում, մասնավորապես հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության նորմերի խախտման համար (հոդված 63.4): Ըստ երևույթին, օրենսգրքով զգալիության շեմը որոշվում է՝ ելնելով բնական ռեսուրսին հասցված վնասի դրամական արժեքից: Այնուամենայնիվ, չկա որևէ ուղեցույց, թե ինչպես պետք է պաշտոնատար անձինք նման որոշում կայացնեն: Չզալիության շեմի օգտագործումը օրենսգրքի շրջանակներում համեմատաբար հազվադեպ է և անհամապատասխան:

Հայաստանում որդեգրված մոտեցումը հիմնականում հանգեցնում է պարզեցված գնահատման, որը փորձագետներից չի պահանջում տվյալների հավաքագրում և գնահատումների իրականացում ԲՊԴ-ով պահանջվող օբյեկտիվ, գիտական եղանակով: Այն նաև չի ենթադրում թանկարժեք տվյալների հավաքագրում և տնտեսական գնահատում: Հետևաբար, կարգավորող մարմինների համար այս տեսակի պարզեցված գնահատում իրականացնել ավելի հեշտ է, արագ և էժան: Ակնհայտ թերությունը, սակայն, այն է, որ վնասի գնահատումը ոչ մի կապ չունի սահմանաչափերը գերազանցելու հետևանքով առաջացած բնապահպանական վնասի իրական մակարդակի հետ: Սա նշանակում է, որ բնօգտագործողները, հնարավոր է, ոչ պատշաճ կերպով հաշվի առնեն բնապահպանական ծախսերը, շրջակա միջավայրի վրա բացասական ծախսերի հատուցումը կմնա այլոց վրա, նույնիսկ եթե բնօգտագործողը վճարել է հատուցում: Այնուամենայնիվ, կարևոր է նշել, որ բնօգտագործողի կողմից իր թույլտվությամբ նախատեսված սահմանաչափերը գերազանցելու հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի համար վճարվող գումարների չափը որոշելու մեթոդաբանությունը ինքնին սխալ, անհամապատասխան կամ էապես անհամատեղելի չէ «աղտոտողը վճարում է» սկզբունքի հետ, ինչպես դա հասկացվում է ԵՄ բնապահպանական օրենսդրության մեջ: Սակայն գործակիցները (բազմապատկիչները) պետք է լինեն թափանցիկ, արդարացված, ոչ խտրական, իսկ դրանց կառուցումն ու իրականացումը որոշող քաղաքականությունը պետք է լինի համահունչ և հստակ ձևակերպված:

### 3.3.1. Հարկային օրենսգրքի գերիշխող դերը

*Հարկային օրենսգիրքը* կարևորագույն դեր է խաղում Հայաստանի օրենսդրությանը համապատասխան վնասի գնահատման (կամ, ըստ էության, բնական պաշարների ապօրինի օգտագործման դիմաց վնասի վճարման) գործում: 43-րդ հոդվածի համաձայն՝ «հարկային պարտավորություն» նշանակում է որևէ տեսակի հարկի և/կամ վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և/կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և/կամ ՀՀ օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև *վնասի հատուցման* գումարներ վճարելու՝ հարկ վճարողի պարտավորությունը: Սա կներառի վերը նկարագրված պատասխանատվությանն «ուղղակիորեն» վերաբերող օրենքները: Օրենսգրքի 30-րդ գլուխը մանրամասնում է բնապահպանական հարկերի նկատմամբ կիրառվող օրենսդրությունը:

Օրենսգիրքը սահմանում է բնօգտագործման վճարի բազայի չափաբանակները, որոնք նախատեսված են բնօգտագործման վճարի հաշվարկման և դրույքաչափերի կիրառման համար

(հողված 203): Սա ներառում է մակերևութային ջրերի օգտագործման համար՝ ջրային օրենսգրքի համաձայն տրամադրված թույլտվություններով սահմանված ջրօգտագործման ծավալները և ընդերքի օրենսգրքի համաձայն ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված օգտակար հանածոների մարման ընդհանուր ծավալները: 204-րդ հողվածը, օրինակ, սահմանում է մակերևութային ջրերի օգտագործման համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը: Օրենսգրքի 203-րդ հողվածի 1-ին մասով սահմանված՝ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում կիրառվում է 204-րդ հողվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույքաչափերի եռապատիկ մեծությունը: 208-րդ հողվածը սահմանում է կենսապաշարների, օրինակ՝ բուսական աշխարհի օբյեկտների, բնօգտագործման վճարի դրույքաչափերը Օրինակ՝ 208-րդ հողվածի 2-րդ մասը սահմանում է, որ 203-րդ հողվածով սահմանված բնօգտագործման վճարի բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում՝ բնափայտի և երկրորդական անտառանյութի օգտագործման (մթերման) համար չափաքանակները գերազանցող՝ ծառի յուրաքանչյուր տեսակի օգտագործման (մթերման) փաստացի ծավալների համար կիրառվում է սույն հողվածով սահմանված դրույքաչափերի տասնապատիկ մեծությունը: Սահմանվում են նաև բնապահպանական հարկերի դրույքաչափերը և բազայի չափաքանակները գերազանցելու դեպքում վճարվող հատուցման չափերը (օրինակ՝ 167-րդ հողվածը, որը վերաբերում է մթնոլորտային օդը աղտոտող վնասակար նյութերի արտանետման համար սահմանված բնապահպանական հարկի դրույքաչափերին):

*Հարկային օրենսգրքը* չի պահանջում բնական պաշարների պատճառված վնասի աստիճանի գիտական գնահատում: Կա ևս երկու կարևոր բացթողում. Նախ, արտանետումների սահմանաչափերի գերազանցված լինելը պարզելուց բացի, անհրաժեշտ չէ պարզել, թե արդյոք խախտվել է օրենքով սահմանված շեմը (օրինակ՝ ըստ ԲՊԴ-ի՝ էական վնաս): Երկրորդ, վնասի գիտական գնահատում կատարելու պահանջ չկա այն ծառայությունների նկատմամբ, որոնք ապահովում է համապատասխան բնական ռեսուրսը:

Օրենսգրքը հիմնականում հիմնվում է այն դրույթի վրա, որ բնական ռեսուրսներին հասցվող վնասը պետք է «հատուցվի» բնօգտագործողների, այլ իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց կողմից: Ամբողջությամբ հակասելով ԲՊԴ-ին՝ օրենսգրքը նպատակ ունի սահմանել հատուցման տեսքով վճարման ենթակա դրամական գումարը՝ վնասը, այլ ոչ թե պատճառված վնասը: Այս մոտեցումը հիմնված է երկու կանխավարկածի վրա: Նախ, բնական ռեսուրսը համարվում է «վնաս կրած» կիրառելի բնօգտագործման վճարների սահմանաչափը գերազանցելուց անմիջապես հետո: Երկրորդ, պատասխանատվությունը խիստ է բնօգտագործողի համար: Սահմանաչափերը գերազանցելու դեպքում վնասը համարվում է պատճառված: Պատասխանատվության ենթարկելու համար չի պահանջվում ներկայացնել բազային չափաքանակները գերազանցող արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի ապացույցներ:

### 3.3.2. Բուսական և կենդանական աշխարհին, ջրային, հողային ռեսուրսներին և մթնոլորտին պատճառված վնասի հատուցումը

Գոյություն ունեն պատասխանատվության անուղղակիորեն առնչվող մի շարք օրենքներ, որոնք վերաբերում են տնտեսական գործունեություն իրականացնող բնօգտագործողների կողմից բնական ռեսուրսներին, մասնավորապես բուսական և կենդանական աշխարհին («Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» 2005 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՕ-88-Ն օրենք), ջրային ռեսուրսներին («Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշում), հողային ռեսուրսներին («Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշում) և մթնոլորտին («Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի

հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշում) պատճառված վնասի հատուցմանը: Վերջին երեք օրենքներում ազդեցության գնահատման հասկացությունը ավելի շատ համապատասխանում է վնասի գնահատման գաղափարին (այսինքն՝ խախտողի կողմից վնասարձան ենթակա վնասների գնահատումը), քան ԵՄ բնապահպանական օրենսդրության մեջ օգտագործվող՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գաղափարին:

«Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշման համաձայն՝ ազդեցությունը սահմանվում է որպես իրավաբանական և ֆիզիկական անձանց գործողությունների և/կամ անգործության, ՀՀ օրենսդրության պահանջների խախտման հետևանքով հողային ռեսուրսների վրա բացասական ներգործություն (հողված 2): Ազդեցության գնահատումը սահմանվում է որպես բացասական ներգործության արժեքային (ՀՀ դրամով) գնահատում և ներառում է վնասակար ներգործության արդյունքում հողային ռեսուրսների նվազման հետևանքով արտադրանքի քանակական և որակական կորուստների փոխհատուցման, վնասակար ներգործության արդյունքում հողային ռեսուրսների վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, ինչպես նաև աղտոտման ազդեցության հետևանքով գյուղատնտեսական և այլ արտադրանքի կորստի փոխհատուցման ծախսերը: Բացասական ներգործությունը սահմանվում է որպես հողային ռեսուրսների մասով բնական միջավայրի աղտոտմանը, բնական պաշարների մարմանը, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխությունը, որի օրինակների ցանկը ներառում է հողն աղտոտող վնասաբեր նյութերի, մանրէների և այլ կենսաբանական նյութերի, մոլախոտերի, բույսերի վնասատուների և հիվանդությունների սահմանային թույլատրելի նորմերի գերազանցում:

Որոշման 3-րդ մասով սահմանվում է, որ ազդեցության գնահատումը պետք է իրականացվի Հայաստանի բնապահպանական օրենսդրության մի շարք խախտումների դեպքում, ներառյալ հողի բերրի շերտի խախտումը, աղտոտումը և աղբոտումը, հողերի աղտոտումը ռադիոակտիվ և քիմիական նյութերով, արտադրական թափոններով, կեղտաջրերով, պեստիցիդներով և հանքային պարարտանյութերի նորմատիվները գերազանցող քանակություններով, թունավորումներ մանրէապարագիտային և կարանտինային օրգանիզմներով, մոլախոտերով և թփերով ծածկումը:

Ազդեցությունը պետք է հաշվարկվի 6-րդ մասում նշված բանաձևերով: Բանաձևերը, որպես կանոն, պարունակում են գործակից, որն արտագոյում է, օրինակ, վնասված հողամասը նախնական տեսքին բերելու համար անհրաժեշտ ծախսերը: Դրանք հաշվարկվում են որպես հետևյալ միջոցառումների կատարման համար ծախսերի հանրագումար՝ վնասված տարածքի մաքրման աշխատանքներ, կորսված կամ խախտված հողի բերրի շերտի վերականգնման աշխատանքներ, հողի վերականգնված շերտը մինչև նախնական (ոչ վնասված) վիճակի բերելու մասով հողի առողջացման միջոցառումներ և անհրաժեշտության դեպքում խախտված (վնասված) շերտի օգտահանման միջոցառումներ: Այսպիսով, վերականգնման աշխատանքների իրականացման համար կանխատեսվող ծախսերը (այսինքն՝ առաջնային վերականգնման աշխատանքները, եթե օգտագործվում է ԲՊԳ-ի լեզուն) ներառվում են վնասի գնահատման մեջ և, այդպիսով, հատուցման ենթակա վնասի մակարդակում: Այնուամենայնիվ, այս որոշումը չի նախատեսում, թե ինչ պետք է տեղի ունենա, եթե հնարավոր չէ հողը վերադարձնել նախքան վնասվելը իր սկզբնական վիճակին:

Կարևոր է նաև նշել, որ որոշման ձևակերպումից պարզ չէ, թե արդյոք խախտողը պարտավոր է վերականգնել բացասական ներգործություն կրած հողային ռեսուրսները: Միգուցե խախտողը պետք է միայն փոխհատուցում վճարի պետությանը, ընդ որում այդ գումարը կարտագոյի վերականգնողական աշխատանքների կատարման գնահատված արժեքը: Այդ դեպքում, ըստ երևույթին, պետության վրա կդրվեր վերականգնողական աշխատանքների ինքնուրույն կատարման պարտավորությունը՝ օգտագործելով խախտողի կողմից փոխհատուցման վճարմամբ իրեն տրամադրված միջոցները: Եթե դա այդպես է, այսինքն՝ եթե այդ միջոցները չեն օգտագործվում պետության կողմից վերականգնման աշխատանքներ իրականացնելու համար, ապա խախտողի կողմից փոխհատուցում վճարելու

վերջնական գործառույթը՝ շրջակա միջավայրը աղտոտելու համար վճարելը, պարզապես պետական եկամուտների ավելացումն է:

*«Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» 2005 թվականի մայիսի 3-ի թիվ ՀՕ-88-Ն օրենքը* սահմանում է բնապահպանական խախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները: Օրենքի 3-րդ հոդվածը վերաբերում է կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների որսին և/կամ ոչնչացմանը: Սակագինը սահմանվում է յուրաքանչյուր առանձնյակի համար, այսինքն՝ յուրաքանչյուր կենդանի զին ունի: Կենդանական աշխարհը դասակարգվում է հետևյալ կերպ՝ տարածաշրջանում անհետացած տեսակներ, անհետացող տեսակներ, անհետացման եզրին գտնվող տեսակներ և խոցելի տեսակներ և տեսակներ, որոնց վերաբերյալ անբավարար տվյալներ կան: Դրանք կոչվում են «Դասակարգումներ» և օգտագործվում են Օրենքի այլ բաժիններում:

5-րդ հոդվածը սահմանում է բնապահպանական իրավախախտումների հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագները՝ մի շարք գործողությունների դեպքում, ներառյալ ծառերի և թփերի հատումը, ոչնչացումը և մինչև աճի դադարեցման աստիճանը վնասումը: Այն սահմանում է սակագներ (ա) արժեքավոր և հազվագյուտ տեսակների համար՝ ըստ ծառի կոճղի տրամագծի (սանտիմետրերով), (բ) այլ տեսակների համար՝ ըստ ծառի կոճղի տրամագծի: Բնության հուշարձանի կարգավիճակ ունեցող ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է սովորական տեսակների համար նախատեսված սակագնի տասնապատիկի չափով: Բնության հատուկ պահպանվող տարածքներում, դենդրոպարկներում և անտառպարկներում ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է սովորական սակագնի հնգապատիկի չափով: Արհեստական անտառներում, բնակավայրերի ընդհանուր օգտագործման վայրերում ծառատեսակների և թփերի ապօրինի հատման կամ ոչնչացման դեպքում վնասի հատուցման չափը հաշվարկվում է Երևան քաղաքում սովորական սակագնի տասնապատիկի չափով, իսկ այլ բնակավայրերում՝ եռապատիկի չափով:

6-րդ հոդվածը սահմանում է նշված բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկման կարգը: Վնասի հատուցման չափը հաշվարկվում է՝ ելնելով բուսական և կենդանական աշխարհի վնասված և/կամ ոչնչացված օբյեկտների քանակից և/կամ ծավալից և սահմանված սակագներին համապատասխան (հոդված 6 (1)): Օրինակ՝ կենդանիների ապրելավայրերի (բնադրավայրերի, ձվադրավայրերի) ոչնչացման յուրաքանչյուր դեպքի համար վնասի հատուցման չափը հաշվարկվում է համապատասխան կենդանատեսակների ապօրինի որսի և/կամ ոչնչացման համար՝ օրենքի 2-րդ գլխով (հոդված 6(2)) սահմանված սակագների եռապատիկի չափով:

Ընդհանուր առմամբ, բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման չափի հաշվարկը կատարում են բնապահպանական պետական տեսուչները (հոդված 7): Հատուցման գումարի պետական բյուջե վճարումը կատարվում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից կազմված արձանագրության հիման վրա (հոդված 8.1): Արձանագրությունն ստանալուց հետո՝ իրավախախտողի կողմից 10-օրյա ժամկետում հատուցման գումարն ինքնակամ չվճարելու դեպքում գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով տեսչական մարմնի ներկայացրած հայցի հիման վրա (հոդված 8(2)):

*«Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 91-Ն որոշման* մեջ հիմնական շեշտը դրվում է օրենսդրության խախտման հետևանքով մարդկանց առողջությանը, բնության և շրջակա միջավայրի այլ օբյեկտներին պատճառված բացասական ներգործության վրա: Ազդեցության գնահատումը (կամ բացասական

ներգործության արժեքային) գնահատումը (<< դրամով) ներառում է աղտոտված միջավայրում ջրային, անտառային և հողային ռեսուրսների նվազման հետևանքով արտադրանքի քանակական ու որակական կորուստների փոխհատուցման, նշված ռեսուրսների վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, աղտոտման հետևանքով հիվանդացած բնակչության առողջության վերականգնման և աշխատանքի արտադրողականության նվազեցման հետևանքով (այսինքն՝ աշխատունակությունը ազդեցություն է կրում) գուտ աշխատանքի կորստի դիմաց փոխհատուցման ծախսերը (հոդված 2): Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումներ (ՄԹԱ) նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ անշարժ և շարժական աղբյուրներից արտանետումներում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի քանակություն: 3-րդ հոդվածի համաձայն՝ ազդեցությունը գնահատվում է մթնոլորտային օդի պահպանության վերաբերյալ << օրենսդրության որոշակի խախտումների, այդ թվում՝ մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները գերազանցելու, առանց լիազորված պետական մարմինների թույլտվության մթնոլորտային օդն աղտոտող նյութերի արտանետման համար: 6-րդ հոդվածով սահմանվում են համապատասխան բանաձևեր:

Վերջապես, «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշումը կապված է Ջրային օրենսգրքի հետ: Որոշմամբ սահմանվում է ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը: Ազդեցության չափը կախված է աղտոտող նյութերի քանակությունից, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակից և դրանց ազդեցության ժամանակահատվածից, ինչպես նաև ջրօգտագործման ծավալներից (հոդված 2): 4-րդ հոդվածի համաձայն՝ ազդեցությունը լինում է 2 տեսակի՝ (i) ուղղակի ազդեցություն, որը պայմանավորված է դեպի ջրային ռեսուրս վնասակար նյութերի անմիջապես արտահոսքով, և (ii) անուղղակի՝ պայմանավորված դեպի ջրային ռեսուրս մաքրման կայանների սարքավորումների խափանմամբ և անարդյունավետ աշխատանքի հետևանքով վնասակար նյութերի արտահոսքով: 5-րդ հոդվածի համաձայն՝ ազդեցության գնահատման հիմքը աղտոտող նյութերի ուղղակի և անուղղակի ներգործությունն է, ինչպես նաև աղտոտող նյութերի քանակությունը, վնասակար նյութերի սահմանային թույլատրելի մակարդակը, ազդեցության ժամանակահատվածը, վնասակար նյութերի ազդեցության և գերնորմատիվային ջրօգտագործման կանխարգելման ծախսերը, ինչպես նաև ջրօգտագործման ծավալները:

6-րդ հոդվածը սահմանում է, որ ազդեցության գնահատումը, որը կատարվում է << դրամով, ներառում է աղտոտված միջավայրում ջրային, անտառային և հողային ռեսուրսների նվազման հետևանքով արտադրանքի քանակական ու որակական կորուստների փոխհատուցման, աղտոտված ջրային ռեսուրսների վերականգնման համար պահանջվող լրացուցիչ ծառայությունների, աղտոտման հետևանքով հիվանդացած բնակչության առողջության վերականգնման և աշխատանքի արտադրողականության նվազեցման հետևանքով (այդ թվում՝ աշխատանքից բացակայության) գուտ աշխատանքի կորստի փոխհատուցման, ինչպես նաև հիմնական ֆոնդերի վրա աղտոտման ազդեցության հետևանքով արդյունաբերական արտադրանքի կորստի փոխհատուցման ծախսերը: Այսպիսով, շրջակա միջավայրի վերականգնման հետ կապված գնահատված ծախսերը ներառվում են հատուցման ենթակա վնասի չափի մեջ:

Որոշմամբ սահմանվում են որոշակի փաստական հանգամանքներ հաշվի առնելու համար նախատեսված բանաձևեր: Օրինակ՝ 7-րդ հոդվածը սահմանում է մի բանաձև, որը պետք է օգտագործվի տնտեսական ազդեցությունը գնահատելու համար, երբ ջրային ռեսուրսների աղտոտվածությունը հանգեցնում է ջրի՝ խմելու կամ տնտեսական ջրամատակարարման համար օգտագործման անհնարինությունը, այլ ջրային աղբյուրների օգտագործմանն անցնելու անհրաժեշտությանը և այլ տեխնիկական միջոցառումների

իրականացմանը, որոնք անհրաժեշտ են բնակչությանը համապատասխան որակի ջրով ապահովելու համար: 8-րդ հոդվածը մանրամասնում է, ջրային օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացվող աղտոտող նյութերի «համազարկային» և «հաստատագրված» արտահոսքերի դեպքում կատարվում է տնտեսական ազդեցության գնահատում: Համազարկային է այն արտահոսքը, երբ վնասակար նյութերը առնվազն 100 անգամ գերազանցում են թույլատրելի սահմանային նորմերը: Մնացած բոլոր դեպքերում արտահոսքը հաստատագրված է: Սահմանված է համազարկային արտահոսքի հաշվարկման բանաձև:

### 3.3.3. Վերականգնողական միջոցառումների վերաբերյալ սահմանափակ վկայակոչում

Բացառությամբ «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշման, որը որոշ չափով ներկայացնում է վերականգնման ծախսերի առանձնահատկությունները, եթե ոչ մի, ապա շատ քիչ մանրամասներ են ներկայացված պատճառված վնասը վերացնելու համար անհրաժեշտ վերականգնման (առաջնային) համապատասխան ձևերի մասին: ՀՀ օրենսդրության մեջ կան միայն անուղղակի հղումներ դրան: Ավելին, բնապահպանական պատասխանատվության մասին ՀՀ օրենքները լրացուցիչ կամ փոխհատուցվող վերականգնման անհրաժեշտություն չեն նախատեսում: Իրականացվելիք վերականգնման միջոցառումների տեսակը կապված է վնասի գնահատման հետ, առնվազն ԲՊԴ-ի համատեքստում, հաշվի առնելով այն, որ գնահատումը, ի վերջո, կօգնի որոշել վնասը վերացնելու համար վերականգնողական աշխատանքների համապատասխան տեսակը: ՀՀ օրենսդրության համաձայն՝ վերականգնողական աշխատանքների վերաբերյալ հղումների բացակայությունը նկատելի է «Ընդերքի մասին» օրենսգրքում, որը նախատեսում է, որ վթարի դեպքում ընդերքօգտագործողը պարտավոր է կարգավորող մարմնին տրամադրել տեղեկատվություն, որն անհրաժեշտ է մարդու առողջության համար հետևանքները նվազեցնելու և բնապահպանական վնասի չափը գնահատելու ու փաստացի կամ հնարավորինս նվազեցնելու համար (հոդված 60.6(7)): Սրանով հաստատվում է, որ հնարավոր չէ օբյեկտը վերադարձնել իր նախավթարային կարգավիճակին, սակայն աղտոտողի վրա այլ պարտավորություն չի դրվում: Կա աղտոտման ծախսերն այլոց վրա դնելու հեռանկար նույնիսկ բօգտագործողի կողմից վերականգնողական աշխատանքներ իրականացելուց հետո: Լրացուցիչ վերականգնումը կարող է արժեքավոր լինել նման դեպքում: Վերականգնման այս երկու նորարարական ձևերի հետ կապված անհրաժեշտությունը պահանջում է վնասի գնահատման տեխնիկայի կիրառումը, որը կոչվում է «Համարժեքության վերլուծություն»: Այս տեխնիկան (կամ համարժեք հասկացությունը) ընդհանրապես հիշատակված չէ Հայաստանում առկա վնասի գնահատման մեթոդոլոգիաներում, ինչը բացահայտում է զգալի բացը ԲՊԴ-ի առաջարկվող փոխադրման համատեքստում: Սա նշանակում է, որ համարժեքության վերլուծությունը չի կարող որևէ դեր խաղալ բնօգտագործողների կողմից ձեռնարկվելիք վերականգնման համապատասխան միջոցառումների որոշման հարցում: Այսպիսով, բնօգտագործողի նկատմամբ շրջակա միջավայրին հասցված վնաս պատճառելու վարչական պատասխանատվությունը չի արտացոլի աղտոտման միջադեպի հետևանքով շրջակա միջավայրի և հասարակության կորուստների իրական մակարդակը: Օրինակ՝ «Ժամանակավոր կորուստները» (այսինքն՝ կորուստներ, որոնք առաջանում են վնասված բնական ռեսուրսների և/կամ ծառայությունների պատճառով, որոնք չեն կարողանում կատարել իրենց էկոլոգիական գործառնությունները կամ ծառայություններ մատուցել այլ բնական ռեսուրսներին կամ հանրությանը մինչև առաջնային կամ լրացուցիչ միջոցների ուժի մեջ մտնելը) հնարավոր չէ փոխհատուցել:



## 4. Առաջարկություններ Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման դրույթների բարելավման վերաբերյալ

### 4.1. Ընդհանուր տեղեկություններ

Այս բաժնում ներկայացված է տասն առաջարկություն Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և գնահատման դրույթների բարելավման վերաբերյալ: Այստեղ ուսումնասիրվում է, թե ինչպես են ընտրված երկրները փոխադրել ԲՊԴ-ի՝ կանխարգելման վրա հիմնված պահանջները, այնուհետև կոնսուլտացիայի, թե ինչպես կարող է կիրառվել ԲՊԴ-ի՝ վնասի գնահատման մոտեցումը Հայաստանի բնապահպանական պատասխանատվության համատեքստում: Հարկ է, ի սկզբանե, նշել, որ Եվրոպական հանձնաժողովի 2021 թվականի՝ «բնապահպանական վնաս» տերմինի ընդհանուր ըմբռնում սպահովելուն միտված ուղեցույցը, որն այժմ պետք է օգտագործվի անդամ պետությունների կողմից, հավանաբար կունենա ԲՊԴ-ի՝ վնասի գնահատման վերաբերյալ պահանջներին համապատասխան միասնական մոտեցում: Սա որոշակիորեն ավելորդ է դարձնում ընտրված երկրներում ընդունված մոտեցումների վերլուծությունը:

### 4.2. Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման դրույթների բարելավում

Այս բաժնում կներկայացվի, թե ինչպես են Բելգիան, Գերմանիան, Նիդերլանդները, Վրաստանը և Մեծ Բրիտանիան իրենց ներքին օրենսդրություններում ներառել ԲՊԴ-ի՝ կանխարգելման վրա հիմնված խնդիրները: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը (ՇՄՆ) խնդրել է հաշվետվության մեջ ընդգրկել եվրոպական երկրները, մինչդեռ հեղինակը ներառել է Վրաստանի օրինակը՝ Արևելյան գործընկերության միակ երկրի, որը, դեռևս օրենքի նախագծման փուլում, ընդունել է առանձին օրենք բնապահպանական պատասխանատվության մասին: Այնուհետ մանրամասն կներկայացվեն շրջակա միջավայրի վրա վնասի կանխարգելման դրույթների բարելավման վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

#### 4.2.1. Առանձին երկրների փոխադրման փորձը

Ուսումնասիրվող երկրներից յուրաքանչյուրը ԲՊԴ-ի՝ կանխարգելմանն ուղղված դրույթներն, այս կամ այլ կերպ է ներառել սեփական օրենսդրության մեջ: Գերմանիան, Վրաստանը և Մեծ Բրիտանիան արել են դա նոր, առանձին օրենքների միջոցով: Բելգիան դա արեց, ըստ էության, տարածաշրջանային մակարդակով՝ կիրարկելով նոր հրամանագրեր և կարգադրություններ և փոփոխելով արդեն իսկ գոյություն ունեցողները: Նիդերլանդները փոփոխել է շրջակա միջավայրի պահպանության մասին իր շրջանակային օրենսդրությունը:

#### Աղյուսակ 2. ԲՊԴ-ի դրույթների փոխադրումը առանձին երկրներում

	Երկիր	Փոխադրվող օրենսդրության բնույթը	Կանխարգելիչ միջոցառում
1	Բելգիա	ԲՊԴ-ն փոխադրվել է հիմնականում տարածաշրջանային մակարդակով (տես ստորև): Այնուամենայնիվ, որոշակի հատուկ	Շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելումը Բելգիայում փոխադրման հիմնական է տարրն է:

	Երկիր	Փոխադրվող օրենսդրության բնույթը	Կանխարգելիչ միջոցառում
		<p>իրավասություններ վերապահված են դաշնային կառավարությանը:</p> <p>Շրջանները փոխադրել են ԲԴԳ-ն հրամանագրերի միջոցով, սակայն ԲԴԳ-ին նման կառուցվածքով:</p> <p>Ֆլանդրիա. փոխադրել է ԲԴԳ-ն 2007 թվականի դեկտեմբերի 21-ի որոշման և 1995 թվականի ապրիլի 5-ի հրամանագրի փոփոխման միջոցով:</p> <p>Վալոնյան շրջան. ինտեգրել է ԲԴԳ-ն 2007թ. նոյեմբերի 22-ի հրամանագրով և շրջակա միջավայրի օրենսգրքի I գրքում փոփոխություններ կատարելու միջոցով:</p> <p>Բրյուսելի մայրաքաղաքային շրջան. փոխադրել է ԲԴԳ-ն 2014 թվականի մայիսի 8-ի որոշման և 1999 թվականի մարտի 25-ի որոշման փոփոխման միջոցով:</p>	<p>Մինչ ԲԴԳ-ի դրույթների փոխադրումը Բեգիայում չկար շրջակա միջավայրին հասցված վնասի համար կիրառելի ընդհանուր վարչական օրենք: Ըստ այդմ, յուրաքանչյուր շրջանում գործում էին կանոնակարգեր, որոնք ընդգրկում էին մակերևութային և ստորերկրյա ջրերին և կենսաբազմազանությանը հասցված վնասի կանխարգելումն ու վերացումը: ԲԴԳ-ի փոխադրմամբ, սակայն, դրանք խստացվել են:</p> <p>Ֆլամանդական և Վալոնյան շրջանները նախատեսում են «անվտանգության» կամ «հարկադրանքի» միջոցներ կիրառելու համար պետության լիազորությունը:</p> <p>Ֆլամանդական շրջանը սահմանում է «անվտանգության» միջոցները որպես ցանկացած անհրաժեշտ գործողություն, որը ձեռնարկվում է մարդկության կամ շրջակա միջավայրի համար զգալի ռիսկը վերացնելու, ընդունելի մակարդակի նվազեցնելու կամ կայունացնելու համար: Սա ներառում է, օրինակ, որոշակի գործողությունների դադարեցում կամ կատարում անմիջապես կամ որոշակի ժամկետում:</p> <p>Անվտանգության միջոցը կգործի այնքան ժամանակ, քանի դեռ ռիսկը չի վերացվել, ընդունելի մակարդակը չի իջեցվել կամ կայունացել:</p> <p>Վալոնյայի օրենսդրությունը նախատեսում է նմանատիպ «հարկադրի» միջոցներ, ներառյալ ցանկացած օգտակար միջոց՝ շրջակա միջավայրին, ներառյալ մարդու առողջությանը սպառնացող վտանգին վերջ դնելու համար:</p>
2	Գերմանիա	ԲԴԳ-ի դրույթները փոխադրվել են <i>Շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և</i>	Competent authority subject to a legal duty to act in certain circumstances

	Երկիր	Փոխադրվող օրենսդրության բնույթը	Կանխարգելիչ միջոցառում
		<p>վերականգնման մասին (<i>Umweltschadensgesetz</i>) 2007թ. մայիսի 10-ի առանձին օրենքով:</p> <p>Փոփոխություններ են կատարվել 2002թ. օգոստոսի 19-ի Դաշնային ջրային օրենքում (<i>Wasserhaushaltsgesetz</i>) և Բնության պահպանության մասին 2002թ. մարտի 25-ի դաշնային օրենքում (<i>Bundesnaturschutzgesetz</i>)</p>	<p>(<i>Ermessensreduzierung auf Null</i>).</p> <p>Իրավասու մարմին, որը պարտավոր է գործել որոշակի հանգամանքներում (<i>Ermessensreduzierung auf Null</i>):</p> <p>Այն ունի ընդհանուր պատասխանատվություն՝ կանխելու անմիջական ռիսկի իրականացումը և ապահովելու հասարակական անվտանգության և հասարակական կարգի պաշտպանությունը:</p> <p>Եթե շրջակա միջավայրի վատթարացումը նման վտանգ է ներկայացնում, ապա մարմինը պետք է գործի: Նման սցենարից դուրս գործելու պարտականություն չկա:</p>
3	Նիդերլանդներ	<p>ԲԳԴ-ն փոխադրվել է Շրջակա միջավայրի կառավարման օրենքի փոփոխությամբ (<i>Wet Milieubeheer, 'Wm'</i>).</p> <p>Նոր հոդված (17.2. «Գործողություն շրջակա միջավայրին հասցված վնասի կամ նման վնասի անմիջական սպառնալիքի դեպքում») է ավելացվել Wm-ի 17-րդ գլխում:</p> <p>17.2 Wm հոդվածը նախատեսում է միջոցառումների ընդհանուր սխեման շրջակա միջավայրին հասցված վնասի կամ շրջակա միջավայրին վերահաս վնասի դեպքում:</p> <p>«Բնապահպանական վնասի ձեռնարկ» (<i>Handreiking milieuschade</i>) է մշակվել 17.2 Wm հոդվածի կիրառման վերաբերյալ, թեև այն չունի իրավական ուժ:</p> <p>Նիդերլանդների կառավարությունը չի փոփոխել բնապահպանական այլ օրենքներ, օրինակ՝ Ջրի մասին օրենքը և Հողի պաշտպանության մասին օրենքը՝ թափանցիկության, հետևողականության, միատեսակության և իրավական հստակության նկատառումներով:</p>	<p>17.2 Wm վերնագրի համաձայն՝ պետությունը սուբսիդիար պատասխանատվության չի կրում:</p> <p>Եթե իրավասու մարմինը ի վիճակի չէ որոշել, թե ով է պատասխանատու, նա պետք է որոշի՝ արդյոք պետք է միջոցներ ձեռնարկել (հոդված 17(14)(2) Wm):</p>
4	Վրաստան	ԲԳԴ-ն փոխադրվել է առանձին օրենքի ընդունմամբ ( <i>Բնապահպանական</i>	Օրենսդրության փոխադրումը հիբրիդ է Վրաստանում

	Երկիր	Փոխադրվող օրենսդրության բնույթը	Կանխարգելիչ միջոցառում
		<p><i>պատասխանատվության մասին Վրաստանի օրենք)</i></p>	<p>բնապահպանական օրենսդրության խախտման հետ կապված ավանդական միջոցների (այսինքն՝ պետությանը դրամական փոխհատուցման/վնասի վճարում) և ԲՊԴ-ի պահանջների (այսինքն՝ շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելում և վերացում) միջև:</p> <p>ԲՊԴ-ում օգտագործվող մի քանի տերմիններ տարբեր կերպ են սահմանվում Վրաստանի օրենսդրության մեջ, մասնավորապես՝ «բնապահպանական վնաս» և «էկոլոգիական էական վնաս»: Սրանք քիչ նմանություն ունեն ԲՊԴ-ի ներքո այս տերմինների սահմանման ձևին:</p> <p>Հոդված 4-ը, որը վերաբերում է շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելմանը, մեծապես համահունչ է կանխարգելմանն ուղղված ԲՊԴ-ում ընդունված մոտեցմանը:</p> <p>Պետությունը գործելու պարտավորություն չի կրում: 4-րդ հոդվածը վերաբերում է էական վնասի կանխարգելմանը/մեղմացմանը: Հոդված 4(6)-ը պնդում է, որ [Բնապահպանական վերահսկողության վարչությունը] իրավունք ունի դիմելու Բնապահպանական ծրագրի հանձնաժողովին՝ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու խնդրանքով: Բնապահպանական ծրագրի հանձնաժողովը միջոցներ է տրամադրում պետական բյուջեի հավին շրջակա միջավայրին հասցված վնասի կանխարգելման միջոցառումները ֆինանսավորելու համար, ինչը ռիսկ է պարունակում, որ այլ ընկերություններ, այլ ոչ աղտոտողը, վնասեն կանխարգելման միջոցառումների ծախսերը:</p>
5	Միացյալ	Քանի որ բնապահպանական խնդիրները Միացյալ Թագավորությունում, ընդհանուր առմամբ, փոխանցվող խնդիր են, Անգլիայի, Ուելսի, Շոտլանդիայի և Հյուսիսային Իռլանդիայի համար	Անցումային (փոխադրվող) օրենսդրությունը ճշգրտորեն

Երկիր	Փոխադրվող օրենսդրության բնույթը	Կանխարգելիչ միջոցառում
Թագավորություն	<p>գործում են փոխադրման տարբեր կանոնակարգեր.</p> <p>Անգլիա. Շրջակա միջավայրին հասցվող վնասի (կանխարգելման և վերականգնման) (Անգլիա) կանոնակարգեր 2015, SI 2015/810, փոփոխված:</p> <p>Ուելս. շրջակա միջավայրին հասցվող վնասի (կանխարգելման և վերականգնման կանոնակարգեր) (Ուելս) կանոնակարգեր 2009, SI 2009/995:</p> <p>Շոտլանդիա. Բնապահպանական պատասխանատվության (Շոտլանդիա) կանոնակարգեր 2009, SSI 2009/266, փոփոխված:</p> <p>Հյուսիսային Իռլանդիա. Բնապահպանական պատասխանատվության (կանխարգելման և վերականգնման) կանոնակարգեր (Հյուսիսային Իռլանդիա) 2009, SI 2009/252, փոփոխված:</p>	<p>համապատասխանում է ԲԳԴ-ի կառուցվածքին և դրանում կիրառվող սահմանումներին, ներառյալ դրանում պարունակվող կանխարգելիչ պարտավորությունների կատարումը:</p> <p>Պետությունը գործելու պարտավորություն չի կրում:</p>

Աղբյուրը՝ Եվրոպական հանձնաժողով և այլք (2014թ) և «Milieu Consulting» (2019թ)

#### 4.2.2. Առաջարկություններ

Հինգ առաջարկություն կներկայացվի՝ ՀՀ օրենսդրության համաձայն շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման դրույթները բարելավելու համար:

##### 4.2.2.1. Առաջարկություն 1. Ներդնել «աղտոտողը վճարում է» սկզբունքը

**«Աղտոտողը վճարում է» սկզբունքը, ինչպես հասկացվում և կիրառվում է ԲԳԴ-ի ներքո, նախ պետք է հստակ և ընդգծված կերպով ամրագրվի Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգում:** Դա կօգնի «հրահրել և ամրապնդել» դոկտրինալ զարգացումները Հայաստանի օրենսդրության մեջ և «խթանել իրավական փոփոխությունները» (Մքոթֆորդ 2017թ, էջ 4): Ներկայումս, երկրի օրենքներում այս սկզբունքի անուղղակի նշաններ կան՝ ամրագրված ԲԳԴ-ով (այսինքն՝ Անտառային օրենսգրքի 60-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ խախտման համար մեղավոր կողմը պարտավորվում է վերացնել խախտումները): Այնուամենայնիվ, սկզբունքը պետք է կիրառվի օրենսդրության մեջ և, անհրաժեշտության դեպքում նաև դատարանների կողմից՝ հարգելով սկզբունքի նպատակները և քաղաքական դրդապատճառները, եթե կարիք կա ճիշտ ուղերձ հասցնելու բնօգտագործողներին և հասարակությանը: Վնասի գնահատման անուղղակի մեթոդի կիրառման մոտեցումը (այն է՝ դրամական փոխհատուցման կամ վնասների գնահատման չափը, որը պետք է վճարել պետությանը կիրառվող օրենքի խախտման դեպքում), որն այժմ կիրառվում է ՀՀ կառավարության կողմից, գրեթե չի բավարարում ԲԳԴ-ում արտահայտված «աղտոտողը վճարում է» սկզբունքի պահանջները: Ինչպես ամրագրված է ԲԳԴ-ում, սկզբունքի կիրառումը նշանակում է, որ շրջակա միջավայրին վնաս պատճառող կամ նման վնասի անմիջական վտանգ ստեղծող կողմը սկզբունքորեն պետք է կրի անհրաժեշտ կանխարգելիչ կամ ուղղիչ միջոցառումների պատասխանատվություն՝ ի լրումն այլ հարակից

վարչական ծախսերի, օրինակ՝ շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման արժեքը: Այն նպատակ չունի պատժելու վնաս հասցնող կամ վերահաս վտանգ ստեղծող կողմին, օրինակ՝ տույժի կիրառում և/կամ պետությանը փոխհատուցում վճարելու պահանջ: Ընդհակառակը, Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգը հիմնված է բնօգտագործողների կողմից բնական ռեսուրսների ապօրինի օգտագործման կամ դրանց վրա անբարենպաստ ազդեցություն ունենալու համար պետությանը փոխհատուցում վճարելու անհրաժեշտության վրա: Բնապահպանական պատասխանատվության օրենքներում բացակայում է ընդհանուր պահանջը ա) կանխարգելիչ գործողություններ ձեռնարկել շրջակա միջավայրին հասցված վնասից խուսափելու կամ պատճառված վնասի չխորացումն ապահովելու համար և/կամ բ) իրականացնել վերականգնողական միջոցառումներ, որոնք պետք է ձեռնարկվեն բնօգտագործողի կողմից՝ շրջակա միջավայրը վերադարձնելու մինչ վնասաբեր գործողությունները եղած վիճակին: Հետևաբար, ԲՊԴ-ով ամրագրված սկզբունքի պահանջների (կանխարգելում և վերականգնում) և Հայաստանում կիրառվող մոտեցման գերակայող շեշտադրման (հատուցել հասցված վնասը պետությանը) միջև որոշակի տարբերություն կա:

Այսպիսով, սկզբունքի գերագույն նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է զգալի շեղում իրավական մշակույթից՝ հաշվի առնելով Հայաստանի կենտրոնացումը փոխհատուցման վճարների անհրաժեշտության վրա: Աղտոտողի մասնավոր միջոցների բնական ռեսուրսներին հասցվող վնասը կանխելու և վերացնելու գործում սկզբունքի կարևոր դերը պետք է հստակորեն ձևակերպվի օրենքով: Սկզբունքի այս հայեցակարգը Հայաստանի օրենսդրության մեջ փոխադրելը չի խանգարի բնապահպանական պատասխանատվության մասին օրենքներին, օրինակ, հանցագործներին պատժելուն կամ նկատողություն տրամադրելուն: Մրանք պարզապես չպետք է կիրառվեն «աղտոտողը վճարում է» սկզբունքի քողի տակ:

#### *4.2.2.2. Առաջարկություն 2. «Աղտոտողը վճարում է» սկզբունքի առավել ամբողջական կիրառում*

**Հայաստանյան բնապահպանական պատասխանատվության օրենքներում «աղտոտողը վճարում է սկզբունքին» պատշաճ հղում անելուց հետո հաջորդ քայլը կլինի վերջինիս ամբողջական կիրառման ապահովումը՝ երաշխավորելով, որ բնօգտագործողները պատասխանատվություն կրեն բնական ռեսուրսների ողջ սպեկտրին հասցված վնասը կանխելու և (վերականգնելու) համար:** Երբ աղտոտողից չի պահանջվում հոգալ իր գործունեության արդյունքում առաջացած բնապահպանական ծախսերը, դրանք չպետք է արտացոլվեն նրա արտադրության ծախսերում: Դա ոչ միայն կանտեսի նրանց դերը՝ որշելու որքան արտադրել և ինչ գնով վաճառել, այլև բացասական արտաքին ազդեցությունները կարող են փոխանցվել տեղական համայնքներին, շրջակա միջավայրին և ավելի լայն հասարակության շերտերին: Սկզբունքն, ինչպես ի սկզբանե ստեղծվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ)-ի կողմից 1970-ականներին և տարածում գտել 1980-ականներին, ձգտում է շտկել շուկայի այս ճախողումը՝ աղտոտողներին ստիպելով ներառել այդ ծախսերն իրենց ապրանքների և ծառայությունների արժեքներում:

Սկզբունքի հստակ և ընդգծված կերպով իրականացման և, իր հերթին, Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգի արդյունավետ գործունեության գրավականը կլինի շրջակա միջավայրին հասցված վնասի (կամ դրա համարժեք, օրինակ՝ շրջակա միջավայրի վնասում) հստակ և իրավաբանորեն հաստատուն սահմանումը: ՀՀ օրենսդրության համաձայն՝ անճշտություն և անհամապատասխանություն կա այն հարցում, թե ինչպես է ընկալվում շրջակա միջավայրի վնասը: Պատասխանատվության մասին օրենքների համաձայն վնասի մասին հիշատակումները, որպես կանոն, վերաբերում են բնական ռեսուրսների օգտագործման սահմանաչափերը գերազանցած կամ բնական

ռեսուրսների վրա բացասական ազդեցություն պատճառած անձանց՝ պետությանը փոխհատուցելու անհրաժեշտությանը: Իրավական շեմի գաղափարը, որից այն կողմ շրջակա միջավայրին հասցված վնասն՝ իրավական խիստ իմաստով, համարվում է պատճառված (այսինքն՝ էական), ըստ էության չի առանձնանում զգալիության որևէ աստիճանով, որ սահմանված կլինեք բնապահպանական պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող օրենքներով: Դրա բացակայությունը խրթինացնում է շրջակա միջավայրին հասցված վնասի աստիճանի հիմնավոր գնահատումը: Քրեական օրենսգիրքը ներառում է սահմանային պայմանների լայն շրջանակ, որոնք թելադրում են, թե երբ կարող են կիրառվել քրեական պատժամիջոցներ: Այնուամենայնիվ, չկա ուղեցույց, թե ինչպես կարելի է օբյեկտիվորեն և գիտականորեն գնահատել, թե արդյոք այդ շեմին հասել են հստակ իրադարձությունից կամ միջադեպից հետո: Սա ընդլայնում է օրենսգրքով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու կամայականության իրական հեռանկարը:

Թեև ՀՀ օրենքներում որոշակիորեն հիշատակվում է բնական ռեսուրսներին հասցված վնասի մասին, չկա որևէ էական հղում մեկ բնական ռեսուրսի կողմից մատուցվող ծառայությունների արդյունքում մեկ այլ բնական ռեսուրսին (կամ բնական ռեսուրսներին) կամ հանրային շահին հասցված վնասի մասին: Հիշեցնենք, որ ԲԳԴ-ի համաձայն՝ «բնական ռեսուրս» նշանակում է պահպանվող տեսակներ և բնական միջավայրեր, ջուր և հող (հողված 2(12)): Համաձայն ԲԳԴ-ի՝ «ծառայություններ» և «բնական ռեսուրսների ծառայություններ» ասելով՝ հասկանում ենք այն գործառույթները, որոնք իրականացվում են բնական ռեսուրսի կողմից՝ հօգուտ մեկ այլ բնական ռեսուրսի կամ հանրությանը (հողված 2(13)): Էկոհամակարգերին և այլ էկոլոգիական ռեսուրսներին մատուցվող ծառայությունները ներառում են սննդի, ապաստանի և վերարտադրության համար նախատեսված բնական միջավայրերը, օրգանական ածխածնի և սննդանյութերի փոխանցումը սննդային ցանցի միջոցով, կենսաբազմազանությունն և գենոֆոնդի պահպանումը, սննդային ցանցն ու համայնքային կառուցվածքը (Chapman and LeJeune, 2007):

ՀՀ կառավարությունը կարող է ցանկանալ իրականացնել հետևյալ փոփոխությունները:

1. Առավել ամբողջականորեն սահմանել «շրջակա միջավայրին հասցվող վնասը»՝ ավելի հետևողականորեն հղում կատարելով այդ սահմանմանը բնապահպանական պատասխանատվության մասին իր օրենքների համապատասխան դրույթներում:
2. Տրամադրել ուղեցույց վնասի շեմի վերաբերյալ, որն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան բնօգտագործողը պատասխանատվություն կրի կանխարգելման և/կամ վերականգնման ծախսերի համար (օրինակ՝ վնասի «զգալիության» հատուկ չափորոշիչները):
3. «Շրջակա միջավայրին հասցվող վնաս» սահմանման մեջ ներառել բնական ռեսուրսների կողմից այլ բնական ռեսուրսների և հանրության համար մատուցվող ծառայությունների վնասը: Վերջինիս բացակայության դեպքում խնդիրներ կառաջանան բնօգտագործողի կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի մակարդակի գնահատման և, ի վերջո, նրա կողմից պատճառված վնասի վերականգնման համապատասխան մակարդակի գնահատման ժամանակ. աղտոտողը չի վճարի պատճառված վնասի ողջ չափը վերականգնելու համար:

Շրջակա միջավայրին հասցվող վնաս հասկացությունը հստակ և ակնառու կերպով բացատրվում է ԲԳԴ-ում: Թեև սահմանումն անվիճելի չէ, սակայն, եթե այն դիտարկենք 2021թ.-ին Եվրոպական հանձնաժողովի կողմից շրջակա միջավայրին հասցված վնասի<sup>5</sup> նշանակության վերաբերյալ տրամադրված ուղեցույցին զուգահեռ, կարող է օգտակար մոդել

<sup>5</sup> Եվրոպական հանձնաժողով, «Եվրոպական հանձնաժողովի 2004/35/EC դիրեկտիվի և Խորհրդի 2-րդ հոդվածում և Խորհրդի՝ «շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխարգելման և վերականգնման վերաբերյալ բնապահպանական պատասխանատվության մասին» 2-րդ հոդվածում սահմանվող «Շրջակա միջավայրին հասցվող վնաս» տերմինի ընդհանուր ըմբռնումն ապահովող ուղեցույցեր [2021] C118/1 [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:52021XC0407\(01\)](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:52021XC0407(01))

ծառայել Հայաստանի կառավարության համար: Շրջակա միջավայրի հասցվող վնասի սահմանումը մշակելիս կարևոր է հիշել, որ ԲՊԴ-ն չի վերաբերում այն վնասներին, որոնք չեն հասնում անհրաժեշտ լրջության աստիճանին, այսինքն՝ «էական» չեն կամ չեն վերաբերում համապատասխան հիմնական հասկացություններին: Նման հանգամանքներում «շրջակա միջավայրին հասցված վնաս» չկա, համենայն դեպս, այդպես է դիտարկվում ԲՊԴ համատեքստում: Պատասխանատվությանն ուղղակիորեն վերաբերող ՀՀ օրենքները, սակայն, կարող են ապահովել այս բացը լրացնող գործառույթը, եթե կան համապատասխան և կիրառելի օրենքներ հստակ միջադեպի հետ կապված:

«Շրջակա միջավայրին հասցված վնաս» (կամ դրան համարժեք) արտահայտության սահմանումը ուղղակիորեն կազդի ծախսերի ներառման աստիճանի վրա, որը հնարավոր է Հայաստանի բնապահպանական պատասխանատվության նոր կանոնակարգի ներքո: Նախ, երբ սահմանումը կարող է ձեռնարկություններին պարտադրել ծախսերը, որոնք կապված են ազդեցությունների ավելի ամբողջական շրջանակի հետ, որ նրանք կարող էին առաջացնել կամ նպաստել դրանց առաջացմանը, ապա այն կարող է ստեղծել ավելի ուժեղ ազդակներ՝ առաջին հերթին դրանց առաջացումից խուսափելու համար, համեմատած այն սահմանման հետ, որն ավելի նեղ և ավելի քիչ ներառական է: Սա համընկնում է այն սկզբունքի հետ, որ պետք է ձեռնարկվեն կանխարգելիչ գործողություններ, ինչն առաջնահերթություն է թե՛ ԲՊԴ, և թե՛ ԵՄ բնապահպանական օրենսդրության ավելի լայն շրջանակում: Կանխարգելման առավել բարենպաստ միջոցների վերաբերյալ որոշումը, պետք է կայացնի ձեռնարկությունը: Տնտեսական խթանները չեն կարող պարտադրել վարքագծի փոփոխություններ:

Ծախսերի ներառման այս օգուտը «բնապահպանական վնաս» հասկացությանը կարևոր դեր է տալիս շրջակա միջավայրի պահպանության գործում: Խրախուսող ներուժը, որը կապված է բնապահպանական վնասի կանխարգելման (կամ վերացման) հետ կապված ծախսերի համար պատասխանատվություն կրելու հետ, կամ բացասական ձևակերպումով դրա կանխարգելիչ ազդեցությունը, բխում է այն փաստից, որ «պոտենցիալ աղտոտողները, ովքեր գիտեն, որ իրենք պատասխանատվություն են կրելու այդ ծախսերի համար. իրենց պատճառած վնասը վերականգնելու համար ուժեղ մղում ունեն խուսափելու նման վնաս պատճառելուց» (Եվրոպական հանձնաժողով, 1993, էջ 5): Հաշվի առնելով այդ ազդեցությունները վերացնելու հետ կապված ծախսերը, ձեռնարկությունների համար տնտեսապես ռացիոնալ է բարձրացնել գործունեությունը ձեռնարկելու համար ցուցաբերվող խնամքի մակարդակը և/կամ նվազեցնել գործունեության ծավալը (Bergkamp, 2001): Այնուամենայնիվ, եթե Հայաստանի օրենսդրության համաձայն «բնապահպանական վնասը» պետք է սահմանվեր նեղ, ապա խրախուսման գործառույթը թուլանում է: Սա կհանգեցնեք սկզբունքի թույլ և թերի իրագործմանը:

Երկրորդ, «բնապահպանական վնասի» մեկնաբանությունը կազդի բնօգտագործողի արտադրության ծախսերի վրա: Այդ արտահայտության կարողությունը նպաստելու բազմաթիվ բնապահպանական ծախսերի ներառումը, որը կարող է ձեռնարկությունը կատարել, կնշանակի, որ նրանց ապրանքների կամ ծառայությունների ծախսերն ավելի ուժեղ կարտացոլեն իրենց արտադրության իրական արժեքը հասարակության համար (Brugge, 2009): Արտահայտության նեղ ձևակերպումը թույլ կտա ձեռնարկությանը իր գործունեության հետ կապված որոշ ծախսեր այլ նպատակով ուղղել՝ ստեղծելով կեղծ գնային ազդանշաններ սպառողների համար: Այն դեպքում, երբ սպառողներն օգտվում են շուկայական գներից, որոնք չեն արտացոլում հասարակության համար ապրանքների արտադրության կամ ծառայությունների մատուցման իրական արժեքը, ապա ավելի մեծ պահանջարկ կլինի այն ձեռնարկությունների կողմից արտադրված կամ տրամադրվող ապրանքների համար, որոնց գործունեությունը սուբսիդավորվել է հասարակության կողմից (de Sadeleer, 2002): Արտահայտության սահմանումը կօգնի շտկել այս շուկայի ձախողումը, ապահովելով գնային ավելի ճշգրիտ ազդանշան սպառողների համար, ովքեր, ենթադրաբար, կնախընտրեն ավելի մատչելի (և մաքուր) այլընտրանքներ: Արժեքի ներդաշնակեցումը, հետևաբար, կարող է առիթ դառնալ, որպեսզի աղտոտողները շուկայից դուրս մնան: Սա, իր հերթին, կհեշտացնի



կանխարգելման ավելի անուղղակի ձևը, քանի որ այս աղտոտողներն այլևս չեն կարողանա աղտոտել:

*4.2.2.3. Առաջարկություն 3. Յրված աղտոտմանն առնչվող պատճառահետևանքային կապի հերքելի կանխավարկած*

**Հայաստանի օրենքները պետք է կարողանան լուծել ցրված աղտոտման պատասխանատվության հարցը և պետք է ներառեն պատճառահետևանքային կապի հերքելի կանխավարկածը, որը ստեղծվել է Եվրոպական Միության Արդարադատության դատարանի (ԵՄԱԴ) կողմից:** Յրված աղտոտումը ենթադրում է «աղտոտումը համատարած գործունեությունից, առանց որևէ առանձին աղբյուրի, օրինակ. թթվային անձրև» (Եվրոպական բնապահպանական գործակալություն, առանց ամսաթվի): Յրված արտանետումները կարող են առաջանալ տարբեր աղբյուրներից, ներառյալ ճանապարհային տրանսպորտը, գյուղատնտեսությունը և փոքր բիզնեսը: Թեև առանձին ցրված աղբյուրներից աղտոտումը կարող է առանձնահատուկ մտահոգություն չառաջացնել որոշակի մակարդակում, դրանք միասնաբար զգալի ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա:

ԲԳԴ-ն վերաբերում է միայն ցրված աղտոտման հետևանքով առաջացած վնասներին, որտեղ հնարավոր է պատճառահետևանքային կապ հաստատել վնասի և առանձին շահագործողների գործունեության միջև: Այսպիսով, պարզ լինելու համար, որպես ընդհանուր սկզբունք, ԲԳԴ-ն կիրառելի է ցրված բնույթի աղտոտման համար, սակայն միայն այնտեղ, որտեղ կարող է հաստատվել պատճառահետևանքային կապ: ԵՄԱԴ-ում (C-379/08 Raffinerie Mediterranee (ERG) SpA v Ministry dello Sviluppo Economico [2010] 3 CMLR 9) գոյություն ունի կարևոր նախադեպային իրավունք, որը նախատեսում է պատճառահետևանքային կապի հերքելի կանխավարկած, որը կրթարձագնի իրավասու մարմինների կարողությունները հաստատել այդ կապը նման աղտոտման դեպքերում (կետ 70): Իր հերթին, դա ոչ միայն կօգնի սպահովելու, որ վերականգնումը կարող է ֆինանսավորվել պատասխանատուների մասնավոր ծախսերով, այլ նաև ավելի ուժեղ տնտեսական խթան ստեղծել՝ նվազագույնի հասցնելու առաջին հերթին այդ տեսակի վնասի հավանականությունը: Դա կարող է տեղի ունենալ, օրինակ, վնաս հասցնող կողմի ներդրումների միջոցով համապատասխան կանխարգելիչ միջոցառումներում, ներառյալ անձնակազմի վերապատրաստումը, օրինակ, արտահոսքի զսպման և աղտոտման նվազեցման տեխնոլոգիայի մեջ ներդրումների միջոցով:

Raffinerie-ի գործով ԵՄԱԴ-ն առաջարկել է աղտոտողներին նույնականացնելու ուղեցույց: Թեև ԲԳԴ-ն կիրառվում է աշխատանքային գործունեության հետևանքով առաջացած բնապահպանական վնասների նկատմամբ (հոդված 3), այն չի նշում, թե որքանով պետք է հաստատվեր պատճառահետևանքային կապը. այն ձևը, որով պետք է մեկնաբանվեր այդ չափանիշը, պատկանում է անդամ պետությունների իրավասությանը (կետ 55): «աղտոտողը վճարում է» սկզբունքի համաձայն, վնաս հասցնող կողմի վրա դրվել է շտկման միջոցներ ձեռնարկելու պարտավորություն՝ կապված աղտոտման առաջացման գործում նրանց ունեցած ներդրման հետ (կետ 57): Դատարանը պնդել է, որ ԲԳԴ-ն չի խոչընդոտում ազգային օրենսդրությանը, որը թույլ է տալիս Հրահանգի շրջանակներում գործող իրավասու մարմնին, «գործել այն ենթադրության հիման վրա, որ կա պատճառահետևանքային կապ վնաս հասցնող կողմի և աղտոտման միջև, հիմնված այն փաստի վրա, որ վնաս հասցնողների կայանքները գտնվում են աղտոտված տարածքի մոտ» (կետ 70):

Եթե նման կապի հնարավորություն ենթադրվի, իրավասու մարմինը պետք է ունենա խելամիտ ապացույցներ, որոնք կարող են հիմնավորել իր ենթադրությունը, օրինակ՝ այն փաստը, որ վնաս հասցնողի տեղակայումը գտնվում է հայտնաբերված աղտոտմանը մոտ, և որ առկա է փոխկապակցվածություն հայտնաբերված աղտոտիչների և վնաս հասցնողի կողմից իր գործունեության հետ կապված օգտագործվող նյութերի միջև (կետ 57):

Եթե իրավասու մարմինն ունի նման ապացույց, ապա այն կարող է հաստատել անհրաժեշտ պատճառահետևանքային կապը շահագործողների գործունեության և (ցրված) աղտոտման միջև (կետ 58): Շահագործողները կարող են փորձել հերքել այն ենթադրությունը, որ իրենց գործունեությունը վնաս է պատճառել համապատասխան ապացույցներ ներկայացնելու միջոցով (կետ 58): Դա դժվար կլինի վնասին մոտ լինելու և աղտոտիչների հարաբերակցության առկայության դեպքում:

*4.2.2.4. Առաջարկություն 4 անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու իրավական պատասխանատվություն*

**Ռեն բնապահպանական պատասխանատվության ուղղակիորեն վերաբերող օրենքներում առկա են հղումներ բնօգտագործողների կողմից վնասները կամ, ավելի հաճախ, օրենքի խախտումները (որ, ի վերջո, կարող են հանգեցնել վնասի) կանխելու, իրենց հաշվին միջոցներ ձեռնարկելու իրավական պարտականությունը պետք է դառնան դրանց առավել ակնառու բաղադրիչը:**

Սա կարող է մոդելավորվել ԲՊԴ-ի 5(1) հոդվածով: Վերջինս սահմանում է, որ եթե շրջակա միջավայրին վնաս դեռ չի հասցվել, բայց առկա է դրա առաջացման անմիջական վտանգ, շահագործողը պետք է անհապաղ ձեռնարկի անհրաժեշտ կանխարգելիչ միջոցները (հոդված 5(1)): Համարվում է, որ գոյություն ունի «վնասի անմիջական վտանգ», երբ կա «բավարար հավանականություն, որ մոտ ապագայում շրջակա միջավայրին վնաս կհասցվի» (հոդված 2(9)): Կանխարգելիչ միջոցառումները ենթադրում են «ցանկացած միջոց, որը ձեռնարկվում է ի պատասխան մի դեպքի, գործողության կամ անգործության, որը ստեղծել է շրջակա միջավայրի վնասի անմիջական վտանգ՝ այդ վնասը կանխելու կամ նվազագույնի հասցնելու նպատակով» (հոդված 2(1)): Անկախ նրանից, թե Հայաստանը կրնորի ԲՊԴ-ի իրականացումը նոր, ինքնուրույն օրենքի միջոցով (ինչպես արեցին Գերմանիան, Վրաստանը և Մեծ Բրիտանիան), թե վերանայելով բնապահպանական պատասխանատվության մասին գոյություն ունեցող իր օրենքները (ինչպես արեց Նիդերլանդները), անհապաղ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունն առանցքային է: Այսպես, Բելգիայի շրջանները առաջնահերթություն են տվել կանխարգելիչ միջոցառումներին իրենց համապատասխան օրենքներում, որոնք արտացոլում են ԲՊԴ-ն: Սա ինտեգրման խելամիտ ռազմավարություն կլինի Հայաստանի համար:

ԲՊԴ-ի համաձայն՝ իրավասու մարմինը չունի հայեցողական լիազորություն՝ որոշելու, թե արդյոք շահագործողը պետք է իրականացնի կանխարգելիչ միջոցառումները: Հայաստանում նմանատիպ մոտեցում կարող է կիրառվել, որտեղ կարգավորող մարմինը պարտավոր է բնօգտագործողից պահանջել իր հաշվին իրականացնել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումները: Հայաստանը կարող է նաև դիտարկել, ցանկանում է արդյոք ստանձնել սուբսիդիար պատասխանատվությունները, եթե բնօգտագործողը չկատարի դրանք: Սա կնվազեցնի լիովին կանխարգելիչ բնապահպանական վթարի առաջացման հեռանկարը: Գերմանիան տարբերվում էր Ադուսակ 2-ում ներկայացված մյուս երկրներից: Այն պետությանը պարտադրում էր գործել այնպես, որ կանխի վերահաս ռիսկի իրականացումը և ապահովի հասարակական անվտանգության ու կարգի պաշտպանությունը: Սա շատ արժեքավոր որոշում է: Այնուամենայնիվ, գործելու պարտականությունը, հավանաբար, կհանգեցնի պետության համար զգալի ֆինանսական բեռի: Ինչպես քննարկվում է ստորև, օպտիմալ լուծումը կարող է լինել ռեսուրսներ օգտագործողների կողմից ֆինանսական երաշխիքների ապահովումը կանխարգելիչ (և ուղղիչ) միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում: Արդյունավետ իրականացման դեպքում այն կբացառի պետության կողմից բնօգտագործողների կանխարգելիչ միջոցառումների կատարումը ֆինանսավորելու անհրաժեշտությունը՝ ի տարբերություն «աղտոտողը վճարում է» սկզբունքին: ԲՊԴ-ի համաձայն, եթե շահագործողը չի կատարում աշխատանքները, ապա

իրավասու մարմինը «կարող է» ինքը ձեռնարկել այդ միջոցները (հոդված 5(5)): Սա կլինի լավագույն տարբերակը, եթե կիրառվի ֆինանսական անվտանգության պարտադիր կարգ:

Հայաստանի կառավարությունը կարող է դիտարկել բնօգտագործողների համար պահանջի կիրարկումը՝ գեկուցելու դեպքերի մասին, երբ ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների արդյունքում վնասի անմիջական վտանգը վերանում է: Այնուամենայնիվ, սա ավելին կլինի, քան պահանջվում է ԲՊԴ-ով, որը նման պարտավորություն չի ենթադրում: Այն նախատեսում է, որ եթե շրջակա միջավայրին հասցված վնասի անմիջական վտանգը չի վերացվում՝ չնայած ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումներին, շահագործողները պետք է իրավասու մարմնին տեղեկացնեն «իրավիճակի բոլոր համապատասխան կողմերի մասին՝ հնարավորինս արագ» (հոդված 5(2)): Սրա հետ մեկտեղ, իրավասու մարմնին իրավունք ունի ցանկացած պահի «պահանջել օպերատորից տրամադրել տեղեկատվություն շրջակա միջավայրին հասցված ցանկացած անմիջական սպառնալիքի կամ նման անմիջական սպառնալիքի կասկածի դեպքերում» (հոդված 5(3)(ա)): Հայաստանը պետք է ներառի նման պահանջը, քանի որ այն կարող է ընդգծել բնօգտագործողների կողմից կիրառվող բացասական փորձը: Սա, իր հերթին, կհանգեցնի կարգավորողի կողմից կարգավորվող մարմնի խիստ մշտադիտարկման ավելի բարձր ռիսկի:

#### 4.2.2.5. Առաջարկություն 5. Միջոցներ ձեռնարկելու պահանջ

**Հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) և այլ շահագրգիռ կողմերի համար համապատասխան բնապահպանական կարգավորող մարմնին գործողություններ ձեռնարկելու պահանջ ներկայացնելու բացահայտ իրավունքի ներդրումը կարող է խելամիտ ռազմավարություն լինել:** ԲՊԴ-ի համաձայն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք՝ ում վրա ազդել է, կամ հավանական է, որ ազդի շրջակա միջավայրին հասցված վնասը, ովքեր բավարար շահագրգռվածություն ունեն վնասի հետ կապված բնապահպանական որոշումների կայացման մեջ, կամ ովքեր հայտարարություն են արել իրավունքի խախտման մասին, իրավունք ունեն իրավասու մարմնին ներկայացնել ցանկացած դիտարկում՝ կապված շրջակա միջավայրին հասցված վնասի անմիջական սպառնալիքի դեպքերի հետ, որոնց մասին իրենք տեղյակ են և իրավասու են խնդրել իրավասու մարմնին՝ գործողություններ ձեռնարկել ԲՊԴ-ի համաձայն (հոդված 12(1)): Հայաստանի օրենսդրությամբ նման լիազորություն չկա: Հայաստանի օրենսդրության 12-րդ հոդվածին ամենամոտ դրույթը «Մթնոլորտային օդի պաշտպանության մասին» օրենքով ՀԿ-ների՝ մթնոլորտային օդի պաշտպանությանը մասնակցելու անորոշ ձևակերպմամբ իրավունքն է (հոդված 20(4)): Մինչդեռ Ջրային օրենսգրքի համաձայն՝ հասարակական կազմակերպությունները և քաղաքացիները կարող են մասնակցել ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի հետ կապված հարցերի քննարկմանը և առաջարկություններ ներկայացնել (հոդված 106):

#### 4.3. Հայաստանում շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման բարելավման վերաբերյալ առաջարկություններ

Այս բաժնում կներկայացվեն մի շարք առաջարկություններ, թե ինչպես կարող է բարելավվել Հայաստանում շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատումը: Հիշեցնենք, որ այժմյան մոտեցման մեջ կային երեք հիմնական, փոխկապակցված սահմանափակումներ

1. Նախ, Հայաստանում վնասների գնահատման գոյություն ունեցող մեթոդաբանություններն ուղղված են դրամական ցուցանիշի (այսինքն՝ վնասների) սահմանմանը, որը պետք է վնասի բնօգտագործողների կողմից, ովքեր գերազանցել են բնական ռեսուրսների օգտագործման սահմանները կամ բացասական ազդեցություն են ունեցել բնական ռեսուրսների վրա՝ փոխանակ շրջակա միջավայրին հասցված վնասի իրական աստիճանի սահմանման:

2. Երկրորդ, և համապատասխանաբար, դրանք, որպես կանոն, հիմնված են հավասարումների/քանաձևերի և սակագների վրա՝ ի տարբերություն չափելի տվյալների վրա հիմնված տեխնիկական, գիտական գնահատման:
3. Երրորդ, իրավական որոշակիության բացակայություն կա վերականգնման պահանջների վերաբերյալ: Բացառությամբ պետությանը վճարման ենթակա փոխհատուցման չափը հաշվարկելու նպատակով ծախսերի վերականգնման ընթացակարգերի, որը նախատեսված է ռեսուրսներին «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2003 թվականի օգոստոսի 14-ի թիվ 1110-Ն որոշմամբ և «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» 2005 թվականի հունվարի 25-ի թիվ 92 որոշմամբ, գրեթե մանրամասներ ներկայացված չեն առաջնային վերականգնման համապատասխան ձևերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են պատճառված վնասը վերացնելու համար: Ավելին, ՀՀ օրենսդրությունը չի առնչվում լրացուցիչ կամ փոխհատուցման վերականգնման անհրաժեշտությանը, օրենսդրական շրջանակի երկու կարևոր և, իսկապես, նորարարական հայեցակետերին, որոնք նույնպես իրականացվում են ԲՊԴ-ի կողմից:

Այս սահմանափակումների արդյունքում բնօգտագործողի նկատմամբ շրջակա միջավայրին հասցված վնաս պատճառելու համար վարչական պատասխանատվությունը շատ քիչ հավանական է, որ արտացոլի շրջակա միջավայրին և հասարակությանը հասցված վնասի իրական մակարդակը: Այսպիսով, խոչընդոտվում է «աղտոտողը վճարում է» սկզբունքի իրականացումը:

#### 4.3.2. Առաջարկություն 6. Շրջակա միջավայրին հասցվող վնասի գնահատման գիտական մոտեցում

**Պետք է կիրառվի շրջակա միջավայրին հասցված վնասի գնահատման գիտական մոտեցում և կիրարկող օրենսդրության հետ մեկտեղ գործող ուղեցույց փաստաթուղթ, որը կապահովի անհրաժեշտ տեխնիկական մանրամասներ՝ առաջատար փորձին համապատասխան արդյունավետ գնահատումներ իրականացնելու համար:**

ԲՊԴ-ի համաձայն՝ վնասի զգալիությունը գնահատելու պարտականությունը դրվում է իրավասու մարմնի վրա (հոդված 11(2)): Մակայն, իրավասու մարմինները կարող է համապատասխան շահագործողից պահանջել (i) կատարել վնասի իր գնահատումը և (ii) նրան տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և տվյալներ (հոդված 11(2)): Թեև համապատասխան իրավասու մարմնին է թողնվում շրջակա միջավայրին հասցված վնասի զգալիության վերջնական որոշումը ԲՊԴ-ի Հավելված I-ը ներկայացնում է ուղեցույց պահպանվող տեսակներին և բնական կենսամիջավայրերին հասցվող վնասների գնահատման վերաբերյալ (բայց ոչ ջրային և հողային ռեսուրսներին հասցված վնասը):

Շրջակա միջավայրին հասցվող վնասի արդյունավետ գնահատման հիմքում ընկած է չափելիությունը: ԲՊԴ-ի Հոդված 2(2)-ի համաձայն՝ «վնաս» նշանակում է «բնական ռեսուրսի չափելի անբարենպաստ փոփոխություն կամ բնական ռեսուրսների հետ կապված ծառայունների որակի չափելի վատթարացում, որը կարող է առաջանալ ուղղակիորեն կամ անուղղակիորեն»: Այսպիսով, վնասը կարող է առաջանալ միայն այն դեպքում, երբ վիճակի անբարենպաստ փոփոխությունը և/կամ վատթարացումը չափելի են: Պետք է հնարավոր լինի կատարել վնասի քանակական գնահատում կամ հաշվում, ինչպես նաև համեմատել վիճակը նախքան վնասի առաջացումը դրա առաջացումից հետո եղած վիճակի հետ: Մինչև վնասի առաջացումը իրավիճակը պարզելու համար կարևոր նշանակություն ունի սկզբնական վիճակի գնահատումը: Ըստ ԲՊԴ-ի Հոդված 2(14)-ի՝ «սկզբնական (եղակետային) վիճակ» նշանակում է «բնական ռեսուրսներին և ծառայություններին վնաս պատճառելու պահին այն վիճակը, որը

կլիներ, եթե շրջակա միջավայրին վնաս չպատճառվեր»։ Թեև, որոշ դեպքերում, վնասի առաջացումից հետո երակետային վիճակը պարզելը կարող է դժվար լինել, այնուամենայնիվ, այն կարելի է հաշվել՝ թեթևացնելու իրավասու մարմինների համար ապացուցելու բեռը։ Հայաստանը, հնարավոր է, ցանկանա դիտարկել «երակետային վիճակի» համարժեք հասկացության կիրառման հնարավորությունը։

Բնապահպանական վնասի գնահատման առավել արդյունավետ համակարգ ստեղծելու առաջին քայլը օրենսդրության մեջ «բնապահպանական վնաս» հասկացության հստակ սահմանումն է, ընդ որում ԲՊԴ-ի 2(1) հոդվածը հարմար մոդել է, որի վրա կարելի է հիմնվել։ Հենց որ սահմանումը լինի, դրա հիման վրա հնարավոր կլինի ավելի ճշգրիտ և հիմնավորված գնահատել պատճառված վնասի կամ դրա վտանգի մակարդակը։ Հաջորդ քայլը պետք է պատրաստել ուղեցույց փաստաթուղթ վնասի շեմերի վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են համապատասխան բնօգտագործողին ստիպելու պատասխանատվության կրել կանխարգելման և/կամ վերականգնման ծախսերի համար (օրինակ՝ վնասի «նշանակությունը» որոշող հատուկ գործոններ և համապատասխան բազային հասկացություններ), և ինչպես գնահատել այն։ Եվրոպական հանձնաժողովի կողմից տրամադրված 2021 թվականի ուղեցույցը շրջակա միջավայրին հասցված վնասի նշանակության վերաբերյալ (ինչպես վերը նշված է 2-րդ Առաջարկության համատեքստում) կարող է օգտակար մոդել ծառայել Հայաստանի կառավարության համար։ Երրորդ քայլը կարող է լինել պետական ծառայողների և մասնավոր հատվածի վերապատրաստմանն օժանդակումը, թե ինչպես գործնականում կիրառել այս ուղեցույցը վնասի գնահատումն իրականացնելիս։ Եվրոպական հանձնաժողովը մշակել է ԲՊԴ-ի վերաբերյալ ուսումնական նյութեր, ներառյալ ուղեցույց, շահագործողների, իրավասու մարմինների և այլ շահագրգիռ կողմերի համար<sup>6</sup>։ Դա վերաբերում է վնասի գնահատմանը և կարող է օգտակար լինել Հայաստանի համար։ Լավագույն փորձը կարող է փոխառվել նաև ԵՄ և Մեծ Բրիտանիայի իրավասու մարմիններից։

#### 4.3.3. Առաջարկություն 7. Առաջնային, լրացուցիչ և/կամ փոխհատուցման վերականգնողական աշխատանքների՝ կախված հանգամանքներից, և համարժեքության վերլուծության օգտագործման պահանջ

**Հայաստանի կառավարությունը կարող է ցանկանալ վերանայել իր օրենքները, որպեսզի հստակ հղում կատարվի շրջակա միջավայրին հասցրած բնօգտագործողների կողմից վերականգնման առաջնային, լրացուցիչ և/կամ փոխհատուցման միջոցների իրականացման անհրաժեշտությանը։ Սա հնարավորություն կտա կիրառել համարժեքության վերլուծություն։** Սույն առաջարկությունն ուղղակիորեն կապված է վնասի գնահատման ԲՊԴ-ի ոճով մոտեցման հետևանքների հետ, քանի որ ձեռնարկվելիք վերականգնման միջոցի տեսակը կներկայացվի գնահատման արդյունքներով։ Վերականգնման երեք տեսակները, որոնք նախատեսում է ԲՊԴ-ն, չեն կիրառվում Հայաստանի բնապահպանական պատասխանատվության մասին գործող օրենքներով։ Հայաստանի բնապահպանական օրենքները անուղղակիորեն վերաբերում են բնօգտագործողների կողմից վերականգնողական միջոցառումներ ձեռնարկելուն կամ, ավելի հստակ, համապատասխան օրենքի խախտումը վերացնելու անհրաժեշտությանը։ Սա կարող է հավասարվել ԲՊԴ հղմանն այն մասին, որ շահագործողները պետք է ձեռնարկեն առաջնային վերականգնում շրջակա միջավայրին հասցված վնասի դեպքում։ Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի համաձայն՝ առաջնային վերականգնումը ջրի կամ պահպանվող տեսակների կամ բնական միջավայրերի վնասի վերականգնումն է, որն ապահովվում է շրջակա միջավայրի երակետային վիճակը վերականգնելու միջոցով։ Սա ներառում է գործողություններ՝ ուղղակիորեն վերականգնելու բնական ռեսուրսները և ծառայությունները արագացված

<sup>6</sup> Տե՛ս, օրինակ՝ «Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվ. Ուսումնական ձեռնարկ (2013թ. փետրվար) <<https://circabc.europa.eu/ui/group/3b48eff1-b955-423f-9086-0d85ad1c5879/library/a1f191ef-6ddf-491e-947d-b32bea4ad15a/details?download=true>>

ժամկետում կամ բնական վերականգնման միջոցով: Առաջնային վերականգնում ձեռնարկելու անհրաժեշտությունը պետք է ապահովվի Բնապահպանական պատասխանատվության մասին դիրեկտիվի դրույթները փոխադրող ցանկացած օրենքով:

ԲԴԴ-ի համաձայն՝ լրացուցիչ վերականգնողական միջոցներ են իրականացվում, երբ վնասված բնական ռեսուրսները և/կամ ծառայությունները չեն վերադառնում ելակետային վիճակի (այսինքն՝ առաջնային վերականգնումը չի «աշխատել»): Վերականգնողական միջոցի այս տեսակի նպատակն է, որն, ի դեպ, կարող է տեղի ունենալ այլընտրանքային տեղանքում, ապահովել բնական ռեսուրսների և/կամ ծառայությունների այնպիսի մակարդակ, ինչպիսին կմատուցվեր, եթե վնասված տեղանքը վերադարձվեր իր սկզբնական վիճակին: Հնարավորության և նպատակահարմարության դեպքում այլընտրանքային տեղանքը պետք է աշխարհագրորեն կապված լինի վնասված տեղանքի հետ: ԲԴԴ-ն նաև նախատեսում է փոխհատուցման վերականգնում: Սա վերաբերում է բնական ռեսուրսների և/կամ ծառայությունների միջանկյալ կորուստների փոխհատուցմանն ուղղված գործողություններին, որոնք ի հայտ են գալիս վնասի առաջացման օրվանից մինչև առաջնային վերականգնման ավարտը: «Միջանկյալ կորուստներ» տերմինը վերաբերում է այն կորուստներին, որոնք առաջանում են այն փաստից, որ վնասված բնական ռեսուրսները և/կամ ծառայություններն ի վիճակի չեն կատարել իրենց էկոլոգիական գործառույթները կամ ծառայություններ մատուցել այլ բնական ռեսուրսներին կամ հանրությանը, քանի դեռ առաջնային կամ լրացուցիչ միջոցները արդյունք չեն տվել: Հասկանալի լինելու համար, փոխհատուցման վերականգնումը բաղկացած է պահպանվող բնական միջավայրերի և տեսակների կամ ջրի լրացուցիչ բարելավումներից կամ վնասված տեղանքում, կամ այլընտրանքային տեղամասում, այլ ոչ թե ֆինանսական փոխհատուցում է ենթադրում հանրության անդամներին:

Ներկայումս Հայաստանի բնապահպանական պատասխանատվության մասին օրենքներում ոչ մի բացահայտ հղում չկա վերականգնման ոչ լրացուցիչ, ոչ էլ փոխհատուցման միջոցներին: Սա էական բացթողում է, քանի որ այն զգալիորեն թուլացնում է կառավարության կողմից «աղտոտողը վճարում է» սկզբունքը լիարժեք և արդյունավետ իրականացնելու կարողությունը:

Վերականգնման առաջնային, լրացուցիչ և փոխհատուցման միջոցառումների շրջանակը չի կիրառվում հողատարածքի վնասների վրա: Հողատարածքին հասցված վնասի վերականգնումը պետք է ներառի միջոցներ, որոնք անհրաժեշտ են նվազագույնը ապահովելու այն, որ համապատասխան աղտոտիչները հեռացվեն, վերահսկվեն, զսպվեն կամ նվազեցվեն, որպեսզի աղտոտված հողը, հաշվի առնելով դրա ներկայիս օգտագործումը կամ թույլատրված հետագա օգտագործումը տվյալ աղտոտման պահին, այլևս չպարունակի իր մեջ տվյալ պահին մարդու առողջության վրա բացասաբար ազդելու որևէ էական վտանգ: Չկա պահանջ, որ հողը վերադարձվի ելակետային վիճակին՝ «ավելի խիստ ստանդարտ» (Ֆոզլմեն 2015թ., էջ 9): Նման ռիսկերի առկայությունը պետք է գնահատվի ռիսկերի գնահատման ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով հողի բնութագիրը և գործառույթը, վնասակար նյութերի, պատրաստուկների, օրգանիզմների կամ միկրոօրգանիզմների տեսակը և կոնցենտրացիան, դրանց ռիսկերը և տարածման հավանականությունը: Բնական վերականգնման տարբերակը (այսինքն, որտեղ չկա ուղղակի մարդկային միջամտություն) կարող է ընդունելի համարվել:

Քանի որ առաջնային, լրացուցիչ և փոխհատուցման միջոցառումների շրջանակը չի տարածվում հողատարածքի վնասների դեպքերի վրա, ապա ժամանակավոր կորուստները չպետք է հաշվի առնվեն հողատարածքի վնասը վերացնելու համար ամենահարմար միջոցներն ընտրելիս: Այսպիսով, շահագործողն ազատվում է պատավորություններից ժամանակավոր կորուստների համար, երբ նրա գործողությունները միայն հողատարածքին են վնաս պատճառել (որը պահպանվող կենսամիջավայր չէ և կարգավորվում է ԲԴԴ-ով):

Հայաստանի բնապահպանական պատասխանատվության կանոնակարգում լրացուցիչ և փոխհատուցման միջոցների կիրառման դեպքում հնարավորություն կստեղծվի օգտագործել

համարժեքության վերլուծություն: Համարժեքության վերլուծությունն օգտագործվում է իրավասու մարմինների կողմից՝ որոշելու (1) վնասի հետևանքով ժամանակի ընթացքում կորսված բնական ռեսուրսների և ծառայությունների տեսակը և քանակը և (2) այդ կորուստը փոխհատուցելու համար անհրաժեշտ լրացուցիչ և փոխհատուցման միջոցների տեսակը և չափը:

Գոյություն ունի համարժեքության վերլուծության երեք հիմնական մեթոդ՝ ծառայություն՝ ծառայության դիմաց, ռեսուրս՝ ռեսուրսի դիմաց և արժեքի համարժեքություն: Նախքան դրանք ուսումնասիրելը ներկայացնենք ստորև նշված հիմնական ընդհանուր տերմինները.

- **Գերետ.** շրջակա միջավայրին հասցված վնասի հետևանքով կրած վնասի քանակի արտահայտություն. կարող է լինել բազմաչափ, քանի որ վնասը կարող է բացասական ազդեցություն ունենալ մի շարք տեսակների, կենսամիջավայրերի, էկոհամակարգերի գործառույթների և մարդկային արժեքների վրա:
- **Կրեդիտ.** բնական ռեսուրսի կամ ծառայության օգուտի արտահայտություն, որը ձեռք է բերվել լրացուցիչ և փոխհատուցվող վերականգնման միջոցով:
- **Ցուցանիշ(ներ).** կորստի մեկ կամ մի քանի չափումներ, որոնք ծառայում են որպես բնական ռեսուրսների կամ վնասի ենթակա ծառայությունների ցուցանիշներ: Նույն չափանիշը պետք է օգտագործվի դերետը և կրեդիտը արտահայտելու համար:
- **Որոշակի ծավալով արժեթղթերի և ապրանքների առևտրի մեթոդ.** գործընթաց, որի միջոցով կրեդիտը հավասարեցվում է դերետին, երբ քանակականացվում է նույն ցուցանիշի առումով: Այն բաղկացած է երեք քայլից. (1) ընդհանուր դերետի քանակականացում, (2) վերականգնման միավորի համար ակնկալվող կրեդիտի քանակականացում (օրինակ՝ վերականգնվող հողի մեկ հեկտարի համար անելավայրերի ծառայությունների բարելավում), և (3) ընդհանուր դերետի բաժանումը միավորի կրեդիտի վրա՝ որոշելու կրեդիտների ընդհանուր գումարը (այսինքն՝ վերականգնում), որն անհրաժեշտ է կորուստը փոխհատուցելու համար («Լիփթոն և այլք», 2018թ.):
- **Չեղչում.** այս գործընթացը ապահովում է այն փաստը, որ դերետները և կրեդիտները տեղի են ունենում ժամանակի տարբեր հատվածներում: Ապագայում իրականացվող վերականգնման արդյունքում ստացված ծառայությունները պակաս արժեքավոր են հանրության համար, քան այսօր հասանելի ծառայությունները («Chapman and LeJeune», 2007թ.): Այսօր հասանելի ծառայությունները կարող են օգտագործվել հետագա օգուտներ առաջացնելու համար, որոնցից կիրառարվեին, եթե այդ ծառայությունները հասանելի չլինեին նաև հետագա տարիներին: Չեղչումը, զեղչային դրույքաչափի կիրառման միջոցով, թույլ է տալիս դերետները և կրեդիտները համեմատել հավասար հիմունքներով, այսինքն՝ դրանց ներկայիս արժեքով:

### *Ծառայություն՝ ծառայության դիմաց*

Այս մեթոդը, որը նաև հայտնի է որպես Բնական միջավայրի համարժեքության վերլուծություն, արտահայտում է կորուստներն ըստ բնական միջավայրի և փոխհատուցվում է նմանատիպ բնական միջավայրի վերականգնման միջոցով: Այն ենթադրում է, որ համարժեք բնական միջավայրը տրամադրում է համարժեք ծառայություններ, և այդ պատճառով կորցրած ծառայությունների տարիները կարող են փոխհատուցվել հավելյալ բնական միջավայրի տրամադրմամբ: Չափանիշը, որն օգտագործում է այս մեթոդը, սովորաբար «Չեղչված-ծառայություն-ակր-տարի»-ն է: Սա ներկայացնում է էկոհամակարգային բոլոր ծառայությունների արժեքը, որոնք տրամադրվում են մեկ ակր բնական միջավայրը մեկ տարվա ընթացքում: Հաշվարկվելուց հետո ընտրվում են վերականգնողական միջոցառումներ, որոնք

համարժեք կերպով կփոխհատուցեն այս «Չեղջված-ծառայություն-ակր-տարի»-ները՝ վերականգնված բնական միջավայրի ակրերի տեսքով:

### *Ռեսուրս` ռեսուրսի դիմաց*

Այս մեթոդը, որը նաև հայտնի է որպես Ռեսուրսների համարժեքության վերլուծություն, արտահայտում է կորուստները ռեսուրսների միավորներով (օրինակ՝ ձկների կամ թռչունների քանակով): Դրա նպատակն է շրջակա միջավայրին հասցված վնասի հետևանքով կորցրած ռեսուրսները նորերին համապատասխանեցնելը: Այն պահանջում է շրջակա միջավայրի վնասից հետո կորցրած օրգանիզմների հատկորոշում, որոնք ձեռք են բերվում վերականգնման միջոցով:

### *Արժեքի համարժեքություն*

Այս կատեգորիային պատկանող մեթոդները ենթադրում են, որ բնական ռեսուրսներին և նրանց մատուցած ծառայություններին հասցված վնասը կարող է չափվել դրամական արտահայտությամբ և փոխհատուցվել ֆիզիկական ռեսուրսների և ծառայությունների մատուցման առումով («Lipton et al», 2018թ.): Արժեք-ձախս հարաբերակցության տարբերակը ապահովում է դեբետների և կրեդիտների համարժեքությունը՝ ենթադրելով, որ վերականգնման ձախսերը հավասար են ընդհանուր դեբետին: Ի տարբերություն վերը նշվածին, արժեք-արժեք տարբերակն ապահովում է համարժեքությունը՝ ենթադրելով, որ վերականգնման պահանջվող մակարդակը հիմնված է առաջարկվող վերականգնման ծրագրից ստացված/տրամադրված արժեքի ավելացման, այլ ոչ թե վնասի արժեքի վրա: Այսպիսով, և՛ դեբետները, և՛ կրեդիտները չափվում են դրամական արտահայտությամբ: Թեև փոխհատուցումը կարող է չափվել դրամական արտահայտությամբ, ԲՊԳ-ի համաձայն՝ փոխհատուցումը կարող է տրամադրվել միայն ռեսուրսների վրա հիմնված միավորներով, այլ ոչ թե դրամով:

Արժեքի համարժեքության մեջ դրամական արժեքները հիմնված են ծառայության ռեսուրսների որակի և/կամ քանակի փոփոխությունների նկատմամբ անհատների նախասիրությունների վրա: Սա կարող է չափվել երկու եղանակով.

ա անհատների պատրաստակամությունը վճարել գումար՝ շրջակա միջավայրի կորուստից խուսափելու կամ շահույթ ապահովելու համար, կամ

բ անհատների պատրաստակամությունն ընդունելու գումարը որպես փոխհատուցում՝ շրջակա միջավայրի կորուստը հանդուրժելու կամ շահույթից հրաժարվելու համար:

Մինչդեռ բնապահպանական արժեքները, որոնք կախված են մարդկանց կողմից շրջակա միջավայրի իրական օգտագործումից, կոչվում են օգտագործման արժեքներ, այն դեպքում, երբ դրանք բխում են մարդկանց գոհունակությունից՝ իմանալով, որ շրջակա միջավայրի ռեսուրսները պահպանվում են, նույնիսկ եթե դրանք ուղղակիորեն չեն օգտագործվում կամ չեն փոխադրում իրենց հետ, նշվում են որպես չօգտագործման կամ գոյության արժեքներ: Օգտագործման և ոչ օգտագործման արժեքների կրճատումները և շահույթները կներառվեն շրջակա միջավայրին հասցված վնասի հետ կապված դեբետային և վարկային գնահատականներում («Chapman and LeJeune», 2018թ.): Քանի որ այս տեսակի արժեքները հաճախ չեն գնահատվում շուկայում, ապա ի հայտ է եկել երկու լայնորեն տարածված մեթոդ, որոնք կարող են օգտագործվել համարժեքության վերլուծության համար համապատասխան դրամական արժեքներ որոշելու համար.

**ա Բացահայտված նախապատվության մեթոդներ.** օգտագործում են շուկաներում մարդկանց իրական վարքագծի մասին տեղեկատվություններ, որոնք կապված են գնահատվող ռեսուրսների կամ ծառայությունների հետ՝ արժեքը գնահատելու համար: Առկա է երկու հիմնական մեթոդ.



- **Ճամփորդական ծախս.** օգտագործվում է, թե որքան մարդիկ են պատրաստ վճարել ճանապարհորդելու համար էկոհամակարգ կամ հանգստի վայր այցելելու համար շուկայական գնի համեմատության մեջ:
- **Հեղունիկ վերլուծություն.** օգտագործվում է տնտեսական արժեքներ բնապահպանական ծառայությունների համար, որոնք ուղղակիորեն ազդում են շուկայական գների վրա, օրինակ՝ երբ մնացած բոլոր գործոնները հավասար են՝ տների գների տարբերությունը այն տան միջև, որը գտնվում է աղտոտված վայրում և այն տան միջև, որը չի գտնվում աղտոտված վայրում սահմանում է արժեքի կորստի այն գինը, որը առաջացել է աղտոտվածությունից: Այնուհետև այս ցուցանիշը կարող է օգտագործվել որպես արժեք, որը պետք է ստեղծի վերականգնման աշխատանքները՝ հասարակությանը փոխհատուցելու աղտոտվածության համար:

**բ նշված նախապատվության մեթոդներ.** օգտագործեք հարցաթերթիկներ՝ պարզելու հարցվողների «Պատրաստակամությունը վճարել գումար» տարբերակի բնապահպանական ակտիվի տրամադրման/պահպանման համար կամ «Պատրաստակամությունն ընդունելու գումարը որպես փոխհատուցում» տարբերակի բնապահպանական ակտիվի կորստի համար: Ոչ շուկայական ռեսուրսների գնահատման երկու հիմնական մեթոդ.

- **Պայմանական գնահատման մեթոդ.** անհատներն ուղղակիորեն հարցաքննվում են, թե ինչպես են նրանք գնահատում բնապահպանական հստակ վնասի կանխարգելումը և առաջարկվող վերականգնման ծրագրերի իրականացումը:
- **Համատեղ վերլուծություն.** անհատներին հարց է տրվում, թե ինչպես են նրանք գնահատում բնապահպանական կոնկրետ վնասի կանխարգելումը և առաջարկվող վերականգնման ծրագրերի իրականացումը, սակայն ավելի շատ ընտրություն է տրվել, քան Պայմանական գնահատման մեթոդի կիրառման դեպքում:

